# ՈՍԿԵՓՈՐԻԿ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ



1992

Ս. Ս. ՄԱՅԻԼԵԱՆ

# ՈՍԿԵՓՈՐԻԿ

**կամ**

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

## ՄԱՍՆ Ա

*Պատրաստեց՝ Սերժ Մայիլյանը*

1992

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս գրքոյկն ամփոփում է 1991 թ.-ին «Լուսաւորիչ» թերթում լոյս տեսած «Ոսկեփորիկ» յոդվածաշարը: «Ոսկեփորիկը» աւանդական հարց ու պատասխանների ձեւով ներկայացնում է Քրիստոնէական վարդապետութիւնը, Հայ եկեղեցու դաւանութիւնը, Աստուածաշունչը եւ զանազան յարակից այլ հարցեր: Հարցերը խմաբաւորուած են ըստ բաժինների. Ծիսական արարողութիւններ, Հայ եկեղեցու տօներ, Աստուածաբանութիւն, Ջատագովութիւն եւ այլն: Բաժիններում ընդգրկուած հարցերի պատասխանները հիմանականում արտայայտում են մեր եկեղեցու հայրերի, վարդապետների ուսուցիչների կարծիքներն ու տեսակէտները, անհրաժեշտութեան դէպքում բերւում են նաեւ այլ եկեղեցիներում ընդունուած կարծիքները: Շարունակելով «Լուսավորչի» Ընդունած ուղղագրութիւնը, գրքոյկում նույպես պահպանուել է դասական ուղղագրութիւնը:

Քրիստոնէական վարդապետութեան եւ կրօնի հեղինակն ու հիմքը մեր Տէր Յիսուս քրիստոսն է, որը հաստատեց Իր եկեղեցին այս աշխարհում: Այդ եկեղեցու մի ճիւղն է կազմում նաեւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին: Ուստի, մենք, որպէս Հայ եկեղեցու հաւատարիմ զաւակներ, պարտաւոր ենք լաւ իմանալ եւ ճանաչել մեր եկեղեցին, նրա պատմութիւնը, Դաւանութիւնը: Ինչպէս որ սխալ բժշկագիտութիւնը կարող է սպանել մարդկանց, այնպէս էլ ամէն մի շեղում Քրիստոնեական վարդապետութիւնից կարող է սպանել մեր հոգիները: Ուստի ճանաչենք նաեւ «գառան մորթի հագած գայլերին», որոնք այսօր վխտում են Հայաստանում, եւ որոնց նպատակն է ցրել եկեղեցու հօտը, յափշտակել ոչխարներին:

Յոյս ունենք, որ այս նոր մատենաշարը, կօգնի մեզ գտնելու յուզող շատ հարցերի պատասխաններ:

*Հեղինակ*

# ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՕՆԵՐ

***Հարց.*** - Ինչո՞ւ ենք խաչակնքում ամէն ժամանակ եւ ի՞նչ է նշանակում խաչակնքելը:

***Պատասխան.*** - Խաչակնքում ենք հետեւեալ ձեւով. ասում ենք՝ յանուն Հօր (աջ ձեռքի երեք մատները միասին տանում դէպի ճակատը), եւ Որդւոյ (ձեռքը իջեցնում ենք ներքեւ) եւ Հոգւոյն (ձեռքը տանում ենք դէպի ձախ կողմը) Սրբոյ (ձեռքը տանում ենք դէպի աջ կողմը), Ամէն (ձեռքը բացած մատներով դնում ենք սրտի վրայ): Այդպէս են խաչակնքում նաեւ Հռոմէական (Կաթոլիկ) եկեղեցում: Խաչակնքելը նշանակում է.

- Վահան ընդդէմ սատանայական ներգործութիւնների:
- Յիշում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի փրկարար Մահը Խաչի վրայ՝ մարդկութեան ազատագրման համար:
- Խնդրում ենք Աստծոյ օգնութիւնը եւ ողորմութիւնը:
- Մենք այլեւս գոյութիւն չունենք աշխարհի չար զօրութիւնների համար (խաչուած ենք) եւ կենդանի ենք միայն Յիսուսի համար:
- Չարն այլեւս զօրութիւն չունի, քանի որ Յիսուս խաչուեց մեզ համար եւ Խաչի արիւնով մենք փրկուեցինք. խաչակնքուելով մենք հաստատում ենք մեզ Խաչի տակ, ուր մեռաւ մեր Տէրը: Այսինքն՝ ես ուր էլ գնամ, ինչ էլ անեմ, իմ տեղն այնտեղ է, ուր մեռաւ Յիսուսը՝ Գողգոթայի Խաչի տակ:
- Ցանկանում եմ, որ այսուհետեւ իմ վրայ տպուի, արտապատկերուի Յիսուսը՝ այն էլ Խաչը ելած (Տե՛ս Ա Կորնթ., Բ, 2):
- Ցականում եմ, որ այսուհետեւ ինձ նայելիս տեսնեն միայն մի բան՝ Խաչեալ Յիսուսին:
- Երբ ձեռքը տանում ենք դէպի վեր՝ ուզում ենք ասել, որ մեր միտքը, էութիւնը գամուեց Խաչի վրայ, եւ թող այսուհետև Քրիստոսի միտքը գրաւի մեզ:

- Երբ ձեռքը տանում ենք դէպի ներքեւ՝ ուզում ենք ասել, որ այլեւս մեր մարմինը չէ, որ պիտի թելադրի մեզ՝ նա մեռաւ Խաչի վրայ, այլ թող Քրիստոս թելադրի իր կամքը մեզ:

- Ձախ եւ աջ տանելով՝ ուզում ենք ասել, որ ձեռքերը դարձեալ խաչուեցին Խաչի վրայ, որոնք չար գործելու համար արդէն անպիտան են, եւ պիտի միայն բարին գործեն:

- Ձեռքը բացուած տանելով դէպի սիրտը եւ ասելով «Ամէն», հաստատում ենք եւ համաձայնւում այդ ամենին («Ամէն» - նշանակում է «ճիշտ է», «ես համաձայն եմ»): Այս առումով շատ գեղեցիկ շարական է գրել Շնորհալին (Տե՛ս նրա «Տարածեալը»):

- Մեղքն առաջ եկաւ եդեմական պարտէզում այսպէս (Տե՛ս Ծննդոց, գլուխ Գ)՝ Ադամը տեսաւ կնոջ արածը (միտքը), որը ցանկացել էր արգելուած պտուղին (մարմինը) եւ ձեռքով վերցրել ու կերել (ձեռքերը): Խաչի վրայ դատապարտուեց այդ ամէնը՝ մեղքն իր ծագումից սկսած: Խաչակնքուելիս խորհրդաւորաբար վերապրում ենք այս ամէնը, նոյնը չկրկնելու իմաստով: Խաչին է գամւում մեր էութիւնը (երբ ձեռքը տանում ենք դէպի վեր), մարմինը (երբ ձեռքն իջեցնում ենք ներքեւ), ձեռքերը եւ սիրտը: Այսինքն՝ խաչակնքուելը նշանակում է մեր հին էութեան դատապարտում եւ նոր էութեան ծնունդ կամ Ադամի մահ եւ Քրիստոսի ծնունդ, հին մարդու վերջ եւ Նոր մարդու սկիզբ: Նախնի եկեղեցում (Առաքելական շրջանում) տարածուած էր մի շատ ծանօթ երգ, որն ամբողջութեամբ պահպանուած է Պօղոսի մօտ (Եփես., Ե, 14).

*«Արթնացի՛ր, դու որ քնած ես եւ կանգնի՛ր մեռելներից ու Քրիստոս քեզ լոյս կտայ»:*

Քնածն այստեղ Ադամն է, որ մեռաւ: Աւանդութիւնը Քրիստոսի խաչուելու տեղը (Գողգոթայում) նոյնացնում է Ադամի գերեզմանի հետ: Դրա համար էլ հնում Խաչի տակ նկարում էին գանգ (Ադամի): Այսպիսով խաչակնքուելիս մենք փաստում ենք, որ մեռանք որպէս Ադամ եւ կանգնեցինք՝ որպէս Քրիստոս:

Մի դիտողութիւն եւս. հայերէնում բառն ինքնին ճիշտ է արտայայտում իմաստը՝ խաչ եւ կնքել, խաչի կնիքը դնել մեզ վրայ, այն է աւետարանական ամբողջ ճշմարտութեամբ կնքուել: Իսկ կնքուողը պատկանում է միայն կնքողին՝ Աստծուն:

Եւ վերջապէս, ձեւի մասին. խաչ հանելիս երեք մատներն միացնում ենք իրար, որը խորհրդանշում է Ս. Երրորդութիւնը, անբաժան եւ միասնական: Միւս երկու մատները (ճկոյթն ու մատանեմատը) միասին սեղմում ենք ափին, որը խորհրդանշում է Քրիստոսի մէջ երկու բնութեան անբաժանելի միութիւնը, Քրիստոս որպէս Մարդ եւ Աստուած, եւ այդ երկուսը որպէս մէկ (մատները սեղմուած են իրար):

***Հարց.*** - Ի՞նչ է Տնօրհնէքը:

***Պատասխան.*** - Սովորութիւնը սկիզբ է առնում Առաքելական դարից, երբ առաքեալները եւ հոգեւորականները շրջում էին տները և աւետում Յիսուսի Ծնունդն ու Յարութիւնը: Այս սովորութեան համաձայն էլ քահանաները շրջում են տները՝ քարոզելով եւ Աւետարան ընթերցելով:

***Հարց.*** - Ի՞նչ է աղօրհնէքը եւ Մատաղը:

***Պատասխան.*** - Ըստ Շնորհալու, այս կարգը մտցրել է Լուսաւորիչ Հայրապետը, որը մեզ յիշեցնում է Առաքելական շրջանի սիրոյ ճաշերը (Թուղթ Ընդհանրական, 1871, էջ 261-264): Ամէն կերակուր Աստծոյ անէծքի համաձայն (Ծննդոց գլ. 3) անմաքուր է: Ուստի ուտելուց առաջ պէտք է աղօթք անել՝ որ մաքրուի, անէծքը վերանայ: Իսկ եթէ ուզում ենք կերակրել ուրիշներին՝ աղքատներին, ապա օրհնել ենք տալիս աղը, որն այնուհետեւ ուտեցնելով անասունին՝ մաքրում է նրան, եւ մորթելով բաժանւում է աղքատներին: Այս է Մատաղը, որը շատ յաճախ տգէտ մարդկանց կողմից նոյնացւում է Մեղքի պատարագի հետ՝ եկեղեցին քննադատելու համար, որն այդպէս չէ: Որոշ տեղեր մատաղացու ոչխարի մսից հարիսա են եփում եւ յաջորդ օրը, Պատարագից յետոյ, օրհնելով բաժանում ներկաներին: Մայր Մաշտոցում նկարագրուած է մատաղի օրհնութեան կարգը, ուր ընթերցւում է Ղուկասի Աւետարանից (գլուխ ԺԴ, 12-14).

«Երբ ճաշ կամ ընթրիք ես անում, մի կանչիր բարեկամներիդ, եղբայրներիդ, ազգականներիդ եւ ոչ էլ հարուստ ծանօթներիդ... այլ կանչիր աղքատներին ու խեղանդամներին, կոյրերին ու կաղերին եւ երանելի կլինես»:

***Հարց.*** - Ի՞նչ է նշանակում Շարական:

***Պատասխան.*** - Հոգեւոր երգերը, որ երգում են Աստուածապաշտութեան ժամանակ, կոչւում են շարականներ: Դեռ 5-րդ դարում Սահակ Պարթեւն ու Մեսրոպ Մաշտոցը գրի առան հոգեւոր երգերը եւ մի մասն էլ իրենք գրեցին: Մինչեւ 14-րդ դար այդ երգերը աւելացուեցին եւ այդ ժամանակ Եկեղեցին ամփոփեց այդ երգերը մի գրքում, որ կոչուեց Շարակնոց (բառը կազմուած է «շար, շարել» արմատից, «ական» ածանցով):

***Հարց.*** - Քանի՞ մասի է բաժանւում Շարականը:

***Պատասխան.*** - Չորս: Տէրունական այսինքն՝ Քրիստոսին նուիրուած, Սրբոց (սուրբերին նուիրուած), Պահոց (Պահքի օրերին նուիրուած) եւ Հանգստեան:

***Հարց.*** - Ի՞նչ է Մաշտոցը:

***Պատասխան.*** - Մաշտոցը եկեղեցական խորհրդակատարութիւնների եւ հոգեւոր արարողութիւնների կատարման ձեռնարկն է եւ ուղեցոյցը: Հայ Եկեղեցու բոլոր ծէսերն ու արարողութիւնները կատարւում են ըստ այդ գրքի: Մնացած բոլոր «ինքնահնար» եւ օտար ծէսերը, որոնք չեն ամփոփուած Մաշտոցում համարւում են անվաւեր:

***Հարց.*** - Այդ գիրքն ի՞նչ կապ ունի Մեսրոպ Մաշտոցի հետ:

***Պատասխան.*** - Մեսրոպ Մաշտոցն իր աւանդն ունի այդ կարգի պատրաստման մէջ, ուր գրի են առնուած մինչ այդ եղած կարգերը, որ սահմանել էր Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ իր յաջորդները: Վերջնական տեսքն ընդունուած է Ը դարում՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակ, որի անունով էլ կոչուեց այս գիրքը:



***Հարց.*** - Քանի Մաշտոց կա՞յ:

***Պատասխան.*** - Երեք: Փոքր Մաշտոց, Մայր Մաշտոց եւ Հայր Մաշտոց: Առաջինում նշուած են բոլոր այն արարողութիւնները, որոնք կատարում են քահանաները, երկրորդում՝ եպիսկոպոսական կանոնները, եւ երրորդում՝ Կաթողիկոսական կանոնները:

***Հարց.*** - Ի՞նչ է Ճաշոց գիրքը:

***Պատասխան.*** - Քաղուածքներ են Հին եւ Նոր Կտակարանից, ամենօրեայ ընթերցումների համար: Ճաշոց, այսինքն՝ ճաշ, հոգեւոր հաց:

***Հարց.*** - Ի՞նչ է Յայսմաւուրքը:

***Պատասխան.*** - Սրբերի վարքագրութիւնն է ըստ տարուայ օրերի: Հայ Եկեղեցու Տօնացոյցում յիշատակուած բոլոր սրբերի վարքերը, ինչպէս նաեւ բոլոր տօների մասին նիւթերը գրուած են Յայսմաւուրքում:

***Հարց.*** - Ե՞րբ սովորութիւն եղաւ Վարք կարդալուն:

***Պատասխան.*** - Առաքելական դարում, երբ սովորութիւն դարձաւ նահատակների կեանքը պատմել ժողովրդին:

***Հարց.*** - Ի՞նչ է Կանոնը:

***Պատասխան.*** - Հրահանգներ են եկեղեցական կարգը կատարելու համար: Կանոնները երեք խմբի են բաժանւում՝ Առաքելական, Արեւելեան Եկեղեցիների եւ Հայաստանեայց Եկեղեցու: Մի քանի օրինակ.

ա. Առաքելական կանոններից.

- Աղօթել դէպի արեւելք,
- Կիրակի օրը պատարագ մատուցել,
- Զատկից առաջ 40 օր պահք պահել,
- Զատկից յետոյ 50 օր յարութեան տօն է,
- Չորեքշաբթի պահքի օր է՝ ի յիշատակ Մատնութեան,

- Ուրբաթ պահքի օր է՝ ի յիշատակ Չարչարանքների,
- Տէրունական օրերից առաջ 5 օր պահքի օրեր են:

բ. Արեւելեան եկեղեցիների կանոններից.
- եկեղեցու մէջ հաց չուտել,
- Կանայք բեմ չգնան,
- Պահոց օրերին պսակ չանեն,
- Տներում պատարագ չանեն:

գ. Հայաստանեայց եկեղեցու կանոններից.
- եթէ քահանան յայտնի խոստովանութիւնը՝ զրկւում է աստիճանից,
- Մինչեւ հինգ պորտ ազգականութիւն ունեցողներին չպսակել,
- Մկրտութեան ժամանակ կինը թող չկանգնի Աւազանի մօտ:

***Հարց.*** - Ի՞նչ է նշանակում Նախատօնակ:
***Պատասխան.*** - Մեծ տօներին նախորդող երեկոյեան կարգը (Տէրունական տօներին եւ սրբերի յիշատակի տօներին) կոչւում է Նախատօնակ:

***Հարց.*** - Տօները շարժական ե՞ն թէ անշարժ:
***Պատասխան***. - Շարժական, քանի որ կախուած են Զատկի օրից, որը շարժական է: Ամէն տարուայ համար Զատիկը որոշում են մի բանաձեւով, որ կոչւում է Գաուսի բանաձեւ (գերմանացի յայտնի մաթեմատիկոսի անունով): Կան նաեւ անշարժ տօներ՝ Յունուարի 6-ին՝ Ծնունդ, Փետրուարի 14-ին՝ Տեառնընդառաջ, Աւետումն՝ ապրիլի 7-ին, Աստուածածնի ծնունդը՝ սեպտեմբերի 8-ին:

***Հարց.*** - Ի՞նչ խորհուրդ ունի Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը:
***Պատասխան***. - Տօները բաժանւում են երկու մասի՝ Առաքելադիր եւ Հայրապետադիր: Առաքելադիր տօներից են Ծննդեան, Աստուածայայ-



տնութեան, Մկրտութեան, Համբարձման, Հոգեգալստեան եւ Քրիստոսին վերաբերող միւս տօները, որոնք սահմանել են Առաքեալները: Միւս տօները սահմանել են եկեղեցու Հայրապետները: Հայ եկեղեցին ունի հինգ մեծ տօներ (Տաղաւարներ), որոնք նշւում են մեծ շուքով. Ծնունդը, Զատիկը, Պայծառակերպութիւնը, Աստուածամօր Վերափոխումը, Խաչվերացը: Եւ այսպէս, առաջին տաղաւարը Յիսուսի Ծննդեան տօնն է. Աստուած մարդացաւ, մարդկանց մեղքերը վերցրեց, չարչարուեց եւ մահուան դատապարտուեց մեզ համար, որ յաւիտենական կեանքի արժանացնի: Հայերը այդ տօնը՝ Ծնունդը, Աստուածայայտնութեան ու Մկրտութեան հետ միասին կատարում են յունուարի վեցին: Մկրտութիւնը յիշատակն է Յորդանանում Նրա մկրտուելուն՝ Յովհաննէս Մկրտչի ձեռքով: Աստուածայայտնութեան տօն է կոչւում, որովհետեւ Աստուծոյ փառքը յայտնուեց մեզ:

***Հարց.*** - Ինչո՞ւ է Հայ եկեղեցին Ծնունդն ու Մկրտութիւնը միասին տօնում, մինչ միւսները տօնում են առանձին: Եւ ինչո՞ւ են տօնում յունուարի 6-ին, իսկ միւս ազգերը՝ դեկտեմբերի 25-ին:
***Պատասխան***. - Մինչեւ Դ դար բոլոր քրիստոնեաները այս տօները նշում էին յունուարի 6-ին, ինչպէս հաստատում են թէ՛ յոյն եւ թէ՛ լատին մատենագիրները: Ե դարից Արեւմտեան եկեղեցիները այդ տօնը սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին: Այդ էլ կապուած էր հեթանոսական տօնի՝ արեւի ծննդեան (ձմեռային արեւադարձի) օրուայ հետ՝ երբ ցերեկուայ տեւողութիւնը սկսում է աւելանալ: Արեւմուտքը յոյս ունէր այս ձեւով ազատուել հեթանոսական այդ տօնից՝ փոխարինելով այն Աստուածայայտնութեան՝ իսկական Արեգակի տօնով: Հայ եկեղեցին լինելով աւանդապահ, չփոխեց առաքելական դարի սահմանած կանոնը եւ պահեց այն մինչ մեր օրերը: Այսպիսով Արեւմտեան եկեղեցին թէեւ Ծնունդը նշում է դեկտեմբերի 25-ին, բայց Մկրտութիւնը՝ յունուարի 6-ին (ինչպէս մենք): Նոյն կերպ է նշում այդ տօնը նաեւ Ռուսաց եկեղեցին: Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտութիւնը՝ յունուարի 6-ին:

Քանի որ Ռուսաց Եկեղեցին մինչ հիմա չի անցել Գրիգորեան տոմարի (Նոր Տոմարի), այլ նշում է Յուլեան տոմարով (Հին տոմարով), ապա բնականաբար Ծնունդը կընկնի՝ դեկտեմբերի 25+13 օր = յունուար 7-ին, իսկ Մկրտութիւնը համապատասխանաբար՝ յունուարի 6+13 օր = յունուարի 19-ին: Այս ձեւով են նշում Ծնունդն ու Մկրտութիւնը Ռուսաց մէջ եղող Հայ համայնքները:

Համաձայն Հին Կտակարանի, որեւէ մէկը իրաւունք չունէր քահանայութիւն անել, եթէ չէր լրացել նրա երեսուն տարին: Ուստի երբ Յիսուս սկսեց քարոզել (սկսուեց Նրա քահանայութեան շրջանը) Նա երեսուն տարեկան էր: Իսկ Նա սկսեց քարոզել Մկրտութեան օրից յետոյ: Այս առումով էլ Նախնի Եկեղեցին Ծնունդն ու Մկրտութիւնը նշում էր միեւնոյն օրը, որին հարազատ մնաց Հայ Եկեղեցին մինչեւ այսօր:

***Հարց.*** - Բայց չէ՞ որ ձմեռային արեւադարձի օրը լինում է ոչ թէ դեկտեմբերի 25-ին, այլ դեկտեմբերի 22-23-ին:

***Պատասխան***. - Երկրագնդի առանցքի թաւալման հետեւանքով (պրեցեսիա) արեւադարձի օրերը ժամանակի ընթացքում յետ են ընկնում (26.000 տարում մէկ պտոյտ կատարելով): Առաջին դարում ձմեռային արեւադարձի օրն ընկնում էր դեկտեմբերի 24-25-ին:

***Հարց.*** - Բայց ինչո՞ւ համար է ժողովուրդը Ծնունդը համարում յունուարի 5-ը (փոքր Զատիկ):

***Պատասխան.*** - Կայ օրուայ երկու հասկացողութիւն. քաղաքացիական օր եւ եկեղեցական օր: Առաջինը սկսւում է կէսգիշերին (ժամը 24-ին), երկրորդը՝ երեկոյեան՝ մայրամուտից յետոյ (ժամը 18-ին): Այդ պատճառով յունուարի 6-ը (եկեղեցական օր) սկսւում է յունուարի 5-ի (քաղաքացիական) երեկոյեան:

***Հարց.*** - Ինչպէ՞ս է կատարւում Ծնունդն ու Մկրտութիւնը Եկեղեցում:

***Պատասխան.*** - Յունուարի 5-ի երեկոյեան կատարւում է Ճրագալոյց



Աստուածայայտնութեան՝ վառւում են բոլոր կանթեղները եւ մոմերը: Մատուցւում է Ս. Պատարագ: Կարդացւում է Աստուածաշնչի առաջին գրքի՝ Ծննդոցի Ա-Գ գլուխները, ուր յիշատակւում են Արարչութիւնը, Մարդու ստեղծումը, Անկումը: Այս ամենի նպատակն է ցոյց տալ, որ Յիսուսի Ծնունդով կատարուեցին բոլոր մարգարէութիւնները: Նրա Յայտնութեամբ մարդը Աստծուն միանալու, Աստուծոյ Թագաւորութիւն մտնելու ճանապարհ գտաւ: Աստուածաշնչի առաջին մարգարէութիւնը (Ծննդոց Գ, 15) կատարուեց, Նա «պիտի ջախջախի նրա գլուխը»: Պատարագից յետոյ կատարւում է հսկում: Առաւօտեան, յունուարի 6-ին, մատուցւում է Ս. Պատարագ, որից յետոյ՝ Ջրօրհնէք՝ Յիսուսի Մկրտութիւնը (ժողովուրդն ասում է՝ Խաչը ջուրն են գցում): Յիսուս սրբեց ջուրը (ջուրը օրհնուեց). պատարագիչը Ս. Միւռոն է կաթեցնում ջրի մէջ, օրհնում: Սովորութեան համաձայն, ժողովուրդը այդ ջրից շշերով տանում է տուն՝ որպէս բուժիչ դեղ հիւանդների համար: Յետոյ քահանան ժողովրդի հետ գնում է տները՝ աւետելու Յիսուսի ծնունդը: Այստեղից է առաջացել Տնօրհնէքի սովորութիւնը: Աւետիս տանելու սովորութիւնը մինչեւ վերջերս պահպանուած էր արեւմտահայերի մօտ. յունուարի 6-ին, վաղ առաւօտեան գնում էին տները եւ երգում Ծննդեան շարականներ:

***Հարց.*** - Ի՞նչ է Թլփատութիւնը կամ Անուանակոչութիւնը:

***Պատասխան.*** - Հին Կտակարանի օրէնքի համաձայն, ութերորդ օրը, Քրիստոսին թլփատեցին եւ անունը դրեցին Յիսուս՝ այսինքն Փրկիչ: Ծննդի ութերորդ օրը լինում է յունուարի 13-ը, որն անշարժ տօն է: Քրիստոնեաների համար այս տօնը յիշատակ է հոգևոր թլփատութեան, սրտի թլփատութեան (Հռոմ., Բ, 29):

***Հարց.*** - Ո՞ր թուականին է ծնուել Յիսուս:

***Պատասխան.*** - Յայտնի է, որ այսօրուայ թուականը սկսւում է հաշուարկը Յիսուսի ծննդից: Այսինքն՝ Յիսուս ծնուել է 1 թուականին:

Այս թուականը կոչւում է Փրկչական (գրաբարում Յ. Տ.՝ Յամի Տեառն),: Բայց Յիսուսի ծննդեան թուականը, այս նոյն թուակարգով 4 տարուայ տարբերութիւն է տալիս, այսինքն, ընկնում է Ն. Ք. (Նախքան Քրիստոս) 4 թուականին: Այստեղ զուտ տոմարական հաշիւների տարբերութիւն է, եւ որեւէ դաւանաբանութիւն չկայ: Ինչպէս յայտնի է, հնում չի եղել այսօրուայ նման կուռ թուակարգ: Ամէն մի պետութիւն թուականները հաշուել է իր թագաւորների գահակալութեան տարիներով. այսպէս՝ Տրդատի 5-րդ տարին, Խոսրովի 10-րդ տարին եւ այլն: Սա էլ միասնական չի եղել: Հրեաներն, օրինակ, հաշւում էին Արարչութեան օրից սկսած, Հռոմէացիները՝ Հռոմի հիմնադրումից սկսած: Օգտագործել են նաեւ թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը միաժամանակ: Ասում էին՝ Հռոմէական 754 թուականին կամ Հերովդէսի թագաւորութեան 37-րդ տարում եւ այլն: Չամչեանի Պատմութեան մէջ թուակարգը օգտագործւում է թէ՛ մէկը թէ՛ միւսը: Մեր այսօրուայ թուակարգը սկսել են գործածել Զ դարից սկսած, եւ միայն յետոյ է պարզուել, որ Յիսուսի Ծննդի հետ այդ թուակարգը 4 տարուայ տարբերութիւն է տալիս:

***Հարց.*** - Ինչպէ՞ս են գտել այդ տարբերութիւնը:

***Պատասխան.*** - Բազմաթիւ պատմական տեղեկութիւններ կան, որոնցից միայն մէկը յիշատակենք: Յայտնի է, որ Հերովդէսը մահացել է իր թագաւորութեան 37-րդ տարում (Յովսէփոս Փլավիոս, Հնախօսութիւններ, 17, 8, § 1): Միւս կողմից յայտնի է նաեւ նրա գահակալութեան թուականը՝ Հռոմի հիմնադրման 714 թուականին: Ուստի Նրա մահը եղել է 714+37 =750-751 թուականին: Ստոյգ գիտենք, որ մեր այսօրուայ թուակարգի 1 թուականը համապատասխանում է Հռոմի 754 թուականին: Այսինքն Հերովդէսը մահացել է Ն. Ք. 4 թուականին (754-750=4): Իսկ Յիսուս ծնուել է Հերովդէսի մահուան տարում, կամ դրան շատ մօտ:

***Հարց.*** - Ի՞նչ կապ ունի Յիսուսի Ծնունդը նոր տարուայ հետ:



***Պատասխան.*** - Ինչպէս գիտենք Նոր տարին Հռոմէական տոմարով ոչ թէ յունուարի 1-ն էր համարւում, այլ մարտի 1-ը (նոյեմբեր նշանակում է՝ իններորդ, դեկտեմբեր՝ տասներորդ եւ ոչ թէ՝ տասնմէկերորդ եւ տասներկուերորդ): Հին Հռոմում յունուարի 1-ը համարւում էր կայսրերի գահակալման օրը: Այսպիսով Նոր տարին յունուարի 1-ին նշելը, հետեւանք է Քրիստոնէութան տարածման, եւ Քրիստոսի Ծնունդով, իրօք որ, Նոր Տարի սկսելու սովորութեան:

***Հարց.*** - Ի՞նչ պարագաներում ծնուեց Յիսուս:

***Պատասխան.*** - Օգոստոս կայսեր հրամանով, ողջ կայսրութեան մէջ պիտի մարդահամար անցկացուէր: Ամէն մէկը պէտք է իր ծննդավայրը գնար՝ գրանցուելու: Յովսէփն էլ, սուրբ Կոյս Մարիամի հետ գնաց իր ծննդավայրը՝ Բեթղեհէմ, քանի որ Դաւիթ թագաւորի ցեղից էր: Երբ հասան Բեթղեհէմ, Մարիամի ծննդաբերութեան օրերը լրացան: Ոչ մի պանդոկում տեղ չգտնելով գիշերելու, քանի որ շատերն էին քաղաք եկել, մի քարայրի մէջ տեղաւորուեցին, ուր եւ Յիսուս ծնուեց: Այսպէս Աստծոյ Որդին ծնուեց մի անփառունակ քարայրում՝ աղքատութեան մէջ: Ծննդեան վկաներ եղան մօտակայքում գտնուող հովիւները եւ հրեշտակները՝ որոնք երգում էին. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Այնուհետեւ արեւելքից մոգեր եկան, որոնց մի աստղ էր առաջնորդել եւ երկրպագեցին Մանուկին, Նրան մատուցեցին իրենց բերած ընծաներն ու գնացին իրենց երկրները (Մատթ. Բ եւ Ղուկաս Բ գլուխներ):

***Հարց.*** - Ի՞նչ է սովորեցնում մեզ Աստծոյ Որդու Ծնունդը այդպիսի պայմաններում:

***Պատասխան.*** - Նոր Տարին բերում է մեզ Նոր ժամանակ. Յիսուսի Ծնունդով ամէն բան Նոր եղաւ՝ ե՛ւ ժամանակները, ե՛ւ մեր կեանքը, ե՛ւ մեր ճանապարհները, ե՛ւ մեր մտածումները, ե՛ւ մեր նպատակները: Յիսուսի Ծնունդով մի Նոր ժամանակաշրջան սկսուեց: Վաղուայ օրը

մեր համար մի անծանօթ աշխարհ է, մի նոր տարի, կանգնած իր անորոշութեամբ: Մենք չգիտենք թէ ինչ է մեզ սպասւում. սէր եւ խաղաղութիւն, թէ արիւն ու պատերազմ: Յիսուս ծնուեց մեզ առաջնորդելու համար դէպի այդ անորոշ ապագան, որի հետ միայն մարդը կկարողանայ դուրս գալ այդ անորոշութիւնից: Եթէ մեզ սպասւում է ուրախութիւն եւ յաղթանակներ, ապա յիշենք Բեթղեհէմեան Մանուկին՝ որը շնորհեց մեզ այդ յաղթանակը: Եթէ սպասւում է դառնութիւն ու վիշտ՝ դարձեալ յիշենք Բեթղեհէմեան Մանուկին՝ որ Գեթսէմանում ըմպեց դառնութեան բաժակը եւ այսպէս յաղթեց աշխարհին: Եթէ մեզ վիճակուի մարդկային ատելութիւնն ու աշխարհի ծաղրն ու ծանակը՝ յիշենք Բեթղեհէմեան Մանուկին՝ որը Խաչի վրայ ծաղր ու ծանակի ենթարկուեց: Այսպիսով Յիսուսի Ծնունդը մեր կեանքի ծնունդն է եւ առաջնորդողը, ամէն իրավիճակի մէջ: Աստուծոյ Որդին երկնքից երկիր իջնելով սովորեցրեց մեզ աղքատութեան եւ թշուառութեան մէջ չպարտուել, դրսում՝ աշխարհի մեծերի ու հարուստների մօտ հանգիստ ու փառք չտեսնել ու չորոնել, այլ ներքուստ զօրանալ, հոգով ու իմաստութեամբ զարգանալ եւ հաւատալ, որ Բեթղեհէմեան Լոյսը երբեք չի հանգչի: Մեր շուրջը վառւում են շատ ճրագներ, բայց մեր սրտերը դեռ մնում են մարած ու խաւար, անունով քրիստոնեայ ենք, բայց երկրպագում ենք ուրիշ կուռքերի: Յիշենք, որ Բեթղեհէմեան Լոյսը կարող է լուսաւորել մեր սրտերը եւ մեզ լոյսի առաջնորդել: Բեթղեհէմեան Լոյսի Ծնունդը մեր կեանքի դրօշակը պէտք է լինի:

***Հարց.*** - Ո՞ւր է այն խաղաղութիւնը որ աւետեցին հրեշտակները: Ինչպէս հասկանալ «Փառք ի բարձունս...» երգը, որ երգում էին հրեշտակները:

***Պատասխան.*** - Այս փառաբանութեան մէջ ասւում է երեք բան. փառք, խաղաղութիւն եւ հաճութիւն. այնուհետեւ՝ Աստուած, երկիր եւ մարդ: Ընդ որում փառքը՝ երկնքում Աստծուն, խաղաղութիւնը՝ երկրի վրայ եւ վերջապէս հաճութիւնը՝ մարդկանց մէջ: Այս երգի մէջ ամփոփ ձեւով նկարագրուած է Աւետարանը համարեա ամբողջութեամբ:



Հազարաւոր տարիներ երկրի վրայ խաւարն էր իշխում, մարդկութիւնը քնած մեղքի ու թշնամութեան մէջ, խարխափում էր մթութեան մէջ: Եւ ահա երկնքից բացւում են խաղաղութեան դռները եւ հրեշտակները աւետում են Յիսուս մանկան՝ Խաղաղութեան Իշխանի Ծնունդը: Այս է Աւետարանը՝ Բարի Լուրը: Մարդկանց մէջ էլ հաճութիւն՝ նշանակում է Յիսուս մարդկանց մէջ, Յիսուս մարդկանց սրտերի մէջ: Յիսուս եկաւ բնակուելու մեր սրտերի մէջ, բերելով երկնային խաղաղութիւնը, որի համար փառք Աստծուն բարձրունքներում:

***Հարց.*** - Ովքե՞ր էին մոգերը, որ եկան երկրպագելու Մանուկ Յիսուսին:

***Պատասխան.*** - Մոգերի մասին Նոր Կտակարանում տեղեկութիւններ կան միայն Մատթէոսի աւետարանում: Մնացած բոլոր տեղեկութիւնները, նրանց անունները, ազգութիւնը, ժամանակը, տարիքը եւ այլն, յիշուած են աւանդութեան եւ անվաւեր գրականութեան մէջ: Մոգերը՝ երեքն էին, թագաւորներ. առաջին թագաւորը պարսիկ էր, Մելքոն անունով: Երկրորդ թագաւորը՝ հնդիկ՝ Գասպար անունով եւ երրորդը՝ արաբ, Բաղտասար անունով: Նրանք զօրքով եկել էին Երուսաղէմ, իմանալու Մանուկի մասին: Այնտեղից աստղի առաջնորդութեամբ գնացել Բեթղեհէմ: Նրանց բերած նուէրները երեքն էին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Ոսկին՝ խորհուրդն էր Մանկան թագաւոր լինելուն (թագաւորների թագաւոր), կնդրուկը՝ Նրա Աստուածութեան եւ զմուռսը՝ Նրա փրկչարար եւ քաւչարար մահուան նշաններն էին: Մարդիկ ծնւում են որպէսզի ապրեն, այնինչ մեր Փրկիչը ծնուեց, որպէսզի մեռնի՝ իր մահուամբ կեանք պարգեւելով մարդկանց: Նշանակում է մոգերը հաստատեցին երեք բան՝ Մանուկը իրենց թագաւորն է, իրենց Աստուածը եւ իրենց Փրկիչը: Այս է մոգերի դաւանութիւնը: Այս կերպ պէտք է եւ մենք մօտենանք Բեթղեհէմեան Մանուկին. Յիսուսը մեր Աստուածն է, մեր Թագաւորը եւ մեր Փրկիչը: Միջնադարում երեք մոգերին նոյնացրել են նաեւ Նոյի երեք որդիների սերունդների ներկայացուցիչների հետ: Չքնաղ մի տեսարան է բացւում Մսուրում: Ողջ մարդկութիւնը

(Նոյի սերունդը) իր երախտագիտութիւնն է յայտնում Մանուկին՝ խոնարհուելով եւ երկրպագելով Նրան: Մենք էլ Ծննդեան օրերին մեր գանձերից բաժին պէտք է հանենք Մանուկ Յիսուսին. այդ գանձերն առաջին հերթին մեր սիրտն ու կեանքն են, մեր միտքն ու էութիւնը, որ բերելով Մանուկ Յիսուսի առաջ, մոգերի նման փաստում ենք, որ Յիսուս մեր Աստուածն է, մեր թագաւորը եւ մեր Փրկիչը: Այս սովորութեան համաձայն էլ քրիստոնեայ ազգերը ոչ միայն Յիսուսի Ծննդին, այլ երեխաների ծննդեան օրերին էլ են իրար նուէրներ տալիս: Եւ երեխաների այն հարցին թէ՝ Ի՞նչ նուէրներ են սրանք, պատասխանում են. «Երկու հազար տարի առաջ ծնուեց մի Մանուկ, որի անունը Յիսուս էր եւ թագաւոր-մոգեր եկան ու նուէրներ բերեցին Մանուկ Յիսուսին»:

***Հարց.*** - Ի՞նչ աստղի մասին է խօսքը: Մի՞թէ սովորական աստղ էր: Մի՞թէ ցերեկով էր երեւում:

***Պատասխան.*** - Պարզ է, որ այստեղ խոսւում է ոչ սովորական աստղի մասին, այլ մի անծանօթ երեւոյթի մասին, որը կարող էր առաջնորդել մարդկանց: Նման բաներ սովորական էին Հին Կտակարանում: Այս աստղի մասին եկեղեցու հայրերը բազում մեկնութիւններ ունեն: Բերենք մի քանիսը.

«Այն պահին, երբ ծնուեց Յիսուսը, մոգերի բոլոր գնդերը տեսան եւ իմացան թէ ինչպէս պիտի գտնեն նոր ծնուած թագաւորին. Աստուած վառեց իր լապտերները եւ նրանց համար՝ մի նոր աստղ... Այդ աստղի մէջ մոգերը տեսնում էին Ս. Կոյսին շատ զարմանալի կերպարանքով, որ բազմել էր եւ իր գրկին ունէր Մանուկ Յիսուսին... Եւ բոցավառ թագ կար Նրա գլխին:

Աստղերը իրենց ժամանակի համաձայն պտտւում են երկնակամարում ի սկզբանէ, եւ նրանց ընթացքը չի խառնւում: Դրանցից ո՞ր մէկն իր պարանոցն ազատեց այդ լուծից եւ իջաւ երկիր... Մեր Տիրոջ հետ պատահածները նոր բաներ են, եւ ըստ բնութեան ու սովորութեան ոչ ոք չէր լսել» (Ս. Յակոբ, Մծբինի Հայրապետ):



«Այդ բազմաթիւ աստղերից չէր, այլ աներեւոյթ զօրութիւն էր այդ կերպարանքով հանդէս եկած: Ս. Ծննդեան աստղը իր լուսաւորութեամբ առաւել էր արեգակից, որովհետեւ ցերեկով էր երեւում: Նա նման էր Հին Կտակարանի ամպի սիւնին» (Յովհան Ոսկեբերան):

«Աստղի յայտնուելու պատճառը յայտնի է. բայց նա բնական աստղերից չէր, այլ նոր եւ զարմանալի, ինչպէս յայտնի է իր ընթացքից, քանի որ օրէնքով չէր այդպիսի ընթացքը» (Շնորհալի):

«Լուսաւոր աստղը մոգերին առաջնորդեց եւ եկաւ ու մտաւ մսուրի մէջ՝ ուր Մանուկն էր, եւ կանգնեց Նրա գլխավերեւին. եւ մոգերը տեսան ու հովիւները երկրպագեցին Նրան: Այս խորհրդի պատճառով է, որ լոյսով ենք մտնում եկեղեցի եւ տօնը կատարում» (Տաթեւացի):

Ինչ խօսք, որ մոգերի պատմութիւնը շատ գրաւիչ ու հետաքրքրական է: Իզուր չէ որ եկեղեցու հայրերը նրան են նուիրել շատ ճառեր: Մեր ժամանակներում էլ այդ Աստղը չի կորցրել իր հրճուանքն ու գրաւչութիւնը: Յիսուսին փնտրելու ու գտնելու, Նրան ճանաչելու եւ դաւանելու, Նրա առաջ խոնարհուելու ու Նրան երկրպագելու գերազանց խորհուրդն է թաքնուած այդտեղ: Թագաւորները փոխեցին իրենց ճանապարհը եւ մի ուրիշ ճանապարհով գնացին իրենց տուն (Մատթ., Բ, 12): Այդպէս էլ այսօր, Յիսուսին գտնողը պէտք է խոնարհուի, իր սիրտը՝ ամբողջ ունեցուածքը, նուիրի Մանուկին եւ կփոխուեն նրա ճանապարհները, լուսոյ ճանապարհներ կդառնան եւ ամենուր Բեթղեհէմեան Աստղը նրա հետ կլինի:

***Հարց.*** - Ի՞նչ է ամանորեայ տօնածառը:

***Պատասխան.*** - Ամանորը կամ Նոր տարին հայերը կոչել են նաեւ Կաղանդ: Այս բառից է Կաղանդչէք-ը, որը նշանակում է կաղանդի առթիւ տրուած նուէր: Կաղանդչէքի հասկացողութիւնը գալիս է դեռեւս եղեմական պարտէզից. որպէս Նոր դարաշրջանի սկիզբ մեր նախահայրը ամէն ինչ որպէս նուէր ստացաւ՝ թէ՛ կեանքը, թէ՛ միտքը, թէ՛ ընտանիքը: Եղեմական պարտէզում մի ծառ կար՝ Կենաց (կեանքի) ծա-

ռը, որը վաղ թէ ուշ պիտի ճաշակէր Ադամը: Բայց նա նախընտրեց ուրիշ ծառ՝ իմաստութեան ծառը: Այդ ընտրութիւնով էլ կենաց ծառը դարձաւ անմատչելի եւ երանելի բաղձանք մարդկութեան համար: Մարդկութիւնը բոլոր ժամանակներում երազել է այդ ծառի մասին: Ամանորեայ տօնածառը մի փոքրիկ յուշ է այն նուիրական ծառի, որ կորցրեց մարդկութիւնը: Այս պատճառով է, որ քրիստոնեայ երկրներում այս ծառը կոչուել է նաեւ Ծննդեան ծառ: Ծննդեան օրերին, երբ մի նոր տարի է բացւում մեր առաջ, մենք ցանկանում ենք նորից վերգտնել այդ կորցրած ծառը՝ կենաց ծառը: Խորհրդաւորաբար ծննդեան ծառը կապւում է կենդանի կենաց ծառի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Այսինքն, եդեմական պարտէզում Կենաց ծառը Ամանորեայ տօներին նոյնանում է ծննդեան կենդանի ծառի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ ինչպէս մոգերը իրենց ընծաները բերեցին Մանուկի առաջ, այդպէս էլ մենք ենք ձգտում մեր ընծաները բերել Կենդանի ծառին՝ զարդարելով տօնածառը:

***Հարց.*** - Շատ յաճախ, Ծննդեան նկարներում բացի հովիւներից ու մոգերից նկարում են նաեւ ընտանի մի քանի կենդանիներ: Ինչո՞ւ:

***Պատասխան.*** - ԺԴ դարի մի պարականոն գրքում, որը նուիրուած է Յիսուսի մանկութեանը, նկարագրուած է մի այսպիսի դէպք. «Տիրոջ ծնունդի երրորդ օրը երանելի կոյսը քարայրից դուրս եկաւ, մտաւ գոմ եւ Մանուկին դրեց մսուրի մէջ, ուր եւ Մանուկին մօտեցան մի եզ ու մի էշ: Այդ ժամանակ կատարուեց մի մարգարեութիւն (Եսայի Ա 3). *"Եզն իր Տիրոջն է ճանաչում, իսկ էշը իր մսուրը"»:* Եսայի մարգարէի այս հատուածն էլ տեղիք է տուել այս կարգի նկարագրումների: Զանազան միջնադարեան մատենագիրներ եզան ու էշի ներկայութիւնը Մսուրում դիտում էին որպէս իրողութիւն: Խորհուրդը պարզ է. անգամ կենդանական աշխարհն է ճանաչում իր Արարչին: Յիսուսի Մկրտութեան շարականում («Ով զարմանալի») այսպիսի տողերի ենք հանդիպում. «Յորդանան լեւալ փախստական դառնայր, վտակ առ վտակ պատգամաւոր լինէր. Գե՛տ, մի զարհուրիր, քո արարիչն եմ ես, եկեալ մկրտիմ եւ լւանամ ըզմեղս»: Քնարական մի վեհաշունչ տեսարան է նկարագրում շարականը. երբ Յիսուս մտնում է ջուրը, գետը փախստականի նման փախչում է նրա ոտքերի տակից եւ լսւում է հրամանը. «Մի՛ զարհուրիր, ես եմ, քո արարիչն եմ»: Անկենդան բնութիւնն անգամ զգում է Արարչի ներկայութիւնը:



***Հարց.*** - Ի՞նչ կարեւոր տօներ կան Աստուածայայտնութիւնից յետոյ:

***Պատասխան.*** - Աստուածայայտնութիւնից մինչ Բուն Բարեկենդան ամենանշանաւոր տօներն են Տեառնընդառաջը, Ղեւոնդեան քահանաների յիշատակը, եւ Վարդանանց յիշատակը:

***Հարց.*** - Ինչո՞ւ է Վարդանանց տօնը նշւում փետրուարին. չէ՞ որ Աւարայրի ճակատամարտը տեղի է ունեցել մայիս ամսին:

***Պատասխան.*** - Վարդանանց տօնին նախորդում է մի տօն՝ Ղեւոնդեան քահանաների յիշատակը, որն յաճախ է անտեսւում: Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթուայ երեքշաբթին Ղեւոնդեան քահանաների յիշատակի օրն է, իսկ հինգշաբթին՝ Վարդանանց: Յովսէփ կաթողիկոսը, Սահակ եպիսկոպոսը, Ղեւոնդ երէցը եւ այլ քահանաներ միշտ գտնուելով ժողովրդի հետ, քաջալերում էին մարդկանց, ուժ տալիս, խրատում Սուրբ Գրքի պատգամներով: Աւարայրից առաջ նրանք Սուրբ Պատարագ մատուցեցին եւ հաղորդութիւն տուեցին զինուորներին, նաեւ մկրտեցին չմկրտուածներին: Ղեւոնդը քաջալերական մի ճառ ասաց զօրքի առաջ: Ահա հատուածներ այդ ճառից.

«Եթէ մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսին մահակից լինել, որովհետեւ ում հետ որ մեռնում ենք, նրա հետ էլ կկենդանանանք...: Որովհետեւ ով ճշմարտութեամբ միացած է Քրիստոսի սիրոյ հետ, հոգու աչքերով տեսնում է իմանալի Արեգակի (Քրիստոսի) ճառագայթների անտեսանելի յստակ լոյսը, որ ամէն ժամ եւ ամէն օր շատ աւելի պայծառ ծագելով երեւում է բոլորին... այսչափ վեր բարձրանալուց յետոյ՝ նորից այստեղ՝ երկիր չընկնենք ու թաւալուենք, այլ այդ նոյն բարձրութեան վրայ հաստատ կանգնած մնանք»:

Ղեւոնդեան քահանաները նահատակուեցին ճակատամարտից յետոյ, իրենց արիւնը խառնելով Սուրբ Վարդանանց արեան հետ: Նրանք մի խումբ քահանաներ էին, բայց մարդկանց սրտերը վառեցին կենդանի խօսքով՝ սիրելու հայրենիքն ու եկեղեցին, Ճշմարտութիւնն ու Արդարութիւնը: Այսօր էլ Ղեւոնդի ճառից շատ բան ունենք սովորելու: Պիտի աշխատենք սրբութեամբ պահել այն հոգեւոր բարձրութիւնները, որոնք կտակել են մեզ ղեւոնդեանները, մեր հայրերը եւ չքաւալուենք երկրի ճղճիմ ճահիճներում:

Վարդանանք զօրք հաւաքելով, դուրս ելան մարտի ընդդէմ խաւարի չար ուժերի: Աւարայրի դաշտում Հայոց ուժը միայն այն 60.000 զինեալները չէին, այլ ամբողջ ժողովուրդը՝ միաբանուած մէկի՝ Քրիստոսի շուրջ: Թէ՛ Ղեւոնդեանները եւ թէ՛ Վարդանանք նահատակուեցին՝ իրենց մահով մահուան յաղթելով: Այս է իմացեալ մահը, որ անմահութիւն է:

Հիմա արդէն կարող ենք հասկանալ թէ ինչու են մեր հայրերը այդ կարգով դասաւորել օրերը: Այդ տօներից յետոյ սկսուելու է Մեծ Պահքը՝ անձնաքննութեան եւ աղօթքի օրերը, երբ մեզանից ամէն մէկը պէտք է քննի իր անցած ճանապարհը՝ յետագայում նոյն սխալները չկրկնելու միտումով, յիշելու մեր հայրերի անցած ճանապարհը եւ նրանց հաւատարիմ մնալու: Մեծ Պահոց օրերին ամէն մի անհատ պիտի վճռի թէ ո՞ւմ է պատկանում, ո՞ւմ վրայ պիտի իր յոյսը դնի, որ ճանապարհով պիտի գնայ՝ Վասակի՞, թէ՞ Վարդանի ու Ղեւոնդի: Այլ ճանապարհ չկայ: Մէկը տանում է ստրկութեան եւ մահուան, իսկ միւսը՝ անմահութեան:

Մեծ Պահոց շրջանն էլ մի Աւարայր է՝ ընդդէմ չարի, խաւարի: Ահա այս խորհրդով էլ Եկեղեցին իմաստուն ձեւով կարգել է տօների այս հերթականութիւնը՝ մինչեւ Պահքի սկսուելը, մեզ խրատելով Վարդանանց օրինակով, Ղեւոնդեանների նուիրումով:

***Հարց.*** - Ի՞նչ են սովորեցնում մեզ այդ տօների յիշատակներն այսօր:

***Պատասխան.*** - Նախ հաւատարմութիւն մեր հայրերի ընտրած ճանապարհին՝ Վարդանանց ճանապարհին: Ամէն մարդու համար,



այսօր մի Աւարայր է բացուած: Ամէն մէկը ինքը պիտի ընտրի՝ ո՞ւմ է միանալու: Վարդանանց բանակը իր յոյսը դրել էր միայն Աստուծոյ եւ Իրենց միասնութեան վրայ: Մենք էլ պէտք է նոյնը անենք: Վարդանանք գիտէին, որ թշնամին իրենցից հզօր է: Մենք էլ գիտենք: Բայց յաղթելու համար դա չէ կարեւորը: Վարդանանք մէնակ էին: Մենք էլ ենք մէնակ: Վարդանանք իրենց անձը չխնայեցին: Մենք էլ պէտք է նոյնը անենք: Վարդանանք հաւատարիմ մնացին Եկեղեցուն: Մենք էլ պէտք է հաւատարիմ մնանք: Վարդանանք չխաբուեցին մեծ ազգերի կրօնից եւ չհետեւեցին Վասակին: Մենք էլ հիմա պիտի չխաբուենք տարբեր վասակեան շարժումներից (որոնցով հիմա լեցուն է Հայաստանը) եւ հաւատարիմ պիտի մնանք Քրիստոսին եւ Սուրբ Եկեղեցուն:

Այդ օրերին Եկեղեցում կարդացւում է Իմաստութեան Ե գլխից (16-23 համարները), ուր Սողոմոնը յիշում է այն զէնքերը, որ պիտի կրեն մարդիկ: Դրանք են՝ Արդարութեան Զրահը, անաչառ դատաստանի Սաղաւարտը, Սրբութեան վահանը (Տե՛ս նաեւ Եփես. Զ, 13-18):

***Հարց.*** - Ի՞նչ են խորհրդանշում այդ զէնքերը:

***Պատասխան.*** - Տեսնում ենք, որ այդ զէնքերը միայն պաշտպանողական բնոյթ ունեն: Համեմատելով Պօղոսի թուարկած Լուսոյ զէնքերի հետ (Եփես. Զ, 13-18) համոզւում ենք, որ պատերազմը մարմնի ու արեան դէմ չէ, այլ երկնային չար զօրութիւնների: Իսկ այդպիսի մարտի համար մարմնաւոր զէնքերը անպիտան են: Պարսից բանակը, Վասակը եւ նմանները լոկ գործիքներ են այդ երկնային զօրութիւնների ձեռքին: Կանցնեն ժամանակները, կանցնեն եւ վասակները, բայց կգան նոր վասակներ եւ նոր զօրութիւններ: Ուստի միշտ պէտք է մտածել անանցողիկի, յաւիտենականի մասին, որպէսզի ճիշտ կողմնորոշուենք: Հէնց դրա համար էլ պիտի զինուել հոգեւոր զէնքերով, որոնց թուարկում է Աստուածաշունչը.

1. Արդարութեան զրահը: Ամէն մի քրիստոնեայ իր վրայ կրում է Քրիստոսի արդարութիւնը, որը որպէս զրահ պաշտպանում է նրան

մարտի դաշտում: Թշնամու ոչ մի նետ չի խոցի այդ զրահը:

2. Սաղաւարտը: Մարտի դաշտում առանց սաղաւարտի զինուորը դատապարտուած է մահուան: Քրիստոնեաների համար Աւետարանի մեզ բերած ճշմարտութիւնները (փրկութիւն, յոյս, յաւիտենական կեանք եւ այլն) մեզ ազատում են մեղքի կապանքներից եւ ապահով պաշտպանում կեանքի ամէն մի փոթորիկի ժամանակ:

3. Սրբութեան վահանը: Քրիստոս իր Արիւնով մեզ մաքրեց եւ սրբեց: Նաեւ մեզ կնքեց, որ այլեւս չծառայենք մեղքին, այլ միայն Իրեն: Սրբութիւնը Քրիստոսն է, որի մէջ մնալով մենք էլ ենք սրբանում:

Այս է Ղեւոնդեանների օրուայ ընթերցուածը: Այսինքն, Եկեղեցին դիտում է այս ամէնը որպէս հոգեւոր պատերազմ, ուր առանց Լուսոյ զէնքերի կպարտուեն բոլորը: Այս պատգամը այսօր էլ կարեւոր է, այսօր էլ պէտք է մեզ, որպէսզի յաղթենք, դուրս գանք դժուարութիւնների ամէն մի կծիկից: Այդ առումով հետաքրքրական է Շնորհալու «Նորահրաշ» շարականը: Խորունկ իմաստութեամբ, շարականի ամեն մի տուն յիշատակում է Լուսոյ այդ զէնքերից մէկը (Վարդանը պսակաւորուած եւ առաքինութիւնների գլուխ է առաջին տան մէջ, Խորէնը՝ երկնային Թագաւորի զէնքով յաղթանակող՝ երկրորդ տան մէջ, Արտակը՝ Աստուածային լոյսով լեցուն՝ երրորդ տան մէջ, Հմայեակը՝ սրբափայլ զգեստով պճնուած՝ չորրորդ տան մէջ, Տաճատը՝ բարիով մեղքերի դէմ վառուող՝ հինգերորդ տան մէջ, Վահանը՝ հաւատի վահան եւ յոյսի զրահ՝ վեցերորդ տան մէջ, Արսէնը՝ անուշահոտ ողջակիզեալ բանաւոր պատարագ (նուիրումը)՝ եօթներորդ տան մէջ, Գարեգինը՝ մարտիրոսութիւն (անձնազոհութիւն)՝ ութերորդ տան մէջ, 1036 հոգին՝ արիաբար պատերազմող (միասնութիւնը որպէս հետեւանք)՝ իններորդ տան մէջ, եւ բոլոր պսակաւորուածները՝ գոհութեամբ Երրորդութեանը փառաբանող (Եկեղեցին եւ Յաղթանակը)՝ տասներորդ տան մէջ)*:

Իհարկէ, ամէն մի զօրաւարի համար երջանկութիւն է նման զինուորներ ունենալը՝ այդպիսի զէնքերով զինուած, ինչպէս նաեւ ամեն մի ժողովրդի համար էլ գանձ է նման բանակ ունենալը:

* *Շարականի ամբողջական մեկնութիւնը տես յաւելուածում:*



***Հարց.*** - Բայց չէ որ, համաձայն *«Մի՛ սպանիր»* պատուիրանի զէնք վերցնել չի կարելի, ուրեմն ինչպէ՞ս համատեղել այս ամէնը թէ՛ Վարդանանց ժամանակների եւ թէ՛ մեր օրերի հետ:

***Պատասխան.*** - Արդէն հասկանալի է, որ քրիստոնեայի համար զէնքերը միայն պաշտպանական բնոյթ են կրում: Սա էլ նշանակում է, որ պատերազմողն Աստուած է: Հին Կտակարանում Դաւիթ թագաւորը միշտ պատերազմում էր թշնամիների դէմ: Պատերազմի համար նրանից ոչ մէկը ոչ մի բան չէր պահանջում: Բայց երբ մի անգամ նա դիտաւորեալ սպանել տուեց իր հաւատարիմ զինուորներից մէկին՝ Ուրիային, այդ թափած արիւնը Աստուած պահանջեց Դաւթից (Բ Թագ. ԺԲ-ԺԳ գլուխներ): Ուստի պատերազմը յանուն ժողովրդի, յանուն մերձաւորի փրկութեան սուրբ է: Այսինքն՝ «Վասն Հայրենեաց եւ վասն հաւատոյ» պատերազմը չի հակասում Աստուածաշնչին: Եւ իզուր չէ, որ Հայ Եկեղեցին սրբացրել է Վարդանանց: Մնացած դէպքերում զէնքի ամէն մի գործածութիւն, ինչ նպատակով էլ որ լինի Ս. Գիրքը արգելում է (Ուրիայի դէպքը): Նոյնը կարելի է ասել նաեւ մեր օրերի համար: Սէրը մերձաւորի հանդէպ, սէրը հայրենիքի հանդէպ պարտաւորեցնում է մեզ առաջին հերթին պաշտպանել նրանց: Վեցերորդ պատուիրանը (*«Մի՛ սպանիր»*), վերաբերում է անհատին, յետոյ ազգին: Աւետարանի բերած սէրը, ներողամտութիւնը ամէն մի ընտանիքի, ժողովրդի ամրութեան, անխափանութեան, յաւիտենականութեան եւ անբաժանելութեան գրաւականն է: Չարին բարիով պատասխանելը, բարիով յաղթելը - բնորոշ են միայն քրիստոնեաներին: Այս է մեր ապահովութեան երաշխիքը: Սէրը մերձաւորի, ընկերոջ, մտերիմի նկատմամբ - ժողովրդի միասնութեան երաշխիքն է: Ներողամտութիւնը - ընտանիքի ու ժողովրդի կայունութեան չափանիշներն են: Դուրս գալ այս նոյն տրամաբանութեամբ ազգամիջեան ասպարէզ - սխալ է: Պահանջել, որ

բոլոր ազգերը ապրեն եւ առաջնորդուեն Լերան քարոզով, զէնք չկիրառեն - չենք կարող: Չենք կարող նաեւ բացատրել պատերազմների գոյութիւնը, ազգամիջեան ընդհարումները, դրանց կանխումը: Մի բանում կարող ենք վստահ լինել, որ եթէ իրօք Քրիստոս թագաւորի բոլոր մարդկանց սրտերում - չեն լինի ո՛չ պատերազմներ, ո՛չ էլ սպանութիւններ: Սա է Աստծոյ Թագաւորութիւնը երկրի վրայ:

Իսկ հիմա, ամենամեծ յաղթանակը թշնամու նկատմամբ, նրան բարեկամ դարձնելն է: Սա է Սուրբ Գրային սկզբունքը, նման հարցերի մէջ կողմնորոշուելու համար:

***Հարց.*** - Բայց չէ՞ որ Քրիստոս պահանջում է սիրել թշնամուն, ապտակողին միւս երեսն էլ դարձնել:

***Պատասխան.*** - Առաջին հերթին, ինչպէս ասուեց վերեւում, անհատական եւ ներազգային տեսակետից սա գոյատեւելու միակ ճիշտ բանաձեւն է: Եւ եթէ այդ նոյն բանաձեւը տարածուի ազգայինից դուրս՝ կատարեալ յաղթանակ է: Բայց ամէն ինչ չի կարելի նոյնացնել: Ինչպէս գիտենք, Նոր Կտակարանը գրուել է հին յունարէնով: Հին յունարէնում կան մի քանի բառեր, որոնք միւս լեզուներում թարգմանւում են մէկ բառով միայն՝ Սէր: Այդ հոմանիշ բառերը որոշ երանգներով տարբերւում են իրարից: Մէկը (ստրոգէ) նշանակում է աւելի ընտանեկան սէր (հօր եւ որդու), միւսը (ֆիլոս)՝ մարդկային, իմացական սէր, իսկ մէկ ուրիշն էլ (ագապէ)՝ աստուածային էութեամբ լեցուն սէր: Այս վերջին բառն էլ օգտագործուած է վերոյիշեալ համարում (Մատթ. Ե, 48): Մեր մտերիմներին մենք սիրում ենք մի սիրով, որ բխում է մեր միջից, սրտից (ստրոգէ), այնինչ նոյն ձեւով չենք կարող սիրել մեր թշնամիներին: Այդ սէրը (ագապէ) երկնային է եւ չի բխում մեր միջից՝ այլ Աստծուց: Քրիստոսին հետեւողը իրեն յանձնում է Աստծուն, եւ հաղորդ է լինում այդ աստուածային սիրուն: Երբ մեր սրտերում ապրում է Քրիստոս, մեր մէջ մեռնում է կոպտութիւնն ու թշնամութիւնը եւ ծնւում է Սէրը: Հէնց սա էլ նշանակում է Աւետարան՝ Բարի Լուր: ***«Աստուած սէր է»*** - գրում է



Յովհաննէս առաքեալը (Ա Յովհ. Դ, 8), օգտագործելով այդ նոյն բառը (ագապէ) վերջին իմաստով: Ուրեմն թշնամուն սիրելու համար պէտք է Վերստին ծնուել, Աւետարանի լոյսով աճել եւ Քրիստոսի մէջ մնալ: Եւ այդ դէպքում է, որ մեզ ապտակողը տեսնելով մեր դիրքը (Քրիստոսի խօսքի համաձայն)՝ կպարտուի եւ մենք յաղթանակած դուրս կգանք: Երկրորդ ապտակով ապտակողը ինքն իրեն կապտակի:

***Հարց.*** - Ինչպէ՞ս հասկանալ Վարդանի ուրացութեան փաստը:

***Պատասխան.*** - Վերջին ժամանակներում շատերն են Վարդանին նուաստացնում, իսկ Վասակին գովաբանում, եւ որպէս կանոն բերում այդ փաստը: Ասենք, որ ժողովրդի տուած գնահատականը հազարամեակների ընթացքում ապացուցել է իր ճշտութիւնը: Եւ հիմա Վարդանը կարիք չունի մեր պաշտպանութեան եւ ոչ էլ նրան կարող են վնասել կամ նուաստացնել նորայայտ «վայ իմաստունները», որոնք տակաւին նոր բան չեն ասում: Վարդանն այնքան մեծ է, իսկ մենք այնքան փոքր, որ ծիծաղելի է անգամ համեմատուել:

Ինչպէս նկարագրում է պատմիչը (Փարպեցի, Պատմութիւն, գլ. ԻԷ), Վարդանը դժուարութեամբ համաձայնուեց իշխանների այդ խորհրդին: Եւ միայն Ս. Գրքից բերած վկայութիւնները համոզեցին Վարդանին գնալ արտաքին այդ ուրացութեան՝ ի փրկութիւն հայոց ազգի: Ահա այդ վկայութիւնները.

Բ Կորնթացիներին Ե, 21. *«Որ մեղքը չգիտէր, մեզ համար մեղք դարձաւ»* (գրաբարում՝ մեղս արար - գործեց):

Հռոմեացիներին Թ, 3. «Քանզի ես ինքս էլ ցանկանում եմ նզովեալ լինել Քրիստոսից՝ յանուն իմ մարմնաւոր եղբայրների, զաւակների եւ ազգականների»:

Կարելի է ուրիշ օրինակներ եւս բերել Ս. Գրքից, երբ ազգի փրկութեան համար, այդ աստեղային պահերին միշտ էլ գտնուել են մարդիկ, որոնց անձնազոհութիւնը, նուիրումը, նախատակութիւնը փրկութեան է տարել ժողովրդին (Յուդիթ, Եսթեր եւ այլն): Եւ վերջապէս Կայափիա

քահանայապետի յայտնի խրատը՝ «Աւելի լաւ է որ մէկը (Քրիստոս) մեռնի ժողովրդի համար» (Յովհ. ԺԸ, 14):

Ինչպէս տեսնում ենք, Վարդանին, որ քաջատեղեակ էր Ս. Գրքին (այդպէս է ասում պատմիչը) այդքան էլ հեշտ չէր համոզել: Բայց բերուած վկայութիւնները դրդեցին նրան նահատակութեան եւ անձնազոհութեան գնով հայ ժողովրդին փրկութեան եւ յարատեւութեան առաջնորդել: Վարդանանց նուիրուած յայտնի երգում («Թէ հայրենեաց պսակադիր») այսպիսի տողեր կան. «Այլ Վարդանայ ընկած երկիր, պիտի ծաղկի սուրբ հաւատ»: Մեր աչքերի առաջ, այսօր կատարւում է այդ փոքրիկ մարգարէութիւնը:

***Հարց.*** - Ի՞նչ է Տեառնընդառաջը:

***Պատասխան.*** - Քառասնօրեայ Յիսուսին տաճար տանելու օրուայ յիշատակն է: Մովսէսի օրէնքի համաձայն Յովսէփը եւ Մարիամը քառասնօրեայ Յիսուսին տաճար տարան՝ Տիրոջ առաջ հանելու (Տեառն ընդ առաջ): Այնտեղ էր Սիմէօն անունով մէկը, որին խոստացուել էր մահ չտեսնել մինչեւ Օծեալ Փրկչի գալը: Նա ընդառաջ գալով, գրկեց մանկանը եւ գոհութիւն ու փառք տուեց Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց տեսնելու Փրկչին: Նա օրհնեց Մանկանն ու ասաց. *«Հիմա արձակիր քո ծառային, ով Տէր, քո խօսքի համեմատ՝ խաղաղութեամբ: Որովհետեւ իմ աչքերը տեսան քո փրկութիւնը, որ պատրաստեցիր բոլոր ազգերի համար»* (Ղուկ. Բ, 22-38): Հետեւաբար, Տեառնընդառաջը կլինի փետրուարի 14 - ին (յունուարի 6 + 40 օր) եւ անշարժ է: Որպէս տէրունական տօն՝ փետրուարի 13-ի երեկոյեան կատարւում է նախատօնակ: Մոմեր վառելով եկեղեցու Սեղանի մոմից, հաւատացեալները դրանք տանում են տուն:

***Հարց.*** - Այդ ի՞նչ կապերից արձակուելու մասին է խօսում Սիմէօնը:

***Պատասխան.*** - «Յայսմաւուրքն» այդ մասին գրում է.

«Արդ, Աստուած ոչ թէ մէկ, այլ երեք կապանքներից արձակեց մեզ.



Օրէնքի անէծքի կապանքներից, Ադամի անէծքից եւ մեղքի հնութիւնից՝ նորոգելով մեզ Աւազանով: Իսկ «արձակիր» ասելով, նա ոչ թէ մաղթում, այլ գոհութեան խօսք է ասում: Ողջ մարդկութեան անունից նա ասում է. Մարգարէներ ուղարկեցիր, հրեշտակներ իջան եւ ոչ մէկը չկարողացաւ մեղքի կապանքներից ազատել մարդկային բնութիւնը: Բայց հիմա, երբ դու խոնարհուեցիր՝ արձակելու ես մեզ նախ մեղքի կապանքներից, ապա օրէնքի ծառայութիւնից՝ որը հնացաւ եւ անզօր դարձաւ, եւ տանելու ես ձրի շնորհքի արդարութեան ճանապարհով: Իսկ ասելով՝ Քո խօսքի համեմատ խաղաղութեամբ, - յիշատակում է այն մարգարէութիւնները, որոնք կատարուեցին Մանկան գալստով, եւ որ Նա է Խաչի վրայ թափած Իր արիւնով խաղաղութիւն հաստատելու: Դարձեալ՝ մարմնի աչքերով տեսաւ Փրկչին, իսկ հոգու աչքերով՝ փրկութիւնը, որ Նա կատարելու էր Խաչի վրայ» («Յայսմաւուրք», փետրուար ԺԴ):

***Հարց.*** - Իսկ ինչո՞ւ էին նորածիններին քառասուներորդ օրը տանում Տաճար:

***Պատասխան.*** - Հրեաների մօտ Արու զաւակ ունեցող մայրերը նախ եօթ օր պիտի սպասէին իբրեւ անմաքուր, ութերորդ օրը պիտի թլփատէին տղային եւ երեսուներեք օր եւս սպասէին: Այնուհետեւ յաջորդ՝ քառասուներորդ օրը, արու զաւակին պիտի Տաճար տանէին՝ Տիրոջ առաջ հանելու, ընծայելու: Եգիպտոսի գերութիւնից ազատուելուց յետոյ՝ բոլոր անդրանիկները պատկանում էին Տիրոջը, այսինքն պիտի նուիրուեն Տաճարին՝ ծառայելու համար (Ելից 14, 19-20): Բայց անապատում՝ ոսկէ հորթի հետ կատարուած յայտնի դէպքերից յետոյ, բոլոր անդրանիկները ազատուեցին ծառայութիւնից եւ այդ ծառայութեան կանչուեցին միայն ղեւտացիները՝ Ղեւիի սերունդը (Թիւք Գ, 12): Բայց, իհարկէ ոչ ձրիաբար. ամէն արու անդրանիկ ունեցող՝ պէտք է փրկանք վճարէր ղեւտացիներին: Փրկագինը որոշւում էր ըստ կարողութեան:

***Հարց.*** - Ի՞նչ է սովորեցնում մեզ այս ամէնը:

***Պատասխան.*** - Նախ սովորում ենք, թէ ինչպէս է Քրիստոս նուիրուել Աստծուն եւ Նրան ծառայել: Նա որպէս մարդկութեան Անդրանիկ ընծայուեց Աստծուն: Այդ պահից սկսուեց Նրա քահանայական ծառայութիւնը՝ մեր փրկութեան համար: Նա Իր ընծայումով բոլորին փրկագնեց՝ Իր Արիւնը թափելով: Նա մեզ գնեց: Մենք պատկանում ենք Նրան՝ Յիսուսին, եւ Նրա կամքը պիտի կատարենք: Մեզանից է կախուած թէ ո՞ւմ կամքն ենք կատարում՝ աշխարհի՞, թէ՞ Յիսուսի: Այստեղ ընդհանուր եզրեր չկան, եւ չեն կարող լինել: Ոչ մէկը չի կարող ծառայել երկու տիրոջ. կամ մէկին կամ էլ միւսին, ուստի մարդ ինքը պիտի ընտրի իր ճանապարհը: Քառասնօրեայ Յիսուսի ընծայումը մեզ համար օրինակ է, թէ ո՞ւմ պիտի նուիրուել եւ ո՞ւմ ծառայել:

Երկրորդ՝ սովորում ենք երախտապարտ լինել: Մեզ տրուած Փրկութեան համար մենք պէտք է երախտապարտ լինենք: Չէ՞ որ Եգիպտոսի գերութիւնից ազատուելուց յետոյ էր պահանջւում այդ նուիրումը՝ որպէս երախտագիտութեան արտայայտութիւն: Ի մասնաւորի՝ մենք էլ ազատուելով իւրատեսակ եգիպտական գերութիւնից, մեր երախտագիտութիւնը պիտի յայտնենք Աստծուն՝ մեր Փրկչին: Յիշենք Տասը բորոտների շատ ուսանելի պատմութիւնը (Ղուկաս ԺԷ, 11-19). տասը բորոտներ հեռուից Յիսուսին տեսնելով՝ աղաղակեցին ու խնդրեցին, որ բժշկի իրենց (քանի որ բորոտներին արգելուած էր մարդկանց մօտենալ): Եւ Յիսուսն ասաց նրանց. *«Գնացէ՛ք, ձեր անձերը ցոյց տուէք քահանաներին»:* Եւ երբ նրանք գնացին՝ մաքրուեցին: Եւ նրանցից միայն մէկը բժշկուելուց յետոյ յետ դարձաւ ու բարձր ձայնով փառաւորեց Աստծուն: Այդ մէկն էլ սամարացի էր: Յիսուսն ասաց. *«Չէ՞ որ տասն էին: Այն ինն ո՞ւր են»:*

Միայն մէկը մտածեց, որ պէտք է իր երախտիքը յայտնի Բժշկողին: Միւսները յաւանաբար վազեցին տուն, ցոյց տալու տանեցիներին, որ բժշկուել են: Պէտք է զանազանել կարեւորները երկրորդականներից: Առաջինը՝ Աստծուն, յետոյ՝ մնացածը: Յիսուս պահանջում է, որ մարդիկ երախտապարտ լինեն: Մենք էլ շատ ժամանակներ մեր կեանքում նմանուել ենք այդ իններին, այնինչ Աւետարանը մեզանից պահանջում է նմանուել սամարացուն՝ մեր շնորհակալութիւնն ու երախտիքը յայտնելով

- Աստծուն, որը միշտ օգնել է մեզ դժուարին պահերին, միշտ ցոյց տուել ճշմարտութեան ճանապարհը՝ լուսաւորելով մեր միտքն ու կեանքը:

- Մերձաւորներին, բարեկամներին, եղբայրներին եւ բոլոր ծանօթ ու անծանօթներին: Մէկը կռւում է սահմանում՝ պէտք է երախտապարտ լինել նրան, միւսը գրում է լաւ երգեր ու բանաստեղծութիւններ մեր երեխաների համար՝ դարձեալ պէտք է երախտապարտ լինել նրան, մէկ ուրիշը օգնում է կարիքաւորներին՝ նրան էլ պէտք է երախտապարտ լինել. չէ՞ որ այդ մեր գործն է, մենք պէտք է անէինք, բայց հիմա նա է անում:

- Մեր ծնողներին: Ծերանոցների գոյութիւնն այսօր ցոյց է տալիս երախտագիտութեան պակասը: Ի՞նչ կլինէր մեր վիճակը եթէ այդ նոյն ձեւով վարուէին մեր ծնողները մեզ հետ:

Ուրեմն, մենք չպէտք է նմանուենք այսօրուայ բազում իններին, այլ՝ թէկուզ մէկ, բայց շատ աւելի հզօր սամարացուն:

***Հարց.*** - Ինչո՞ւ ենք Սիմէոնին կոչում Ծերունի: Ի՞նչ իմաստով ենք յաճախ կրկնում՝ «Սիմէոն ծերունի լինես» մաղթանքը:

***Պատասխան.*** - Աւանդութեան համաձայն Սիմէոնը մէկն էր եօթանասուն թարգմանիչներից (Ք. Ա. 280-ական թուականներին եօթանասուն թարգմանիչ հաւաքուեցին եւ ձեռնարկեցին Հին Կտակարանի յունարէն թարգմանութիւնը: Այդ թարգմանութիւնը յայտնի է Եօթանասնից թարգմանութիւն անունով): Սիմէոնին յանձնուած էր թարգմանել Եսայի մարգարէի գիրքը: Եւ երբ նա թարգմանում էր *«Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի պիտի ծնի»* համարը (գլ. Է, 14), նրան յայտնուեց, որ մահ չի տեսնի մինչեւ կատարուի այդ մարգարէութիւնը: Այս աւանդու-

թիւնը յայտնի է եղել նաեւ Նարեկացուն, որին եւ նա նուիրել է մի գեղեցիկ տաղ («Տաղ քառասնօրեայ գալստեան Տեառն»): Ու երբ մեկին ասում են՝ «Սիմէօնի ծերունի դառնաս» - ուզում են ասել, որ Սիմէօնի նման երկար տարիների կեանք ունենայ, իղձերն ու նպատակները կատարուեն:

***Հարց.*** - Ինչո՞ւ են մոմերը վառած տանում տուն:

***Պատասխան.*** - Քրիստոս որպէս աշխարհի լոյս՝ եւ վառած մոմերը՝ դրա խորհուրդը: Տունը, ընտանիքը այդ լոյսով լուսաւորելու ձգտումով էլ մոմերը վառած են տանում տուն:

***Հարց.*** - Մի՞թէ դա կապ ունի հեթանոսական կրակի պաշտամունքի հետ:

***Պատասխան.*** - Յիսուսի քառասնօրեայ ընծայումը ոչ մի կապ չունի կրակապաշտ սովորութեան հետ: Առաւել, մեր նախնիները այնպէս են արել, որ հեթանոս այդ սովորութիւնը վերանայ: Ինչպէս գիտենք, հեթանոսական այդ տօնը կապուած է արեւի եւ կրակի պաշտամունքի հետ: Եկեղեցին արգելում է կրակավառութիւնը այդ իմաստով. «Խոտելի է շրջելն զհրով» - թելադրում է Տօնացոյցը: Ճանաչելով Կենդանի Արեգակին և Կենդանի Կրակին (Լոյսին) մեր ընծայումը պիտի ուղղենք դէպի Քրիստոս, այլ ոչ թէ նիւթական ինչ-ինչ բաների:

***Հարց.*** - Իսկ ինչո՞ւ են կրակ վառում եկեղեցիների բակում:

***Պատասխան.*** - Մեր հին եւ նոր կեանքն են ցոյց տալիս: Մի ժամանակ ծառայում էինք նիւթին (կրակը)՝, որն ամէն ինչ այրում եւ ոչնչացնում է՝ աննպատակ ու անիմաստ: Ինչքա՜ն այդպիսի գործեր ենք արել ու ժամանակ վատնել: Դա մարդու կեանքն է առանց Քրիստոսի: Եւ հիմա (մարդու կեանքը Քրիստոսի հետ) ծառայում ենք իսկական, Կենդանի Կրակին, Լոյսին (Եկեղեցին): Խորհուրդը հետեւեալն է. մենք պիտի հիմա ընտրենք, թէ ում ենք ծառայելու՝ նիւթին թէ Արարչին,



եղծանելի կրակին, թէ Կենդանի Կրակին. ահա Նա՝ Կենդանի Կրակը, այսօր Տաճար բերուեց, քառասունօրեայ, որպէսզի յաւիտենականութեան դռները բացուեն, որոնք փակուել էին մեղքի պատճառով:

***Հարց.*** - Ի՞նչ նմանութիւն ոսկէ հորթի եւ Տեառնընդառաջի պատմութեան մէջ:

***Պատասխան.*** - Մովսէսի՝ հրեաների առաջնորդի, բացակայութեան ժամանակ ժողովուրդը հաւաքեց իր ունեցած ոսկին ու ձուլեց հորթի նման մի կուռք ու սկսեց պաշտել: Ինչպէս Տեառնընդառաջի պատմութեան, այդպէս էլ այստեղ նոյն խորհուրդն է՝ անեղծ Աստծու փառքը եւ եղծանելի ոսկեայ հորթը: Ո՞րն ընտրել, Կենդանի Աստծուն թէ ոսկէ հորթը, Կենդանի Քրիստոսին (Կենդանի Կրակը) թէ՛ եղծանելի կրակը: Երբ բացակայում է Աստծու խօսքը (Մովսէսը՝ որպէս Օրէնքի հիմնադիր) ժողովուրդը կմոլորուի եւ կընկնի նիւթապաշտութեան գիրկը (ոսկէ հորթը՝ որպէս հարստութեան, նիւթի խորհուրդ): Մեր ժամանակներում էլ նման իրավիճակներում ենք յայտնւում: Տասնամեակներ զրկուելով Աստուծոյ խօսքից՝ մարդն ուզի թէ չուզի ընկնում է ոսկէ հորթի իշխանութեան տակ, դառնում նիւթապաշտ, արծաթասէր, կրակապաշտ (արեւապաշտ), մոծակապաշտ (արեւելեան կրօնները), համայնապաշտ, աթէիստ (անաստուած) եւ այլն: Ոսկէ հորթից ազատուելու մէկ ճանապարհ կայ. մարդկանց պէտք է ետ վերադարձնել կորցրածը՝ Աստծու խօսքը՝ Աստուածաշունչը, եւ ամէն բան իր տեղը կընկնի:

***Հարց.*** - Մի՞թէ հեթանոս կրօններն էլ առաջացել են Աստուծոյ խօսքի բացակայութեան պատճառով:

***Պատասխան.*** - Ինչքան էլ զարմանալի լինի, պատասխանը միանշանակ է: Ինչպէս միշտ, այս դէպքում էլ պատասխանը գտնում ենք Ս. Գրքում: Տեսնենք, թէ ինչպէս առաջացան բազմապիսի այլակրօն դաւանութիւնները: Այդ մասին ամէն ինչ, անփոփ ձեւով գրուած է Ծննդոց Գ, 1-4 համարներում.

*«Եւ կինն ասաց օձին. "Պարտէզի ծառերի պտուղից ուտում ենք, բայց այն ծառի պտուղից, որ պարտէզի մէջտեղն է, Աստուած ասաց՝ Մի կերէք եւ նրան մի՛ դիպչէք, որ չմեռնէք": Եւ օձն ասաց կնոջը. "Անշուշտ չէք մեռնի: Այլ Աստուած գիտի, որ այն օրը, երբ ուտէք նրանից, ձեր աչքերը կբացուեն եւ աստուածների պէս կլինէք՝ բարին ու չարը իմացող"»:*

Վերջին նախադասութիւնից երեւում է, թէ ինչպէս են առաջանում զանազան կրօններ.

1. Նախ նենգափոխւում է ճշմարտութիւնը,

2. Յետոյ համոզում, թէ՝ Մահ չկայ,

3. Եւ վերջապէս՝ Բոլոր մարդիկ աստուածներ են:

Այս երեք կէտերն էլ հիմնականում բոլոր ոչ քրիստոնեայ կրօնների հիմքն են հանդիսանում: Կնոջ ասածից երեւում է, որ նա ճիշտ չի ներկայացնում Աստուծոյ ասածը: Ս. Գրքին տեղեակ մարդիկ միանգամից կնկատեն, որ Աստծոյ ասածների մէջ չկայ՝ «մի՛ դիպչէք» յաւելումը, որն ասաց Եւան (Ծննդոց Բ 17): Այսինքն, խօսում են Աստծոյ անունից, բայց ասում են մի ուրիշ բան: Այնուհետեւ, նկատում ենք, որ Դրախտային կեանքի մէջ ապրող մարդկանց հետ Աստուած խօսում է Մահուան մասին (Նոր Կտակարանում էլ հակառակն է՝ մահուան մէջ գտնուող մարդկանց հետ Աստուած խօսում է Կեանքի մասին): *«Անշուշտ չէ՛ք մեռնի»* - այսինքն՝ մահ չկայ, մի՛ վախեցէք: Արեւելեան կրօններում այս կէտը շատ ցայտուն է երեւում (նրանք պնդում են, որ մարդը չի մեռնում, այլ տեղափոխւում է մի ուրիշ գոյութեան մէջ՝ մուկ, մծակ, քար, նիւթ եւ այլն): Համայնապաշտները, նիւթապաշտները, արեւապաշտները եւ նման բոլոր ուղղութիւններն անգամ այս կէտում մէկ են: Օրինակ, նիւթապաշտերն այդ խնդիրը լուծում են հետեւեալ կերպ. կեանքը ոչ սկիզբ ունի եւ ոչ էլ վերջ, այսինքն՝ դարձեալ մահ չկայ: Եւ վերջապէս՝ բոլորը ձգտում են մի նպատակի՝ աստուածների նման լինելու: Արեւելեան կրօններում անգամ ինքնակատարելագործման ճանապարհն են ցոյց տալիս այդ նպատակին հասնելու համար. Իսլամում՝ ստրկական հնազանդութեան եւ օրէնքի անխախտ կատարման ճանապարհով, օկուլտ կրօններում (թէոսոֆիա, անտրոպոսոֆիա, ֆաշիզմ կամ ցեղակրօն եւ այլն) որոշ գաղտնի գիտութիւնների իմացութեան ճանապարհով եւ այլն: Իսկ Աւետարանն ասում է. մեզ Բարի Լուր տրուեց՝ Յիսուսը, որին հաւատալով ու վստահելով ազատւում ենք յաւիտենական Մահից ու մտնում Աստծոյ Թագաւորութիւն:

Մի շատ կարեւոր յաւելում եւս. բոլոր կրօններում (նամանաւանդ՝ արեւելեան) բացակայում է պատմականութիւնը: Ոչ մի պատմութիւն կամ գաղափար չի փաստւում պատմականօրէն: Ամէն ինչ մեծամասամբ հիմնուած է առասպելների եւ պատմութիւնների վրայ: Յիշենք Պօղոսի զգուշացումը. *«Ճշմարտութիւնից յետ կդարձնեն ականջներն ու առասպելների յետեւից գնալով կմոլորուեն»* (Բ Տիմ. Դ, 4): Կարծէս մեր օրերի համար է ասուած: Մի ուրիշ տեղ էլ Պետրոսն է գրում. *«Մենք ոչ թէ վարպետութեամբ հնարուած առասպելների հետեւելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը եւ գալուստը, այլ ականատես լինելով նրա մեծափառութեանը»* (Բ Պետ. Ա, 16): Այս է հիմնական տարբերութիւնը Քրիստոնէութեան եւ միւս կրօնների միջեւ: Քրիստոսի մեծափառութեան վկաները այդ լոյսը բերեցին Հայաստան եւ մեր հաւատքը հիմնուած է հէնց այդ Լոյսի վրայ (յիշենք Աբգար թագաւորի պատմութիւնը): Մնացած բոլոր պառաւական առասպելները բխում են մի աղբիւրից՝ նոյն Բանսարկուից, եդեմական պարտէզի Օձից:

***Հարց.*** - Ի՞նչ պատմական փաստեր կան յօգուտ Քրիստոսի եւ Քրիստոնէութեան:

***Պատասխան.*** - Դրանք շատ-շատ են: Բերենք մի քանի օրինակ միայն: Յիսուսի ժամանակներում ապրել եւ գործել են հեղինակաւոր պատմիչներ, որոնց նպատակն էր միայն ճշմարտութիւնը գրել եւ ոչ թէ առասպելներ յօրինել: Քրիստոսի մասին շատերն են գրել իրենց երկերում՝ թէ՛ հրեայ, թէ՛ հեթանոս եւ թէ՛ քրիստոնեայ հեղինակներ: Վերջին-

ներից կարիք չկայ օրինակներ բերել, որովհետեւ ամբողջ Մատենագրութիւնը Յիսուսի մասին է (յատկապէս Հայ պատմագրութիւնը): Աւելի կարեւոր են քրիստոնէութեան հակառակ եղողների վկայութիւնները, մասնաւորապէս հռոմէացի, յոյն եւ հրեայ պատմիչների: Ամենից յայտնիներն են.

1. Տակիտոսի վկայութիւնը (մօտ. 116 թ.). «Ներոն կայսրը Հռոմի մէջ հրահանգել էր հրդեհի պատճառը քրիստոնեաների վրայ գցել... չարաչար պատժում էր իրենց համար ատելի այդ մարդկանց, որոնց ժողովուրդը քրիստոնեայ էր անուանում: Այս անուանումը նրանք վերցրել էին Քրիստոս անունով մէկից, որին Տիբերիոսի ինքնակալութեան օրօք Պոնտացի Պիղատոսը մահուան դատապարտեց» (Տակիտոս, Տարեգիրք, ԺԵ, գլ. ԽԴ): Այստեղ ակնարկուած է Հռոմի 64 թ. հրդեհը, երբ նահատակուեցին Պողոս եւ Պետրոս առաքեալները:

2. Սուետոնիուսի վկայութիւնը (մօտ 120 թ., «Տասներկու կեսարների կեանքը» գրքից). «Կղօդիոս /Կլաւդիոս/ կայսրը Հռոմից վտարեց այն հրեաներին, որոնք Քրիստոսի ազդեցութեան տակ անկարգութիւնների պատճառ էին հանդիսանում»:

Հռոմեացիներից յայտնի է նաեւ Պլինիոսի վկայութիւնը (112 թ.), Ադրիանոս կայսեր հրովարտակը, Ղուկիանոս Սամոսացու (Բ դ) վկայութիւնը եւ այլն:

Հրեաներից յիշենք Յովսէփոսին (ծնուել է Յ. Տ. 37 թ.), որի երկերը լեցուն են Յիսուսի մասին տեղեկութիւններով (թէ՛ «Հռոմէական պատերազմում» եւ թէ՛ «Հրէական հնախօսութիւններում») եւ Թալմուդը (հրէական աւանդութիւնները պարունակող գիրքը): Այստեղ յիշատակուած են Յիսուսի կուսական ծնունդը, հրաշքները, մահը, գերեզմանի դատարկ լինելը եւ այլն:

Հեթանոս եւ հրեայ պատմիչների գրածները ցոյց են տալիս նաեւ, որ Քրիստոսի առաջին հակառակորդները, չհաւատալով Նրա աստուածութեանը եւ հրաշքներին, այնուամենայնիւ Նրա պատմական անձ լինելը չէին ուրանում:



# ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՒԱՆԱՆՔ, ԾԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ

***Հարց.*** - Ի՞նչ է Աստուածաբանութիւնը:

***Պատասխան.*** - Աստուածաբանութիւնը գիտութիւն է, որի առարկան Աստուած է: Ի տարբերութիւն միւս գիտութիւնների, Աստուածաբանութեան տարրերը տրուած են «ի սկզբանէ» յայտնութեան միջոցով, սակայն ոչ թէ միանգամից, այլ մարդու ըմբռնողութեան զարգացման համապատասխան: Այլ գիտութիւններ ուսումնասիրում են որոշակի նիւթ եւ չեն կարող ողջ Տիեզերքի մասին դատողութիւններ անել, առաւել եւս մարդու մտքից բարձր թռիչք գործել: Աստուածաբանութիւնը հիմնուած է հաւատի վրայ, եւ կարող է բացատրել թե ինչպէս է առաջացել Տիեզերքը, կեանքը, մարդը, ինչ է սպասւում նրան եւ այլն: Հաւատը անհրաժեշտ նախապայման է՝ իբրեւ մեկնակէտ:

***Հարց.*** - Ի՞նչ է Դաւանանքը:

***Պատասխան.*** - Յայտնութիւնից քաղուած եւ եկեղեցու կողմից իբրեւ ճշմարտութիւն հռչակուած հաւատի սկզբունքը կոչւում է Դաւանութիւն:

Դաւանանքը սահմանելու անհրաժեշտութիւնը առաջ է եկել դեռեւս Գ-Դ դարերում, երբ սխալ էին մեկնաբանում Քրիստոսի վարդապետութիւնը: Հէնց այդ ժամանակներում էլ սահմանուեց «Հաւատամքը»: Դաւանանքը կրօնական կեանքի զսպանակն է: «Դաւանութեամբ հաւատոյն՝ Աստուած ի մարդ հանգչի եւ մեք յԱստուած յամիմիք», - գրում է Տաթեւացին:

***Հարց.*** - Ի՞նչ է «Հաւատամքը»:

***Պատասխան.*** - 325 թուականին Նիկիա քաղաքում գումարուեց Առաջին Տիեզերական Ժողովը, որին մասնակցում էին 318 եպիսկոպոսներ: Ժողովն անուանուեց Տիեզերական, քանի որ ներկայացնում էր

համայն Քրիստոնէական եկեղեցին: Կոստանդիանոս կայսրը հրովարտակ ուղարկեց Տրդատ արքային՝ Ս. Գրիգորի հետ մասնակցելու այդ ժողովին: Բայց Տրդատը մտածեց, որ իր հեռանալը կարող է ազատ արձակել Շապուհի ձեռքերը եւ չգնաց: Ս. Գրիգորն էլ հարմար չգտաւ գնալ եւ որոշեցին ուղարկել Արիստակէսին՝ Ս. Գրիգորի որդուն: Ժողովը հաստատեց «Հանգանակը» եւ ընդունեց եկեղեցական կեանքը կարգաւորող որոշ կանոններ (որոնք յայտնի են "Ա Տիեզերական ժողովի քսան կանոններ" անունով): Երբ Արիստակէսը վերադարձաւ եւ ներկայացրեց ժողովի բանաձեւն ու կանոնները, Ս. Գրիգոր Լուսաւորիչը եպիսկոպոսական ժողով հրաւիրեց, որը քննարկեց որոշումները, եւ ընդունուեց նիկիական բանաձեւերը: Վերջում Ս. Գրիգոր Լուսաւորիչը աւելացրեց. «Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն»:

Հայ Եկեղեցում, ամէն կիրակի, Պատարագի ժամանակ, ընթերցւում է «Նիկիոյ Հանգանակը» կամ «Հաւատամքը»: Ընթերցման պահին, որպէս կանոն, հաւատացեալները ձեռքի ափերը իրար սեղմելով մօտեցնում են կրծքին՝ ի նշան համաձայնութեան «Հաւատամքի» դրոյթների: «Հաւատամքից» յետոյ ընթերցւում է նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի յաւելումը: Ահա «Հանգանակը».

«(1) Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն Ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

(2) Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած Աստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ո՛չ արարած:

(3) Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով:



Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

(4) Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, (5) յերրորդ աւուր յարուցեալ, (6) ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

(7) Գալոց է նովին մարմնով եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ Թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

(8) Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին. յանեղն եւ ի կատարեալն. Որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան. քարոզեաց զառաքեալսն. բնակեցաւ ի սուրբսն:

(9) Հաւատամք եւ ի միմիայն յընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի. (10) ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

(11) Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից, հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից, (12) եւ ի կեանսն յաւիտենականս»:

Ինչպես տեսնում ենք «Հանգանակը» բաղկացած է 12 մասից եւ մանրամասնօրէն ներկայացնում է հաւատի այն հանգրուանները, որոնց վրայ կառուցուած է Քրիստոնէական հաւատի շէնքը:

***Հարց.*** - Որո՞նք էին Նիկիայի ժողովի հրաւիրման պատճառները:

***Պատասխան.*** - Նախնի եկեղեցում շատ մոլորեցուցիչ «վարդապետներ» էին առաջ եկել: Այդ «վարդապետութիւնները» կարող էին մոլորեցնել ժողովրդին եւ բաժանումներ առաջացնել եկեղեցում: Նախանիկիական եկեղեցում այդպիսի «վարդապետ» էր Արիոս անունով մէկը: Ուստի եւ, անհրաժեշտութիւն առաջացաւ սահմանելու դաւանութեան սկզբունքները, որի համար էլ հայրապետները հաւաքուեցին քննելու եւ ընդունելու դաւանութեան համապատասխան բանաձեւերը: «Գիրք Թղթոցը» այդ մասին գրում է.

«... Հաւատում եմ, որ մեզ համար մարդացաւ, ինչպես սովորեցնում է Ս. Գիրքը, եւ 318 եպիսկոպոսներ հաւաքուեցին Նիկիայում, յետոյ 150՝ Կոստանդնուպոլսում եւ 200՝ Եփեսոսում, որոնք հաճեցան եւ հաստատեցին

հաւատը: 318 հայրապետները դատապարտեցին մոլորեցուցիչներին՝

- Արիոսին՝ որն ասում էր, թէ՝ Որդին Հօր բնութիւնից չէ:

- Մակեդոնին՝ որն ասում էր, թէ՝ Սուրբ Հոգին փոքր է Հօրից եւ Որդուց:

- Պողոս Սամոսատցուն՝ որն ասում էր, թէ՝ Քրիստոս Յիսուս մարդ էր եւ իմաստութեամբ էր զօրանում:

- Մանիին, Մարկիոնին, Բարդեծանին, Եւտիքէսին՝ որոնք ասում էին, թէ՝ Յիսուս երեւոյթ էր, տեսիլք, երեւում էր ոչ ստուգապէս:

- Ապոլինարիոսին՝ որն ասում էր, թէ՝ միայն մարմին առաւ Կոյսից, հոգի, շունչ եւ միտք չառաւ:

- Նեստորին՝ որն ասում էր, թէ՝ Մարիամը Աստուած չծնեց, այլ մարդ արարած...» (էջ 66-67):

Այս եւ նման շատ հարցերին վերջնական պատասխան տալու համար գումարուեցին Տիեզերական Ժողովներ, որոնց ընդունած բանաձեւերում էլ վերջնականապէս սահմանուեցին հաւատի դրոյթները:

***Հարց.*** - Ի՞նչ է նշանակում «Հանգանակի» առաջին մասը՝ «Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն Ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից»:

***Պատասխան.*** - Այս մասում ամփոփուած են հաւատի հետեւեալ կէտերը.

ա. Աստծոյ գոյութիւնը,

բ. Մէկ Աստուած է, բայց ունի երեք անձ (Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Սուրբ Հոգի Աստուած): Մէկ Աստծու մէջ դաւանում ենք երեք անձ եւ երեք անձի մէջ՝ մէկ Աստուածութիւն՝ Երրորդութիւն:

գ. Ս. Երրորդութեան առաջին անձն Հայր Աստուած է:

դ. Երեքսրբեան Աստուած ստեղծել է երկինքը, երկիրը եւ նրանց մէջ եղած ամէն արարածներ՝ երեւելի (որ տեսնում ենք աչքով) եւ աներեւոյթ (որ չենք տեսնում աչքով):

ե. Այս ամէնը ղեկավարում եւ կառավարում է Աստուած:



***Հարց.*** - Մի՞թէ Աստծոյ գոյութիւնը իրականութիւն է:

***Պատասխան.*** - Տեսնելով տիեզերքի կարգաւորութիւնն ու նպատակը, կենդանութիւնը, բոյսերից մինչեւ մարդ եղած աստիճանաւորութիւնը, մարդու կեանքը եւ այլն, գալիս ենք Աստծոյ գոյութեան հաւատին: Առանց Աստծոյ աշխարհն ու նրա մէջ եղած ամէն ինչ անբացատրելի եւ անհասկանալի կլինէր:

Եւ շատ տարօրինակ կլինէր, եթէ մարդիկ ոչ մի գաղափար չունենային իրենց Ստեղծողի մասին եւ կամ Աստուած Իր անունը անյայտ թողնէր արարածներից, որոնց ստեղծել է իր սիրուց դրդուած: Ամբողջ աշխարհը Աստծու արարչական գործն է եւ վկայ է նրա ամենակարողութեան: Մարդկային բաները նախ պէտք է ճանաչենք, որ յետոյ սիրենք, իսկ աստուածայինը՝ պէտք է նախ սիրենք, որ յետոյ ճանաչենք:

Բաւական է որ մարդ հոգով ու բանականութեամբ փոքր ի շատէ կատարեալ լինի, անձնական թերութեամբ կամ կամաւոր մտադրութեամբ բթացրած չլինի իր հոգու ընդունակութիւնը՝ անպատճառ անբաժան կլինի ճշմարիտ հաւատից, կիմանայ իր արարուած լինելն ու Արարչի զօրութիւնը:

Հաւատալ Աստծուն՝ նշանակում է ճշմարիտ մարդ լինել, Աստծու ճշմարիտ պատկերը լինել: Աստծուն անդրադարձնել իր հոգու հայելու մէջ: Ինչպէս որ ծուռ հայելու մէջ չենք տեսնի մեր իսկական կերպարանքը, այնպէս էլ մեղքերով շաղախուած հոգին չի կարող իր մէջ իսկութեամբ արտացոլել Աստծու անհասանելի պատկերը: Անգամ Պլատոնն էր ասում, որ միայն Աստծուն նմանուելով կարող ենք նրա խորհուրդները հասկանալ: Մարդու հաւատը անպայմանօրէն ինչ որ ձեւով արտայայտւում է իր կեանքում. նա Աստծու պատկերը եւ նմանութիւնն է դրսեւորում զանազան իրավիճակներում: Հին Կտակարանի Յովսէփը, որին եղբայրները վաճառեցին ստրկութեան, անարդարօրէն ձերբակալւում է: Այդ պատմութեան մէջ Յովսէփը կարծես պատկերում է այն Աստծուն որին հաւատում է: Եբրայեցիներին ուղղուած Պօղոսի նամակի ԺԱ գլխում (յայտնի է «Հաւատի հերոսների գլուխ»

անունով) խուսում է հաւատի մասին, բայց պատմում է ոչ թէ այն, ինչ քարոզել են նրանք, այլ՝ ինչ արել եւ ապրել են:

***Հարց.*** - Մեզ սովորեցնում էին՝ սկսած մանկապարտէզից ու դպրոցից, որ Աստծու գաղափարը եւ Աստուածաշունչը հակասում են գիտութեանը: Ինչպէ՞ս համատեղել:

***Պատասխան.*** - Այո՛, եթէ գիտութիւնը դրուած է սխալ հիմքի վրայ: Ս. Գիրքը եւ «չԳիտութիւնը» իրօք որ չեն համաձայնւում իրար հետ ոչ մի բանում: Ենթադրենք մի պահ, որ հինգ հարիւր տարի առաջ Աստուածաշունչը ամէն ինչով համապատասխանէր այն ժամանակի գիտական տուեալներին: Այժմ այդ գրքին նայող չէր լինի, որովհետեւ գիտութիւնը զարգացել եւ փոխուել է, իսկ Աստուածաշունչը կայ ու մնացել է նոյնը: Եւ եթէ այսօր կայ թէկուզ մէկ փաստ, երբ Աստուածաշունչը չի համապատասխանում արդի գիտութեանը, նշանակում է դեռ գիտութիւնը զարգանալու տեղ ունի եւ ոչ հակառակը: Պատմութիւնը ցոյց տուեց, որ ամէն նորամուծութիւն ժամանակաւոր է եւ վաղ թէ ուշ դեն կնետուի, իսկ Ս. Գիրքը ապրելով հազարամեակներ եւ անցնելով բազում փորձութիւնների ու քննութիւնների միջով այսօր էլ մնաց անփոփոխ եւ ճիշտ: Աստուածաշունչը նպատակ չի ունեցել ապացուցելու Աստծու գոյութիւնը: Դրա անհրաժեշտութիւնը չկար: Նա մեզ բերեց այն, ինչին մարդը երբեւէ չէր կարող հասնել: Ս. Գրքի առաջին բառերն իսկ՝ *«Սկզբում Աստուած...»,* Աստծոյ գոյութեան ճշմարտացիութիւնն են հռչակում:

Սաղմոսներից մէկում մի մարդ կասկածեց Աստծու գոյութեան վրայ. «Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած» (Սաղմոս ԺԳ, 1): Բնագրում *«անզգամ»* բառը բնորոշում է ոչ թէ բանական, կրթութեան պակաս կամ տկարութիւն ունեցող մարդուն, այլ՝ բարոյական թերութիւն ունեցող մարդուն: Այդ մարդու համար իրօք Աստուած պէտք չէ: Աստուած խանգարում է նրա ծրագրերին: Կլինի՞ ժամացոյց՝ առանց ժամագործի, երկաթգիծ ու գնացք՝ առանց կառավարողի, տուն՝ առանց շինարարի, պարտէզ՝ առանց պարտիզպանի...: Իսկ *«Երկնքում Բնակւողը ծիծաղում է»* (Սաղմոս Բ, 4):

Նայենք մեր շուրջը եւ կտեսնենք Աստծու գոյութեան բազմաթիւ փաստեր: *«Երկինքն է պատմում Աստծու փառքը»* - գրում է սաղմոսերգուն (Սաղմոս ԺԸ, 1):

Աստուածաշունչը գիտական ձեռնարկ չէ, բայց այն տեղերում, ուր խօսում է գիտութեան մասին՝ բացարձակ ճիշտ է: Բազում օրինակներից բերենք մի քանիսը Յոբի գրքից.

Յոբ, ԻԶ, 7.

*«Հիւսիսը դատարկ տեղի վրայ է տարածում եւ երկիրը ոչնչի վրայ է կախում»:*

Յայտնի փաստ է, որ Երկնակամարի հիւսիսում (բեւեռի մօտ) մի տարածութիւն կայ, որն անզէն աչքով տեսանելի չէ, ուր դատարկութիւն է տիրում: Երեք հազար տարի առաջ Յոբն այդ մասին իմանալ չէր կարող (չկային ժամանակակից հեռադիտակները): Հին աշխարհի բոլոր զարգացած մարդիկ կարծում էին, որ երկիրը ինչ որ բանի վրայ է դրուած (փղերի, կրիաների, ձկների եւ այլն), այնինչ Յոբի ասածը ճիշտ դուրս եկաւ:

Յոբ, ԼԸ, 31-33.

*«Բազմաստեղի կապերը կարո՞ղ ես կապել,*
*Կամ Հայկի կապերը կարո՞ղ ես արձակել:*
*Մազարովքը ժամանակին կարո՞ղ ես հանել,*
*Ու Արջին եւ իր զաւակներին առաջնորդել:*
*Երկնքի կանոնները գիտե՞ս,*
*Նրա իշխանութիւնը երկրի վրայ կարո՞ղ ես դնել»:*

Այստեղ՝ Բազմաստեղը Բազումքն է (յունարէն՝ Պլէադա), Հայկը՝ Օրիոն համաստեղութիւնը, Մազարովքը՝ Կենդանակերպը (Զոդիակ): Բնագրում (եբրայերէնում) Բազմաստեղը՝ Քիմն է, որ նշանակում է՝ Առանցք (յունարէնում Պլէադա նշանակում է նաւարկել): Յոբի ասածից հասկանալի է դառնում, որ Երկնակամարը կապուած է Բազումքի հետ եւ նրա առանցքը գտնւում է այնտեղ: Մնացած աստղերը «լողում են»

դէպի Բազումք: Այժմ բացէք ցանկացած Աստղագիտական տեղեկատու եւ կհամոզուէք, որ Ապէքսը գտնւում է Բազումքում (դէպի ապէքս են շարժւում երկնակամարն ու մեր միգմածութիւնը): Յոբը որտեղի՞ց գիտէր այդ մասին...:

***Հարց.*** - Եթէ Աստուածաշունչը, իրօք աստուածաշունչ է՝ այսինքն Աստծոյ շնչով է գրուած, ի՞նչ ապացոյցներ կան նրա վաւերականութեան:

***Պատասխան.*** - Հարկ է նշել, որ Աստուածաշունչն ամբողջութեամբ միշտ էլ հեղինակների կողմից դիտուել է որպէս Աստծոյ խօսք՝ Աստծու ասած խօսք (Հռոմ. Գ, 2, Գործք Դ, 24 եւ այլն): Յաճախ էլ Աստուածաշունչը Աստուծոյ մասին գրում է այնպէս, կարծէս Աստուած եւ Աստուածաշունչը հոմանիշներ են: Օրինակ. *«Քանի որ Գրուածն ասում է փարաւոնին՝ Ես քեզ նշանակեցի...»* (Հռոմ. Թ, 17, Ելից Թ, 16): Այստեղ Գրուած ասելով հասկանում են Աստուած եւ հակառակը: Այսինքն Աստուածաշունչը (Ս. Գիրքը) նոյնացւում է մարդկանց հետ Աստուածաշնչի միջոցով խօսող Աստծու հետ: Այդ պատճառով էլ Հայաստանեայց եկեղեցում, Ս. Պատարագի ժամանակ, մինչ Ս. Գրքի ընթերցանութիւնը սարկաւագն ասում է՝ «Պռօսխումէ» եւ այնուհետեւ՝ «Ասէ Աստուած», այսինքն՝ Ուշադրութիւն, Աստուած է խօսում:

Ուստի, շատ կարեւոր է իմանալ Ս. Գրքի վաւերականութեան մասին: Որպէս օրինակ վերցնենք Նոր Կտակարանը՝ համեմատելով այն միւս հին գրքերի եւ հեղինակների հետ:

Նոր Կտակարանը Յիսուսի մասին եղած պատմական տեղեկութիւնների հիմնական աղբիւրն է: Այդ պատճառով է, որ թէ՛ 19-րդ եւ թէ՛ 20-րդ դարերում բազում փորձեր են արուել եւ արւում կասկածի տակ դնելու աստուածաշնչեան փաստաթղթերի արժանահաւատութիւնը: Այդ գործը մինչեւ այժմ էլ չի դադարում, թէեւ ամբաստանութիւնները անարժանահաւատութեան մէջ որեւէ պատմական հիմք չունեն, իսկ դրանցից շատերը հերքուել են հնագիտական հետազոտութիւններով եւ յայտնագործութիւններով: 20-րդ դարի սկզբին հնագէտների արած յայտնագործութիւնները հաստատեցին Նոր Կտակարանի ձեռագրերի ճշտութիւնը: Առաջ կարծում էին, թէ Նոր Կտակարանը գրուել է 2-րդ դարում կամ աւելի ուշ, այսինքն Յիսուսի ժամանակներից մի քանի սերունդ յետոյ: Բայց այսօր մենք, միանգամայն համոզուած կարող ենք պնդել, որ չկայ որեւէ լուրջ հիմք ենթադրելու, թէ Նոր Կտակարանի մի որեւէ գիրք գրուել է մ. թ. 80 թուականից յետոյ: Այս փաստն այսօր ընդունում են մեր օրերում Աստվածաշնչի ամենայայտնի քննադատները:

Պատմա - համեմատական քննութեամբ կարելի է քննել նաեւ տեքստերի յաջորդականութիւնը: Այլ կերպ ասած (երբ մեր տրամադրութեան տակ չունենք բնագիրը), որքա՞ն են ճշգրիտ մեր ձեռքի տակ եղած պատճէնները. քանի՞ ձեռագիր աղբիւր կայ, եւ ինչպիսի՞ ժամանակամիջոց է բաժանում բնագիրը մեզ յայտնի պատճէնից:

Այսպէս, Թուկիդիդէսի «Պելեպոնէսեան պատերազմի Պատմութիւն»-ից (Ն. Ք. 460-400 թթ.) ընդամէնը պահպանուել է ութ ձեռագիր, որոնք թուագրւում են մօտաւորապէս Յ. Տ. 900 թուականով, այսինքն նրա մահուանից 1300 տարի անց:

Հերոդոտոսի «Պատմութեան» ձեռագրերն էլ են թուագրւում ուշ ժամանակաշրջանով, եւ սակայնոչ մի դասական բանասէր կասկածի տակ չի առնում Հերոդոտոսի կամ Թուկիդիդէսի վաւերականութիւնը միայն այն բանի համար, որ նրանց երկերի յայտնի ձեռագրերը իրենց բնագրերից բաժանուած են 1300 տարով:

Արիստոտելն իր «Պօէտիկան» գրել է մօտաւորապէս Ն. Ք. 343 թ., իսկ մեզ յայտնի ամենահին պատճէնը թուագրուած է Յ. Տ. 1100 թուականով: Տարիների տարբերութիւնը գրեթէ 1400 տարի է, իսկ ձեռագրերն ընդամէնը հինգն են:

Գաղիական պատերազմների պատմութիւնը Կեսարը գրել է Ն. Ք. 58 եւ 50 թթ. միջեւ ընկած ժամանակամիջոցում, եւ նրա վաւերականութիւնը ստուգւում է 1000 տարի յետոյ արուած ինը կամ տասը պատճէնների հիման վրայ:

Այս ամենին հակառակ, Նոր Կտակարանի ձեռագրերի քանակը

բազմաթիւ է: Այսօր յայտնի են Նոր Կտակարանի աւելի քան քսան հազար ձեռագրեր: Համեմատութեան կարգով ասենք, որ յայտնի է հռչակաւոր «Իլիականի» 643 պատճէն, որը ձեռագիր աղբիւրների առատութեամբ երկրորդն է՝ Նոր Կտակարանից յետոյ:

Նոր Կտակարանի կազմելու եւ մեզ հասած ամենավաղ օրինակի միջեւ ընկած ժամանակահատուածը այնքան չնչին է, որ կարելի է այն նոյնիսկ անտեսել: Ուստի անհիմն են կասկածները եւ կարող ենք իրօք համոզուած ասել, որ Մատեանը մեզ է հասել իր սկզբնական տեսքով: Նոր Կտակարանի գրքերի բնօրինակութիւնը եւ ճշգրտութիւնը կարելի է համարել վերջնականապէս հաստատուած: Մատենագիտական չափանիշների կիրառումը Նոր Կտակարանի նկատմամբ հանգեցնում է մեզ այն համոզիչ եզրակացութեան, որ ձեռագիր պատճէնների քանակով այն զգալիօրէն գերազանցում է անտիկ դարաշրջանի ցան-կացած ստեղծագործութեան, այսինքն համարձակօրէն կարող ենք պնդել, որ մեր ձեռքի տակ է Նոր Կտակարանի վաւերական տեքստը:

Այս ամէնը վկայում է, որ կարելի է անժխտելի համարել Նոր Կտակարանի վաւերականութիւնը, քանի որ Հին Աշխարհից մեզ հասած եւ ոչ մի վաւերագիր չունի Նոր Կտակարանի համեմատ այդքան շատ տեքստային եւ պատմական փայլուն վկայութիւններ:

***Հարց.*** - Եթէ երեքանձեայ է Աստուած, ապա ինչո՞ւ է Հին Կտակարանը պնդում, թե մէկ է Աստուած:

***Պատասխան.*** - Եսայի մարգարէի գրուածը, թէ՝ Ես եմ Աստուած, եւ ինձանից բացի չկայ ուրիշը, - ոչ թէ անձերի համեմատութիւն նկատի ունի, այլ՝ չաստուածների: Իսկ Երրորդութեան անձերի՝ Աստուած լինելու մասին կարող ենք հանդիպել Հին Կտակարանում համարեա ամենուրեք: Այսին-քն հաւատում ենք երեքանձեայ Երրորդութեանը եւ ոչ թէ երեք անձերի:

***Հարց.*** - Ինչպէ՞ս պատկերացնենք Երրորդութիւնը՝ մէկ Աստուած, բայց երեք անձ:



***Պատասխան.*** - Աստուծոյ Երրորդութիւն լինելու գաղափարը սերտ-օրէն կապուած է Քրիստոնէութեան հետ, եւ առանց այդ գաղափարի անհնար է պատկերացնել այն: Այդ է պատճառը, որ Նախնի Եկեղեցում միշտ վիճել եւ բանավիճել են այդ հարցի շուրջ: «Հաւատամքը» կազ-մելու նպատակն է եղել Երրորդութեան դաւանութեան ամրապնդումը ու Նրա ամէն մի անձի մասին հաւատի տարրերը սահմանելը: Դարեր շարունակ վիճել են այդ մասին եւ անգամ մեր օրերում էլ առաջանում են հոսանքներ, որոնք ժխտում են Երրորդութիւնը («Եհովայի վկաներ» կամ «Եհովիստներ» կոչուած աղանդը): Հիմնական հերձուածները, որ առաջացել են Նախնի Եկեղեցում, միշտ հանդէս են եկել Երրորդու-թեան դէմ՝ ինչ որ ձեւով նսեմացնելով Երրորդութեան որեւէ անձի դերը կամ ուղղակի ժխտելով նրա աստուածային ծագումը: Կարելի է ասել, որ Քրիստոնէութեան հիմքն է կազմում Երրորդութեան գաղափարը: Աստուած Ս. Գրքի առաջին էջերում սկսում է յայտնել մարդկանց Երրորդութեան մասին: Այդ Յայտնութիւնը հետզհետէ զարգանում է մինչեւ Նոր Կտակարանի ժամանակները՝ երբ Երրորդութեան երկրորդ անձը՝ Քրիստոս յայտնուեց մարմնապէս, իսկ որոշ ժամանակ անց նաեւ Երրորդութեան երրորդ անձը՝ Սուրբ Հոգին աշխարհ իջաւ (Հոգե-գալուստ): Ս. Գրքում «Երրորդութիւն» բառը չի օգտագործուած, բայց Աստուածային Յայտնութեամբ տրուած է Երրորդութեան գաղափարը Ս. Գրքի էջերում: Երրորդութիւնը բարդ է պատկերացնել, քանի որ մարդկային կարողութեամբ չենք կարող այն ընկալել: Եկեղեցու Հայ-րերը ժամանակին տարբեր առիթներով միշտ խօսել են Երրորդութեան մասին, տարբեր ձեւերով այն հասկանալի դարձնելու համար: Այսպէս՝

Արմատ կենդանութեան - Հայր Աստուած,

Ոստ անթառամ - Որդի Աստուած,

Պտուղ անմահ - Սուրբ Հոգի Աստուած,

կամ օրինակ՝

Արեգակը - Հայրը,

Արեգակի ճառագայթները (լոյսը) - Որդին,

Արեգակի ջերմութիւնը - Սուրբ Հոգին:

Բերուած օրինակներում չենք կարող բաժանել ծառը առանձին-առանձին արմատի, ոստի եւ պտուղի, իսկ արեգակից՝ անջատել լոյսն ու ջերմութիւնը: Մի դէպքում ծառը ճանաչում ենք պտղով, մի ուրիշ դէպքում՝ ոստով կամ արմատով: Իսկ արեգակը ճանաչում ենք լոյսով կամ ջերմութեամբ: Երկու դէպքում էլ երեք բաղկացուցիչ մասերը կազմում են մի անբաժանելի ամբողջութիւն: Այդպէս էլ Երրորդութիւնը՝ մի դէպքում հանդէս է գալիս որպէս՝ Հայր, մի ուրիշ դէպքում՝ Որդի եւ մի երրորդ դէպքում էլ՝ Սուրբ Հոգի եւ այս երեքը մի են:

Ահա մի քանի օրինակ եկեղեցու հայրերի Երրորդութեան սահմանումներից.

«Երրորդութիւնը նոյն բնութեամբ է՝ երեք դէմքով, մի զօրութիւն, մի աստուածութիւն, ամէն ժամ Հայր, ամէն ժամ՝ Որդի եւ ամէն ժամ՝ Սուրբ Հոգի» (Կիւրեղ Ալեքսանդրացի):

«Մի Աստուածութիւն ենք խոստովանում, ի տարբերութիւն բազմանուն չաստուածների: Նրանից, Նրա նման մի Ծնունդ է՝ անսկիզբ, արարչակից, համազօր, համագործ: Եւ մի Սուրբ Հոգի՝ մշտնջենաւոր, բխում է Նրանից՝ արարչակից եւ զօրակից Հօր եւ Որդու» (Եզնիկ):

«Միասնական Երրորդութիւնը երեք անձ է, բայց մի Աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկական էութիւն, մի ինքնական էութիւն, մի ինքնակալ էութիւն. մի է եւ թագաւորութիւնը, մի է արքայութիւնը, մի է Տէրութիւնը, մի է իշխանութիւնը, մի է փառաւորութիւնը, մի բնութիւն, մի հաւասարութիւն. մի է սրբութիւնը, մի է լուսաւորութիւնը, մի է ընտրողութիւնը, մի է կամքը, մի խորհուրդ, մի փառք, մի պատիւ, մի յոյս, մի սէր, մեծ, հզօր, կարող, անանց, անսկիզբն, անվախճան...» (Մանդակունի):

***Հարց.*** - Երրորդութեան մասին ի՞նչ վկայութիւններ կան Ս. Գրքում:

***Պատասխան.*** - Երրորդութեան մասին ինչ որ կարելի է հասկանալ եւ ընդունել՝ տրուած է մեզ Աստուածային յայտնութեան միջոցով՝ Ս. Գրքում:



Հայր Աստուած - Յովհ. Զ, 27, Ա Պետր. Ա, 22, Ա Կորնթ. Թ, 6 եւ այլն:

Որդի Աստուած՝ Յիսուս Քրիստոս - Գործք. Ի, 28, Հռոմ. Թ, 5, Ա Տիմ. Գ, 16, Տիտոս Բ, 13, Յովհ. Ա, 1 եւ այլն:

Սուրբ Հոգի Աստուած - Գործք Ե, 3-4, Ա Կորնթ. Գ, 16 եւ այլն:

Երրորդութեան մասին ընդհանրապէս՝ Սաղմոս ՁԸ, 3, Եբր. Թ, 14, Յովհ. ԺԴ, 16, Մատթ. ԻԸ, 19 եւ այլն:

Ս. Գրքի առաջին տողերից սկսած Աստուած յայտնում է մեզ այն ամէնը, ինչ անհրաժեշտ է, առանց որի չենք կարող մի քայլ անգամ անել: Օրինակ՝

Ծննդոց Ա, 1-2.

*«Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը: Եւ երկիրը անձեւ ու դատարկ էր եւ անդունդի վրայ խաւար կար: Եւ Աստծու Հոգին շարժւում էր ջրերի վրայ»:*

Ընդհանրապէս Ծննդոց առաջին գլուխը ներդաշնակօրէն համապատասխանում է այսօրուայ գիտական թէ՛ պատկերացումներին, թէ՛ աշխարհաստեղծման ընթացքի յաջորդականութեանը եւ թէ՛ մարդու առաջացման խնդիրների լուսաբանմանը: Արդի պատկերացմամբ աշխարհաստեղծմանն անհրաժեշտ տարրերը, որոնք աշխարհաստեղծման հիմքն են կազմում, հետեւեալն են. տարածութիւն, ժամանակ, նիւթ, շարժում եւ զօրութիւն: Այս ամէնն էլ առկայ է վերը բերուած տողերում.

*«Սկզբում»* - ժամանակ,

*«Աստուած ստեղծեց երկինքը»* - տարածութիւն,

*«Երկիր»* - նիւթ,

*«Աստծոյ Հոգին»* - զօրութիւն,

*«շարժւում էր ջրերի վրայ»* - շարժում:

Երկրաբանութիւնն այսօր ընդունում է աշխարհաստեղծման փուլերի հետեւեալ յաջորդականութիւնը. նիւթ, խաւար, շարժում, լոյս եւ ջերմութիւն: Ծննդոցի առաջին գլխում աշխարհաստեղծման փուլերը նկարագրուած են այդ նոյն յաջորդականութեամբ.

Նիւթ - *«երկիր»* (Ծննդոց Ա, 1),

խաւար - *«խաւար կար անդունդի վրայ»* (Ծն. Ա, 2),
շարժում - *«Աստծոյ Հոգին շարժւում էր»* (Ծն.Ա, 2),
լոյս - *«եւ լոյս եղաւ»* (Ծն. Ա, 3),
ջերմութիւն - *«եւ Աստուած երկու մեծ լուսատուները ստեղծեց»* (Ծն. Ա, 16):

***Հարց.*** - Ի՞նչ է նշանակում Աստծոյ Արարչութիւնը:

***Պատասխան.*** - Ս. Գիրքն իր առաջին նախադասութիւնով ընթերցողին Աստծոյ ներկայութեանն է առաջնորդում: Աստծու Հոգին մեզ չի համոզում Աստծոյ գոյութիւնը կամ ապացոյցներ բերում, այլ Աստուած յայտնում է Իրեն, եւ Իր արարչութեան միջոցով իմացւում: Աստծու ներկայութիւնը բացառում է ամէն տեսակի խաւար՝ ֆիզիկական, բարոյական, մտաւոր կամ հոգեւոր, եւ սիրոյ թագաւորութիւն հաստատում: Աստուածային սիրոյ արտաքին գործունէութեան առաջին իրականացումը Աստծու արարչութիւն է կոչւում: Այդ սիրոյ անսպառ առատութիւնից էլ բխում է արարչութիւնը: Աստուած Իր սիրոյ առատութեամբ եւ Իր կամքի անսահման ազատութեամբ կամեցաւ ստեղծել աշխարհն ու Իրեն յայտնել իր արարածներին: Շնորհալին գրում է. «Հայր կամեցաւ ստեղծանել զերեւելի եւ զաներեւոյթ արարածս, եւ Որդի՝ գոյացոյց յանգոյից, եւ Հոգին Սուրբ զարդարեաց իմաստութեամբ»:

***Հարց.*** - Մի՞թէ Արարչութիւնը աւարտուել է վեց օրում:

***Պատասխան.*** - Եկեղեցու Հայրերը Վեցօրեայի մասին (Ծննդոց Ա, 1 - Ա, 31) շատ են գրել ու մեկնել: Այնքան անհուն է այդ գլուխը, որ ինչքան էլ խորհենք ու մտածենք նրա մասին, այն չի սպառուի, յաւեննայն դէպս չի սպառուել մինչեւ հիմա եւ ոչ էլ կսպառուի ապագայում: Չէ՞ որ այդ մի փոքր հատուածում ամփոփ ներկայացւում է այնքան զարմանահրաշ ու խորհրդաւոր Արարչագործութիւնը: Ստորեւ ներկայացնում ենք մի քանի ընդհանուր դատողութիւններ Վեցօրեայի մասին.

Նախ՝ բնագրում «ստեղծել» բայն արտայայտուած է երկու եբրայերէն հոմանիշ բառերով՝ "բարահ" եւ "ասահ". առաջին բառը նշանակում է ստեղծել, արարել, իսկ երկրորդը՝ ստեղծել, առաջացնել արդէն եղած բանից, ի յայտ բերել:

Հայերէնում հաւանաբար այդ երկու իմաստներն ինչ որ ձեւով կարելի արտայայտել «ստեղծել» եւ «արարել», «պատրաստել» բայերով, ընդունելով, որ «ստեղծել»-ը տարբերւում է «արարել»-ից այդ յաւելումով: Առաջին ձեւով "ստեղծել" (բարահ) բառն օգտագործուած է Առաջին գլխում միայն երեք տեղ՝ Ա, 21 եւ 27 համարներում, իսկ մնացած տեղերում օգտագործուած է երկրորդ ձեւով ("ասահ"): Այդ պատճառով էլ, համաձայն արդի ընդունուած տեսակէտի, Ծննդոց Ա, 1 - ում արդէն ստեղծուեցին ամէն ինչ եւ ամէն բան ("բարահ"): Արարչագործութեան յետագայ ընթացքում (2-րդ համարից յետոյ) ուղղակի ի յայտ են բերւում ("ասահ") արդէն եղած բաները, գոյութիւն ունեցածները: Օրինակ, երբ ասում է՝ «Եւ Աստուած արարեց երկու մեծ լուսատուները», օգտագործում է «արարել» բայն երկրորդ իմաստով ("ասահ"): Այսինքն՝ չորրորդ օրը Աստուած ուղղակի ի յայտ է բերում արեգակն ու լուսինը՝ ինչ որ ձեւով առանձնացնելով դրանց: Եւ այն պնդումը, թէ մինչ արեգակի ստեղծումը (այսինքն առաջին երեք օրերում) «օր» եւ «լոյս» չէր կարող լինել, դառնում է անհիմն: Նման մօտեցմամբ Առաջին գլխում պարզորոշ կնկատենք աշխարհաստեղծման մասին արդի գիտութեան մի այլ յայտնի տեսակէտ՝ «Մեծ Պայթիւնի» տեսութիւնը, ըստ որի Տիեզերքն առաջացել է «Մեծ Պայթիւնից» եւ զարգացման ներկայ ընթացքը բնորոշւում է պայթիւնի հետեւանքներով: Կարեւոր եւ հետաքրքրական է այն փաստը, որ այդ նոյն բայն է օգտագործուած նաեւ մարդու ստեղծման պատմութեան մէջ (Ա, 27): Այսինքն՝ մարդն իր բնութեամբ եզակի արարած է, որը չունէր իր նմանօրինակը նախկինում. Աստուած մարդուն ստեղծեց անկենդան հողից կենդանութիւն տալով նրան: Յիշենք Յիսուսի խօսքերը՝ *«Ի՞նչ օգուտ մարդուն, եթէ ամբողջ աշխարհը ստանայ ու իր անձը կորցնի»:* Այսինքն մարդու կեանքն աւելի է քան աշխարհն ամբողջութեամբ:

Վեցօրեայի մասին կան մի քանի կարծիքներ. ոմանք ընդունում են, որ նրանք եղել են 24-ժամից բաղկացած օրեր, ինչպես հիմա, ոմանք էլ ընդունում են, որ եղել են անորոշ երկարութիւն ունեցող ժամանակա-հատուածներ եւ ոմանք էլ ընդունում են, որ եղել են երկրաբանական դարաշրջաններ: Ս. Գրքում *«օր»* հասկացութիւնը օգտագործուած է թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ եւ թէ՛ երրորդ իմաստով: Օրինակ՝ Ծննդոց Բ, 4 - ում *«օր»* ասելով հասկացւում է ամբողջ Վեցօրեան միասին վերցուած: Սաղմոսում (ՂԹ, 4) ասւում է՝ Քեզ համար հազար տարին մի օր է, այսինքն *«օր»*-ն այստեղ ունի դարաշրջանի իմաստ: Ուրեմն ամենեւին էլ կարիք չկայ ամէն տեղ նոյնացնել օրուայ հասկացողութիւնը, ընդ-հակառակն՝ ամէն տեղ *«օր»* բառի օգտագործումը զարմանալի ձեւով երանգաւորում է ասածը: Այսպէս՝ առաջին վեց օրերի համար գրուած է՝ «եւ եղաւ երեկոյ եւ եղաւ առաւօտ», որը ցոյց է տալիս օրերի աւար-տուն լինելը: Նոյնը, սակայն, չի ասւում եօթերորդ օրուայ համար: Հետեւաբար կարելի է եզրակացնել, որ եօթերորդ օրը դեռ չի աւարտուել՝ ունի սկիզբ, եւ հիմա էլ ընթացքի մէջ է (մեր դարաշրջանը), այսինքն ունի անորոշ երկարութիւն: Հետաքրքիր է, որ Ծննդոց Ա, 5 - ում օգտագործուած թուականը բնագրում դասական չէ. այսինքն գրուած է ոչ թէ՝ առաջին օր, այլ՝ օր մի: Դասական թուական չէր կարող լինել, որովհետեւ դեռ չէին սկսուել միւս օրերը, որոնց համեմա-տութեամբ հնարաւոր լինէր դասակարգել օրերը: Ս. Գրքում օրուայ կարգը նշելուց առաջ միշտ յիշւում է՝ *«եւ եղաւ երեկոյ եւ եղաւ առա-ւօտ»:* Այսինքն երեկոյից է սկսւում օրը (ինչպէս մեր եկեղեցում) եւ աւարտւում առաւօտեան՝ խորհրդանշելով խաւարից լոյսի անցումը: Առաջին օրն աւարտւում է լոյսով, լոյս է փոխանցում երկրորդ օրուան, որն իր հերթին աւարտուելիս լոյս է փոխանցում երրորդ օրուան եւ այդպէս շարունակ: Այս է Աստուծոյ կամքը արարածների համար՝ լինեն նիւթական թէ բանական: Մարդն էլ իր ամէն մի ապրած օրուայ համար պիտի հաշիւ տայ, եթէ չի կատարել իր վրայ դրուած այդ լուսաւոր պարտականութիւնը՝ լոյս (լուսոյ գործեր) փոխանցել ուրիշներին,



յաջորդներին եւ ոչ թէ խաւար (խաւար գործեր):

Նախնի եկեղեցում ընդունում էին, որ Վեցօրեայի օրերը ճիշտ մեր 24 - ժամեայ օրերի նման են եղել: Բարսեղ Կեսարացին իր յայտնի «Վեցօրեայում» գրում է.

«Օր մի՝ այսինքն ցերեկն ու գիշերը միասին մի են, միաւորուած են եւ անբաժան: Եւ ասելով մի՝ սահմանում է դրանով ցերեկուայ եւ գիշե-րուայ երկկողմանի միաբանութիւնը՝ քանի որ իր քսանչորս ժամով օրուայ հերթականութիւնն է բովանդակում»:

Կեսարացին իր այդ ճառն աւարտում է հետեւեալ աղօթքով.

«Եւ Հայրը բարերար, որից Որդին է միածին, որը ճշմարտութեան լոյսն է, ցերեկուայ լոյսի զարդարիչը, որ ծագում է երկնքից եւ գիշերն իր պայծառութեամբ է լուսաւորում, մեր հանգստեան համար յաւիտե-նականն է պատրաստում ու մեզ հրաւիրում է այդ փառապանծ լոյսին՝ անեղծ եւ անսպառ: Թող լուսաւորի մեր սիրտը իր ճշմարտութեան գիտութեամբ, եւ պահի մեր կեանքն առանց գայթակղութեան՝ ի պա-տիւ իր փառաւորութեան եւ տայ մեզ, որ ընթանանք թէ՛ ցերեկը եւ թէ՛ գիշերը արժանաւոր ընթացքով»:

Մի դիտողութիւն եւս.

Բնագրում առաջին հինգ օրերը թուարկուած են անորոշ յօդով: Այսինքն, գրուած է՝ օր մի, օր երկրորդ, օր երրորդ, օր չորրորդ, օր հին-գերորդ: Բայց վեցերորդ օրուայ համար գրուած է՝ վեցերորդ օրը: Այստեղ *«օր»* բառն ունի եբրայերէնին յատուկ որոշեալ (hէ) յօդը, որն առանձնացնում է այդ բառը միւս օրերից, որպէս մի զարմանահրաշ, իւրայատուկ, կատարեալ օր: Մինչ այդ օրերը թերի էին, քանի որ դեռ շատ բան էր պակաս: Եւ ամէն մի օր Աստուած լրացնում է Արարչագոր-ծութիւնը, ու միայն վեցերորդ օրն է այն աւարտուն տեսք ստանում: Այդ օրը ստեղծուեց մարդը՝ Արարչագործութեան պսակը, վերացնելով Արարչագործութեան անորոշութիւնը: Ինչ անիմաստ ու անորոշ կլինէր Տիեզերքը, եթէ չստեղծուէր մարդը: Ասենք որ այդ որոշեալ (hէ) յօդն օգտագործուած է նաեւ եօթներորդ օրուայ համար:

***Հարց.*** - Աթեիստներն ու հեթանոսները յաճախ ասում են թէ՝ Ծննդոց Ա, 1 -ում *«Աստուած»* բառն ունի հոգնակի թիւ, որը նշանակում է բազմաստուածութիւն: Մի՞թէ կարելի է այդտեղից եզրակացնել, որ Աստծոյ մէկութիւնն ու միութիւնը խախտւում է:

***Պատասխան.*** - Բնագրում իրօք *«Աստուած»* բառն (էլոհիմ) ունի հոգնակի թիւ: Հոգնակի թիւ ունի նաեւ *«երկինք»* բառը: Գրաբարում *«երկինք»* նշանակել է *«երկին»*-ի հոգնակին: Արդի արեւելահայերէնում *«երկինք»*-ը եզակի իմաստ է ձեռք բերել: Շատ օրինակներ կարելի բերել տարբեր լեզուներից, երբ հոգնակի թիւը կիրառւում է եզակի իմաստով: Այդ նոյնը խիստ բնորոշ է նաեւ բնագրին՝ եբրայերէնին, ուր յաճախ են դիմում նման ձեւերի, մանաւանդ երբ խօսքը վերաբերում է «Աստուած» բառին: Եբրայերէնում անսահման մեծութեամբ, ծաւալուն առարկաները շատ յաճախ օգտագործւում են հոգնակի թուով: *«Աստուած»* բառի անսահման զօրութիւնն ու իշխանութիւնը, վսեմութիւնն ու վեհութիւնը արտայայտելու համար էլ օգտագործուած է «էլոհիմ» հոգնակի ձեւը, որն ամենեւին էլ խորթ չէ այդ լեզուին: Եկեղեցու Հայրերը կիրառման այդ ձեւի մէջ նկատել են Երրորդութեան խորհուրդը: Համարեա բոլոր լեզուներում նման երեւոյթներ այս կամ այն ձեւով գոյութիւն ունեն: Օրինակ, երբ միապետերը, թագաւորները դիմում էին որեւէ մէկին կամ ժողովրդին, ասում էին. «Մենք՝ այսինչ թագաւորը ասում է քեզ...»: Սուրբ Գրքում նման կիրառութիւններ շատ կան ոչ միայն *«Աստուած»* բառի, այլեւ շատ ուրիշ բառերի համար, որոնք ինչ որ ձեւով առնչւում են *«Աստծու»* հետ, ցոյց տալու Աստծու վեհութիւնն ու անսահման իշխանութիւնը, զօրութիւնը: Օրինակ՝ *«Սուրբ»* բառը, երբ այն վերաբերում է Աստծուն (Յեսու 24. 19, Առակ 9. 10): Այդ տեղերում նա ունի հոգնակի թիւ՝ «Սուրբեր, Սուրբք», որոնք թարգմանութիւններում անիմաստ կլինէր հոգնակի թուով արտայայտել: Հետեւաբար այն պնդումը, թէ Ծննդոց Ա, 1 -ում օգտագործուած է հեթանոսական «աստուածների» գաղափարը անհիմն է եւ աւելի խաբելու միտում ունի:



***Հարց.*** - Եւ այս ամէնը՝ աշխարհը, տիեզերքը Աստուա՞ծ է կառավարում:

***Պատասխան.*** - «Երկինքն ու երկիրը, արեգակն ու լուսինը եւ աստղերի բազմութիւնը, ծովերը, գետերը, գազանն ու անասունը, սողունն ու թռչունը, լողացող ձկները, եղածները եւ լինելիքները՝ ամէն մէկը իր կարգով եւ իւրաքանչիւրը ենթարկուեցին հրամաններին: Բայց միայն մարդու կամքն է, որ անձնիշխան է թողնուած, անելու ինչ կամենայ: Աւելին նրանից չպահանջուեց, քան միայն այն, որից զգուշացուած էր՝ չճաշակել այդ ծառից...:

Նա է Արարիչը, ստեղծողը եւ ամենաբարի առաջնորդը իր իսկական բնութեամբ: Անբաւ զօրութիւնը, որ նրանից է տարածուած, շրջապատում է ամէն ինչ: Նրանից են բխում կենարար զօրութիւններ, որոնք բոլոր արարածներին են անցնում՝ երկնաւորներին եւ երկրաւորներին, օդի եւ հողմի մէջ, հրի եւ ջրի մէջ, լոյսի եւ խաւարի մէջ, անդունդների եւ բարձունքի մէջ: Նա երեւում է իր աներեւոյթ զօրութիւնների հետ իր թափանցիկ լոյսով: Նրա Հոգու զօրութիւնը անբաւ է, ամէն տեղ սփռուած, ամէն տեղ տարածուած եւ ճառագայթները ելնում են զօրութեամբ, անըմբռնելի բնութեամբ» (Ագաթանգեղոս, Վարդապետութիւն):

***Հարց.*** - Ի՞նչ է Աստծոյ նախախնամութիւնը:

***Պատասխան.*** - Ինչպէս Արարչի գործունէութիւնն անհրաժեշտ էր ստեղծագործութեան համար, այնպէս անհրաժեշտ է աշխարհի կառավարութեան ու պահպանութեան համար: Աստուած ստեղծելով աշխարհը կամենում է կառավարել եւ ամէն բան հասցնել իր բարի նպատակին: Հետեւաբար «Նախախնամութիւնը» Աստծոյ ծաւալուն ու բովանդակ գործունէութիւնն է ընդհանրապէս: Չպէտք է այն շփոթել հեթանոսական «ճակատագիր» գաղափարի հետ: Ս. Գիրքը ընդհանրապէս մերժում է ամէն մի գաղափար, որն այս կամ այն ձեւով բռնանում է մարդու ազատութեանը՝ տանելով նրան ստրկութեան: *«Բռնութիւնը իմաստունին յիմար կդարձնի»* - ասում է Սողոմոնը (Ժողովող Է, 7):

*Հարց.* - - Եթէ ամէն բան Աստծու ձեռքում է, ապա ո՞ւր մնաց մարդու ազատութիւնը, ազատ կամքը:

***Պատասխան.*** - Նախ մի քանի խօսք Աստծու կանխագիտութեան մասին: Աստուած գիտէ ամէն ինչ եւ ամէն բան: Մարդու իմացականութիւնն ու ճանաչողութիւնը ժամանակի ընթացքում աճում եւ զարգանում է, մինչդեռ Աստծոյ գիտութիւնը նման բանի կարիք չունի, այն կատարեալ է: Այդ առումով էլ Աստուած գիտէ ոչ միայն մեր մտքերը, այլ նաեւ մեր արարքների յաջորդականութիւնը՝ այն բոլոր քայլերը, որ պէտք է կատարենք ապագայում: Այսինքն, Աստուած կանխագէտ է եւ մեր ամէն քայլ նախօրօք գիտէ: Այն փաստը, որ Աստուած ամէն ինչ նախօրօք գիտէ, երբեք պատճառ չի հանդիսանում այն ամենին, ինչ կատարւում է: Օրինակ. Աստուած գիտէր, որ Յուդան պիտի մատնէր Յիսուսին, բայց այդ գիտելիքը չստիպեց Յուդային դիմելու այդ քայլին: Յուդան ազատ էր եւ ինքն անձամբ ընտրեց այդ ճանապարհը, որի համար միայն ինքն է պատասխանատու:

Մարդու կամքն ազատ է, նա կարող է ընտրել բարին կամ չարը: Բայց քանի որ մարդու բնութիւնն է մեղանչական՝ Ադամից ժառանգած, ապա որպէս օրէնք, մարդն աւելի մեծ հաւանականութեամբ ընտրում է չարի կամ մեղքի ճանապարհը: Ստացւում է, որ ազատ մարդն իր ազատ կամքով ազատօրէն ընտրելու հնարաւորութեամբ ընտրում է աւելի շատ մեղաւոր ճանապարհը, քան արդարութեան ճանապարհը: Այս բանում համոզուելու համար բաւական է նայենք մեր շուրջը՝ բարին գործողներ անհամեմատ աւելի քիչ են հանդիպում, քան չար գործողներ: Այս առեղծուածային վիճակից դուրս գալու հիանալի բանալի է տուել Ս. Օգոստինոսը: «Մարդու կամքն ազատ է, բայց ազատագրուած չէ», - գրել է նա: Այսինքն, միայն ազատագրուած կամք ունեցող մարդն է ազատ: Պօղոսը գրում է՝ *«Ուր Տիրոջ Հոգին է, այնտեղ է ազատութիւնը»* (Բ Կորնթ. Գ 17): Միայն Աստուած կարող է մարդուն ազատել մեղանչական բնութեան ապականիչ ազդեցութիւններից, սրբելով նրա կեանքն ու կամքը, վերստին ծնունդ տալով եւ իրօք ազատագրելով մարդուն:



*Հարց.* - Ինչպէ՞ս հասկանալ «Հաւատամքի»-ի 1-ին հատուածում Աստծուն բնորոշող «Հայր»-ը:

***Պատասխան.*** - «Հայր» բառը ունի երկու երանգ: Նախ՝ երկրաւոր հայրը, որից ժառանգում են մեղանչական բնութիւնը: Յաճախ այդ բնութիւնը կոչում են նաեւ «ադամական», այսինքն՝ Ադամից ժառանգած, քանի որ բոլորի նախահայրն է եղել: Երկրորդ՝ երկնաւոր Հայրը, որն անփոփոխ է եւ կախում չունի ժամանակից. «Առանց ախտի յղացաւ եւ առանց ցաւի ծնեց ամէն երեւելի բաները եւ աներեւոյթները. որին որ ծնեց, նոյն ինքն եկաւ եւ սովորեցրեց որդիներին ճանաչել երկնաւոր Հօրը: Այս պարգեւն աւելի մեծ է, քան մարդկանց տուած ամէն պարգեւ: Այդպիսի մեծ պատիւի արժանանալու համար, ով մարդ, քո անձից զգուշացիր...» (Եղիշէ):

Ո՞վ չի կարող Աստծուն Հայր անուանել: Նա, ով շուայտութեամբ ու զեխութեամբ է ապրում, անօրէնութեամբ, գիճութեամբ եւ պղծութեամբ:

«Ինչպէս որ Աստուած Հայր է բոլորի համար, նոյնպէս էլ Քրիստոս եղբայր է բոլոր նրանց համար, ովքեր կատարում են նրա կամքը: Նա արքայ էր, եւ քո եղբայրը եղաւ: Սա աւելի մեծ պարգեւ է, քան առաջին արարչութեան պարգեւները» (Եղիշէ): Այստեղ «առաջին արարչութեան պարգեւներ» ասելով Եղիշէն նկատի ունի Աստծոյ նմանութիւնն ու պատկերը:

«Երբ Հայր են ասում, ապա միանգամից խոստովանում են եւ՛ մեղքերի թողութիւն, ե՛ւ յանցանքներից ազատում, եւ՛ արդարութիւն, ե՛ւ փրկութիւն, ե՛ւ սրբութիւն, ե՛ւ որդեգրութիւն, ե՛ւ ժառանգութիւն, ե՛ւ եղբայրութիւն Միածնի հետ, ե՛ւ Հոգու պարգեւներ, որովհետեւ անհնար է Աստծուն Հայր կոչել եւ այս ամենին հաղորդ չլինել: Նաեւ այս դաւանանքով թշնամութիւնն է վերանում եւ հպարտութիւնը իջնում, ախտերն ու հակառակութիւնները մերժում եւ ամենայն բարութեան մայրը՝ Սէրը, հաստատում դրանց փոխարէն» (Ոսկեբերան):

«Ով Աստծուն Հայր է դաւանում, իրեն դնում է որդիութեան շրջանա-

կի մէջ. այդպիսիների մէջ թշնամութիւնը չի արմատանում, իսկ եթէ որդին յանցանք է գործում, Հայրը բնական գութով եւ իմաստութեամբ ներում է» (Լամբրոնացի):

Աստծուն Հայր խոստովանել, նշանակում է կատարել Նրա կամքը, իմանալ, թէ ինչ է պահանջում մեզանից Աստուած եւ թէ ինչ է անհրաժեշտ մեզ: Աստծու կամքն անհուն լիութիւն է, որ բովանդակում է իր մէջ ամէն ինչ եւ ամէն բան: Մեր կեանքի, գոյութեան իմաստն ու նպատակը կախուած է նրանից, թէ ինչպէս ենք մեր կեանքում իրականացնում Աստծու կամքը:

***Հարց.*** - - Ինչպէ՞ս հասկանալ «Հաւատամքի» երկրորդ մասը՝ «եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր:Աստուած Աստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ո՛չ արարած»:

***Պատասխան.*** - - Այս հատուածը թարգմանւում է այսպէս՝ «եւ մի Տէր Յիսուս Քրիստոսին, Աստծոյ Որդուն, ծնուած Հայր Աստծուց՝ Միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ոչ արարած»: Այստեղ ասւում է, որ՝

- Աստծու Որդին՝ Յիսուս Քրիստոս, Երրորդութեան երկրորդ անձն է:
- Աստծու Որդին միակն է, ուրիշը չկայ:
- Աստծու Որդին ծնուած է Հայր Աստծուց, յաւիտենութիւնից առաջ եւ անվախճան է, Միածին:
- Ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստծուց (այսինքն՝ Հօրից) եւ համագոյակից է Հայր Աստծուն, այսինքն՝ Հայր Աստծոյ հետ միաժամանակ է գոյութիւն ունեցել:
- Նա է ստեղծել ամէն բան, նա ստեղծուած չէ:

Հետեւաբար, ինչպէս Հայրը ճշմարիտ լոյս է, այնպէս էլ Որդին է ճշմարիտ լոյս: Ճշմարիտ Աստծուց ծնուածն էլ ճշմարիտ է, անստեղծ, անեղծանելի եւ անփոփոխելի:



Չկար ժամանակ, երբ չկար Որդին եւ չկար ժամանակ, երբ Հայրը Հայր չէր, այլ միշտ կար Հայր, հետեւաբար միշտ էլ կար Որդին, ոչ եղբայրակից, այլ Որդի՝ ծնուած Հօրից: Էութեամբ Հայրը անստեղծ է եւ անհասանելի, Որդին էլ, ծնուած լինելով Հօրից, նոյնպէս անստեղծ է եւ անհասանելի, Աստուած էր Աստծուց եւ Միածին էր, քանի որ մի Հայր ունէր՝ Աստուած: Դրա համար էլ Որդին կոչւում է Միածին:

Նա ծնուած է Հօրից ոչ թէ ժամանակի մէջ, այլ՝ ի յաւիտենից: Այդ ծնունդը արարածական ծնունդ չէ, այլ՝ ինչպէս լոյսը՝ լոյսից: Միածինը իր բնութեամբ է Որդի եւ ոչ թէ որդեգրութեամբ: Միայն մարդ արարածն է որդեգրութեամբ դառնում Աստծոյ որդի, Աստծոյ զաւակ:

Հիմա՝ մեր օրերում, այս կէտերը կարծես հասկանալի են եւ կարիք չունեն լուրջ մեկնաբանման, բայց Նախնի Եկեղեցում այս բոլոր կէտերի շուրջ ծաւալուած վէճերն առաջ բերեցին բազմաթիւ աղանդներ ու մոլորեցնող վարդապետութիւններ: Նիկիական «Հանգանակի» Հայաստան բերելը Շնորհալին համարում է մի մեծ պարգեւ, որը Հայոց Տանը հաստատեց հաւատը՝ մերժելով մոլորեցնող զանազան վարդապետութիւններ.

«Զբանս հաւատոյ անդուստ առեալ,
տանըս հայոց պարգեւք բերեալ:
Յորոյ հիման մեք հաստատեալ,
անշարժապէս տըրամադրեալ:
Արիոսի չեմք հաւանեալ,
որ զմի բնութիւն յերիս հատեալ:
Եւ Սաբէլի չեմք հնազանդեալ,
որ մարդածին զկոյսն ասացեալ:
Ոչ Եւտիքէս տեղի գտեալ,
որ ոչ ասաց մարմին առեալ»:

***Հարց.*** - Յիսուսի երկրորդ գալստի համար Նոր Կտակարանում գրուած է՝ *«Իսկ այն օրուայ եւ այն ժամի մասին ոչ մի մարդ չգիտէ, ոչ*

*էլ երկնքի հրեշտակներն ու Որդին, այլ միայն՝ Իմ Հայրը»* (Մատթ. ԻԴ 36): Մի՞թէ այստեղից հետեւում է, որ Որդին որոշ բաներից տեղեակ չէ, այսինքն՝ կրտսեր է Հօրից:

***Պատասխան.*** - Ժամանակին Արիոսն ու արիոսականները իրենց ասածը հիմնաւորելու համար Աւետարանի այդ համարներն էին մէջբերում, ասելով, թէ՝ Որդին կրտսեր է Հօրից: Այնինչ հարցն այստեղ վերաբերում է Աստծուն, եւ Որդին, իհարկէ, որպէս Աստծոյ Որդի, գիտէր ժամը եւ ժամանակները, բայց այդպէս է ասում մարդկանց անտեղեակ պահելու համար: Կարեւոր չէ, թէ Քրիստոս երբ կգայ, որ օրը եւ որ ժամին: Պէտք է միշտ պատրաստ լինել:

«Յիսուս, որպէս մարդու Որդի, այդ բանի մասին յայտնում է աշակերտներին, որ տեղեկութիւն չունի, եւ բնականաբար այդտեղից դեռ չի հետեւում, որ Նա, որպէս Աստծոյ Որդի, այդ մասին չգիտէ: Յիսուսի բացատրութիւնը մեզ սովորեցնում է, որ այդ բաները վերաբերում են միայն Աստծուն եւ մարդկանց իմանալու բաներ չեն» (Օրմանեան): Նոյնն է գրել նաեւ Ս. Աթանասը իր «Առ Արիոս» ճառում. «Արդ, յայտնի է, որ ոչ թէ Որդին չգիտէր վերջին օրուայ մասին, այլ ծածկում էր խնդիրը աշակերտներից»:

Հետեւաբար Յիսուսի գալստեան օրուայ ու ժամի մասին ամէն ձեւի հաշուարկ, որ շատ է տարածուել վերջին օրերին Հայաստանում, ուղղակի ի սկզբանէ անհեթեթութիւններ են եւ դրանով զբաղուողները իզուր են ժամանակ վատնում: Նախօրօք գիտենք, որ նման բոլոր հաշուարկները (ինչպիսին էլ որ լինեն) արդէն սխալ են:

***Հարց.*** - Իսկ ի՞նչ է ասում Քրիստոսի մասին Նոր Կտակարանը:

***Պատասխան.*** - Նոր Կտակարանում «Հաւատամքի» 2-րդ հատուածի մասին՝ Քրիստոսի աստուածութեանը վերաբերող առաւել յայտնի համարներն են.

- Մատթ. ԺԶ, 5, Յովհ. Ա, 1 - Քրիստոս ճշմարիտ Աստուած է:
- Յովհ. Ժ, 30, - Ինքն Իրեն հռչակում է Աստուած, հետեւաբար



իրաւունք ունի՝

- Ներել մեղքերը (Մարկ. Բ, 10),
- Դատել մարդկանց (Յովհ. Ե, 22),
- Յարութիւն տալ (Յովհ. Զ, 39)

եւ իշխանութիւն ունի

- Բնութեան վրայ (Մարկ. Դ, 39)
- Չար ուժերի վրայ (Ղուկ. Դ, 35),

ինչպէս նաեւ

- Ամենագէտ է (Մարկ. Բ, 8)
- Ամենուրեք է (Մատթ. ԻԸ, 20):

Աւելին՝ Նա Արարիչ է (Յովհ. Ա, 3) եւ ամէն ինչի հիմքը (Եբր. Ա, 3):

Նա Աստծու Որդի չդարձաւ ծնուելուց յետոյ, նա այդպիսին էր եղել միշտ:

Բոլոր աղանդները ժամանակին այս կամ այն ձեւով նսեմացնում էին Քրիստոսի՝ Աստծու Որդու ինչ-ինչ կողմեր: Ուստի եւ անչափ կարեւոր է ընդհանրապէս իմանալ թէ ո՞վ է Քրիստոս, որովհետեւ դրանից շատ բան է կախուած: Ինքը՝ Քրիստոս նոյն հարցը տուեց նաեւ առաքեալներին՝ իմանալու, թէ ի՞նչ կարծիք ունեն Իր մասին (Մատթ., ԺԶ, 13):

***Հարց.*** - Ինչպէ՞ս հասկանալ «Հաւատամքի» երրորդ մասը՝ «Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք»:

***Պատասխան.*** - Այս հատուածը թարգմանւում է այսպէս. «Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, որով ամենայն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝ երեւացողները եւ աներեւոյթները: Որ մեզ՝ մարդկանց համար եւ մեր փրկութեան համար երկնքից իջնելով՝ մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ

Յոգով կատարելապէս ծնուեց Սուրբ Կոյս Մարիամից: Որով առաւ մարմինը, հոգին եւ միտքը եւ այն ամէնը, որ ունի մարդը՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք»: Այստեղ ասւում է, որ՝

- Աստծու Որդին իջաւ երկնքից եւ մարդկային բնութիւն առաւ, այսինքն՝ մարմին, հոգի եւ միտք, եւ կատարեալ մարդ դարձաւ, բայց չկորցրեց իր Աստուածային բնութիւնը եւ յատկութիւնները, որով եւ յայտնուելով աշխարհ, կոչուեց Յիսուս (որ նշանակում է Փրկիչ) Քրիստոս կամ Մեսիա (որ նշանակում է Օծեալ) եւ Էմանուէլ (որ նշանակում է Աստուած մեզ հետ):

- Յիսուս Քրիստոս ծնուեց Սուրբ Կոյս Մարիամից՝ Սուրբ Յոգիով, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

- Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ, որ փրկի մարդկանց մեղքից, ազատի մահուանից եւ դատաստանից:

***Յարց.*** - Ինչպէ՞ս համատեղել այդ դէպքում Յովհաննէսի Աւետարանի առաջին գլխի 1-5 համարները Քրիստոսի մասին եղած այն սկզբունքների հետ, որոնք ամփոփուած են «Յաւատամքի» առաջին մասերում:

***Պատասխան.*** - Նախ օգտակար կլինի այդ մի քանի համարները համեմատել Ծննդոց Առաջին գլխի սկզբի համարների հետ: Ծննդոցում Աստուած, խօսքը (բանը) եւ Աստծու հոգին ներկայացնում են Ս. Երրորդութեան գործունէութիւնը: Այնտեղ «սկիզբը» արարչագործութեան սկիզբն է, ժամանակի սկիզբը: Յովհաննէսի Աւետարանում «սկիզբը» յաւիտենականութիւնն է, սկիզբն է նախքան Արարչագործութիւնը: Միջնադարի հայ մեկնիչները (Որոտնեցի, Սիւնեցի) շատ գեղեցիկ ձեւով են մեկնել այդ մի քանի համարները, որոնք միշտ էլ եղել են վիճաբանութիւնների առարկայ:

Յովհ. Ա, 1. - *«Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն»:*

Այս սկիզբը կապ չունի այն ամէն սկիզբների հետ, որ կան աշխարհում, օրինակ՝ սկիզբ, երբ երկնքի ու երկրի հիմքը դրուեց եւ ոչ ոք չի կարող տեսնել այն, ինչպէս որ տեսնում են տան հիմքը: «էր»-ը ցոյց է տալիս, որ ոչ թէ «ի սկզբանէ է», այլ «էր», այսինքն՝ յաւիտենական ժամանակներից էր Յօր մօտ: Բանն Աստուած Յօր ծնունդ է, ինչպէս մեր խօսքը (բանը) մեր մտքի ծնունդն է: Բանն ունի մտքի նոյն բնութիւնը, նոյնպէս եւ Որդին՝ Յօր: Քանի որ այլ է անձամբ բանն ու այլ է միտքը, նոյնպէս առանձին անձ է Որդին, եւ առանձին անձ է Յայրը: Ինչպէս բանը մտքի պատկերն ու կերպարանքն է, այնպէս էլ Որդին՝ Յօր: Ինչպէս բանն անշփոթ միանում է ձայնին, եւ երկուսը միասին լինում են մի բան, նոյնպէս եւ բանն Աստուած անշփոթաբար միացաւ մարմնին եւ եղաւ մի Տէր՝ մի Յիսուս Քրիստոս: Ինչպէս որ մտքում ոչ մի բան չկայ, որ բանն չիմանայ, նոյնպէս Յօր ծածուկ բաները գիտէ Որդին:

Եւ այնպէս չէ, ինչպէս կարծում են մոլորեցնողները, երբ ասում է *«Բանն էր առ Աստուած»* եւ ոչ թէ «Բանն Աստծու մէջ էր»: Այսինքն, բանն ու Յայրը համագոյակից են եւ կատարեալ անձնաւորութիւններ, ոչ ինչպէս ասում է Սաբէլը՝ խառնուած են իրար:

Յովհ. Ա 2. - *«Նա էր ի սկզբանէ առ Աստուած»:*

Այս եւ նախորդ համարը միասին վերցուած չորս բան են սովորեցնում.

*«Ի սկզբանէ էր Բանն»*՝ Քրիստոսի ծնունդն է,

*«Բանն էր առ Աստուած»*՝ - Քրիստոսի անձնաւորութիւնն է ցոյց տալիս,

*«Աստուած էր Բանն»*՝ - Քրիստոսի աստուածութիւնն է,

*«Նա էր ի սկզբանէ»*՝ - Քրիստոսի անեղութիւնն է:

Ինչպէս տեսնում ենք, իր բոլոր մանրամասներով Յովհաննէսի Աւետարանի այս համարները ներդաշնակօրէն համաձայնում են «Յաւատամքի» 2-րդ մասի հետ, որը վերաբերում է Յիսուսին՝ Որդուն:

Յովհ. Ա 3-5. - *«Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ, որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան, եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւոր է, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու»:*

Ամէն ինչ, որ գոյացութիւն ունի, Քրիստոսով է եղել: Իսկ չարը, որ գո-

յացութիւն չունի, այլ բարու պակասութիւնն ու զլացումն է, Քրիստոսով չի եղել, այլ՝ բանսարկուի խորհրդակցութեամբ: Դրա համար էլ չի ասում, թէ ամէն ինչ լինում է նրանով, այլ՝ եղաւ: Իսկ ինչ, որ եղաւ նրանով, կեանք էր, եւ կեանքն էր մարդկանց լոյսը: Իսկ դրանք ոչ թէ կենդանութիւն կամ լոյս եղան մարդկանց, այլ՝ մահ ու մարդկանց հոգիների խաւար: Այն անդունդի խաւարն է, որ հասաւ բոլոր մարդկանց, բայց Քրիստոսին չհասաւ:

Այս մի քանի դիտողութիւններից արդէն երեւում է, որ «Հաւատամքի» դրոյթները բոլոր մանրամասներով հիմնւում են Աստուածաշնչի վրայ, եւ հակասութիւններ չկան նրանց մէջ:

***Հարց.*** - Բայց Կողոսացիների Ա, 15-ում գրուած է. «Որը (Քրիստոս) աներեւոյթ Աստծու պատկերն է, բոլոր ստեղծուածների անդրանիկը»: Մի՞թէ այստեղից հետեւում է, որ Քրիստոս արարած է, այսինքն, հակասում է «Հաւատամքին» եւ ընդհանրապէս Քրիստոսի Աստուած լինելու սկզբունքային հարցին:

***Պատասխան.*** - Այդ համարի վրայ էր հիմնւում Արիոսը, երբ ուզում էր ապացուցել Քրիստոսի արարուած լինելը: Այստեղ, ինչ խօսք, հակասութիւն չկայ, եւ որպէսզի հասկանանք Պօղոսի ասածը, պէտք չէ այն առանձնացնել կողոսացիներին գրուած նամակից եւ դիտարկել առանձին: Այստեղ Պօղոսը նկարագրում է Քրիստոսի անձը. Նրա աստուածութիւնը (Ա, 15-17 համարներ) նախքան մարդեղութիւնը եւ մարմնացեալ ու փառաւորեալ Աստուած-մարդուն (Ա, 18-20 համարներ): Այսինքն՝ Քրիստոս ծնուել է առաջ, քան արարչագործութիւնը:

Կողոսայում տարածուած էր գիտեմականների (գնոստիկների) ուսմունքը, որոնք մերժում էին արարչագործութեան վերոյիշեալ ընթացքը: Ուստի եւ Պօղոսը մի անգամ եւս գրում է, որ Քրիստոս Աստծու պատկերն է, այսինքն, եթէ ուզում էք տեսնել Աստծուն, նայէք Քրիստոսին: Իսկ *«Ստեղծուածների անդրանիկը»* արտայայտութեան մէջ *«անդրանիկը»* ժամանակային առում չունի, այլ աւելի բնորոշում է Մեսիային յատուկ տիտղոսը (Ելից Դ, 22): Օրինակ, երբ ասւում է «Իսրայէլը Իմ անդրանիկն է», ամենեւին չի նշանակում անդրանիկ ժամանակային իմաստով, այսինքն՝ առաջին ազգը, որից առաջ ուրիշ ոչ մի ազգ չկար: Այսինքն, *«անդրանիկն»* այստեղ Քրիստոսին վերաբերող առանձնայատուկ տիտղոս է եւ չի նշանակում, թէ Քրիստոս արարուած է: Յաջորդ համարներում Պօղոսն ի հաստատումն այդ ամենի ասում է, որ *«Նրանով ամէն բան ստեղծուեց»* (Ա, 16) եւ աւելին՝ *«Նրա համար»:* Այսինքն՝ Քրիստոս ոչ միայն Արարիչ է, այլ նաեւ արարչութեան նպատակն է (ամէն բան նրա համար է ստեղծուել): Նա է արարչութեան սկիզբը (Յովհ. Ա, 1) եւ Նա է արարչութեան վերջն ու արարչութեան նպատակը:

***Հարց.*** - Ի՞նչ է նշանակում՝ «մարմնացաւ, մարդացաւ»:

***Պատասխան.*** - Խորենացին մի քանի տողով աւելի շատ բան է ասում եւ բացատրում, քան շատ ուրիշներ մեծ-մեծ աշխատութիւններով (Տե՛ս նրա «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականը): Իրօք, մեծ եւ զարմանալի է այս խորհուրդը (Աստուած մարմնացաւ), որը յայտնուեց մարդկանց, բայց տակաւին շատ մարդկանց համար այդպէս էլ մնաց խորհուրդ (առաջին տունը): Աւետուեց, որ ծնուել է նոր թագաւոր, որը ոչ թէ մարդկանցից պիտի առնի իր թագաւորութիւնը, թագադրուի, այլ Նա Ինքն ունի այդ թագաւորութիւնը եւ Նա ծնուել է որպէս թագաւոր եւ ո՛չ թէ դարձել կամ ստացել այն, մանաւանդ որ, Ինքն է մարդկանց տալիս թագաւորութիւն (երկրորդ տունը): Երկինքն ու երկիրը չկարողացան բովանդակել Նրան, բայց Նա մսուրում յայտնուեց՝ առանց հեռանալու Հօրից, առանց Նրանից բաժանուելու («Ո՛չ մեկնելով ի Հօրէ») եւ բազմեց Բեթղեհէմում, բազմեց մարդկանց փոքրիկ ու ջերմ սրտերում (երրորդ տունը):

Աստծու Որդին մարդու Որդի եղաւ, որպէսզի մարդկանց որդիները՝ Ադամի որդիները, Աստծու որդիներ դառնան: «Արդ, Նա մայր երկրից ունեցաւ, իսկ մենք Հայր՝ երկնքում: Դրա համար Յիսուսն իրեն մարդու Որդի էր կոչում, իսկ մարդիկ Աստծուն Հայր են կոչում: Նա, ըստ բնու-

թեան, Աստծու Որդի էր, իսկ մենք՝ ըստ շնորհի: Եւ դարձեալ, Նա ըստ տնօրինութեան եւ մեզ համար՝ Ադամի որդի դարձաւ, իսկ մենք ըստ բնութեան Ադամի որդի ենք» (Ս. Աթանաս):

Աստուած իր յաւիտենական տնօրինութեամբ ուղարկեց իր միածին Որդուն, որ նա մարդանար, իբրեւ ճշմարիտ մարդ ապրէր երկրի վրայ, կրկին բարձրացնէր մարդու ընկած բնութիւնը եւ դարձնէր առաջուայ վիճակին: Աստծու Որդին ծնուեց Ս. Կոյսից, առանց ժառանգական մեղքի, սակայն մեղանչական մարդու կերպարանքով (Հռոմ. Ը, 3): Այս առումով էլ շատ խորհրդաւոր ձեւով Պօղոս առաքեալը Յիսուսին անուանում է *«Վերջին Ադամ»* եւ *«Երկրորդ մարդ»* անուններով (Ա Կորնթ., ԺԵ, 45-47): Յիսուս եղաւ «Վերջին» Ադամ, որովհետեւ Նրանով ադամական բնութիւնը պարտուեց, դատապարտուեց, իր վերջը գտաւ: Նա նաեւ «Երկրորդ» մարդն է, քանի որ սկիզբ դրեց նոր մարդկութեան՝ նորոգուած ու վերստին ծնուած, որոնք կարող են լինել երրորդը, չորրորդը եւ այլն:

Հին ժողովուրդներից շատերը սովորաբար ձգտել են միշտ մարդուն աստուածացնել եւ այդ պատկերացումը շատ ընդունելի էր հին աշխարհում: Եւ բնականաբար Աստծու եւ մարդու միութիւնն էլ ըստ այդմ դառնում էր երեւակայական, բանաստեղծական մի պոռթկում եւ ոչ՝ աւելի: Աստուած, դրան հակառակ, Ինքը մարդացաւ, մարմնացաւ, Իր բնութիւնը միաւորեց մարդկային բնութեան հետ:

***Հարց.*** - Ինչպէ՞ս հասկանալ Ս. Մարիամին վերաբերող հատուածը. «ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով»:

***Պատասխան.*** - Քրիստոսի մարդեղութեամբ սկսւում է Աստուածորդու կեանքը: Քրիստոս նոր մարդկութեան սկիզբն է, որի մէջ մեղքը պէտք է վերացուած լինէր, հակառակ դէպքում նա էլ կլինէր մեզ նման մահկանացու: Ուստի մեղանչական մարդկութիւնը չպէտք է մասնակցէր Քրիստոսի մարդեղութեան խորհրդին, այլ պէտք է միայն ընդունող լինէր աստուածային այդ մեծ շնորհին: Այդ իսկ պատճառով Քրիստոս ծնւում է ոչ մարդու եւ ոչ էլ մարմնական կամքով, այլ Ս. Հոգիով՝



աստուածային կամքով: Աստծու փրկութիւնը ընդունելու համար ընտրւում է Մարիամ Սուրբ Կոյսը: Տիրամայրը՝ Քրիստոսի, Տիրոջ մայրը, ողջ մարդկութեան համար օրինակելի պատրաստակամութեամբ եւ անձնուրացութեամբ Աստուածմարդու ընդունարան դարձաւ: Նրանով Աստուածորդին մտաւ իր մարմնաւոր կեանքի մէջ: Այսպէս Քրիստոս դառնում է Նոր մարդկութեան առաջին մարդը: Նրանով իրականացաւ նաեւ Ս. Գրքի առաջին մարգարէութիւնը (Ծննդոց Գ, 15). *«Թշնամութիւն եմ դնում քո (օձի) եւ կնոջ միջտեղ, եւ քո սերունդի եւ նրա սերնդի միջտեղ. նա քո գլուխը կջախջախի»:* Այստեղ հետաքրքիր է *«կնոջ սերունդ»* հասկացողութիւնը, քանի որ Հին Կտակարանում սերունդ ասելով հասկանում էին միայն հօր սերունդը: Այդ պատճառով է, որ Քրիստոսի ազգաբանութեան մէջ գրուած է՝ *«Աբրահամը ծնեց Իսահակին»,* առանց նշելու Աբրահամի կնոջը՝ Սարային:

Եսայի մարգարէի օրերում այդ մարգարէութիւնը աւելի ճշգրտուեց (Է, 14). *«Ահա կոյսը կյղանայ եւ մի որդի կծնի եւ նրա անունը կկոչուի Էմմանուէլ (որ թարգմանւում է՝ Աստուած մեզ հետ)»:* Թէ ինչպէս եւ ինչ ձեւով պէտք է այս ամէնը կատարուէր, մարդկային մտքով անըմբռնելի է: Իրօք որ, առանց հաւատի եւ Աստծու ամենազօր կարողութեան անհնար կլինի պատկերացնել «անարատ յղութեան» այս վարդապետութիւնը: Աւետման տեսարանում (Ղուկաս Ա, 26-38) հրեշտակն ասում է. «Ողջոյն քեզ, ով շնորհընկալ, Տէրը քեզ հետ է. օրհնեալ ես դու կանանց մէջ... Սուրբ Հոգին կգայ քեզ վրայ եւ Բարձրեալի զօրութիւնը քեզ հովանի կլինի եւ ծնուած սուրբը Աստծու Որդի կկոչուի»: Յայտնի է, որ Ղուկաս աւետարանիչը մասնագիտութեամբ բժիշկ էր: Նոր Կտակարանում միայն Ղուկասի Աւետարանում ենք հանդիպում Յիսուսի ծննդի մասին այդքան մանրամասների: Իրօք որ, կուսական ծննդի մասին այդպէս գեղեցիկ ու վեհաշունչ գրելը, այն էլ բժշկի կողմից, ցոյց է տալիս աւետարանչի հաստատուն հաւատը Աստծու խօսքի ու այդ խօսքի զօրութեան վրայ:

«Հաւատամք»-ում Տիրամօր մասին այդ կէտն ունեցաւ նաեւ պահպանիչ եւ կանխարգելիչ նշանակութիւն. յետագայում Եկեղեցին մեր-

ժեց զանազան հերձուածների եւ աղանդների, որոնք ժխտում էին Մարիամի «Աստուածածին» լինելը՝ նրան անուանելով «մարդածին»:

Անքննելի են Ս. Կոյսի միջոցով աշխարհ եկած օրհնութիւնները, անքնին են, անպատմելի եւ անհետազօտելի: Այդ պատճառով էլ հնում նրան են նուիրուել բազմաթիւ գովաբանութիւններ, շարականներ, երգեր: Այսպէս, շարականագիրը Ս. Կոյսին համեմատում է մովսիսական օրէնքի տախտակների հետ. «Իմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տառիցն մովսիսական օրինացն», այսինքն՝ ինչպէս աստուածագիծ տախտակները անկոփ էին, նոյն ձեւով էլ կոյսն անսերմ յղացաւ, ինչպէս որ այդ տախտակները չպատրաստուեցին եւ չմշակուեցին մարդկանց ձեռքով, այլ Աստուած ինքն յարմարեցրեց եւ դրոշմեց նրանց վրայ օրէնքի գիրը, նոյնպէս էլ առանց մարդկային գործակցութեան աստուածային բանն դրոշմուեց Ս. Կոյսի մարմնին:

Առաւել խորհրդաւոր է ներկայացնում Աստուածամօրը Նարեկացին. «Գերահրաշ անթառամ ծաղիկ եւ բազում ճիւղերի բուրաստան, ընդունարան քաղցրահամ պտուղների, որով կենդանացաւ եւ կերակրուեց համայն տիեզերքը: Կենդանացաւ մահացեալ քոյրը՝ Եւան...»:

Իսկ Ս. Աթանասը գրում է. «Ուրախ լեր, ամենասուրբ կոյս, քանի որ քո միջոցով մարդկային ազգը կենդանացաւ, տրտմութիւնը ուրախութեան փոխուեց, խաւարը՝ լոյսի, խաղաղութիւն եւ հաշտութիւն եղաւ Աստծու հետ, Ադամի անէծքը լուծուեց, նախահօր սուգը փոխուեց Միածնի ուրախութեան, նախամօր տրտմութիւնը վերացաւ Քրիստոս ծնելով»:

Աստուածամօր բացառիկութեան, սրբութեան, խոնարհութեան, Աստծու հանդէպ ունեցած վստահութեան համար է, որ Նախնի Եկեղեցում խորին յարգանքով եւ երկիւղածութեամբ էին վերաբերում նրա անձին: Նա ոսկի սափորը եղաւ երկնային մանանայի ու տաճարը՝ լոյսի: Նրա շնորհիւ է, որ կինը ի վերջոյ իր տեղը գտաւ մարդկային քաղաքակրթութեան մէջ: Մինչ այդ կինը մարդուն հաւասար անձ չէր համարւում՝ հակառակ իր արժանիքների: Անգամ քաղաքակիրթ Աթէնքը եւ Հռոմը բացառութիւն չէին կազմում: Պիւթագորասը իր արժէքների դասակարգման սանդղակներում կանանց դասում էր մարդկութեան ստորագոյն մասում. պղատոնական համակարգում, երբ մարդը մեղանչում էր, վերափոխւում էր կնոջ, իսկ երբ կինն էր մեղանչում, վերափոխւում էր կենդանու: Այսօր էլ ոչ քրիստոնեայ ժողովուրդների մօտ նոյն վերաբերմունքն է կանանց հանդէպ: Չինացիները կնոջը դիտում են որպէս հոգուց զուրկ արարածի, իսկ հնդիկները կանանց դատապարտում ողջ-ողջ թաղուելու՝ իրենց մեռած ամուսինների հետ:

Քրիստոնէութիւնն էր, որ բարձրացրեց կնոջը, որպէս կենսունակ ուժի: Կինն օժտուած է նուիրումի, սիրոյ, հեզութեան, հնազանդութեան, քաղցրութեան շնորհներով եւ քրիստոնէութիւնը, որ իր էութեամբ սէր է, արժէքաւորեց կնոջը՝ «խաւարի տաճարից» դարձնելով «լոյսի տաճար»: Այս բոլոր օրհնութիւնների սկիզբը դրեց Ս. Կոյս Մարիամը, լինելով ամենաօրհնեալը բոլոր կանանցից եւ մարմնաւորեց այդ առաքինութիւնները ու իբրեւ մայր Աստուածորդու, հետեւեց Նրան Մսուրից մինչեւ Գողգոթա: Յիսուսի խաչուելու պահին կանայք էին Նրա մօտ (տղամարդիկ փախել էին): Տեսնելով Նրա չարչարանքները, մահը, նրանք դարձան յաղթական Յարութեան աւետաբերները: Այս է նշանակում «Մահացեալ Եւան կենդանացաւ» արտայայտութիւնը: Այդ պատճառով է, որ մեր հայրերը «Մեծացուսցէ» շարականներ եւ բազմաթիւ այլ տաղեր ու ներբողներ են նուիրել Աստուածամօրը:

***Հարց.*** - Ինչո՞ւ են ոմանք պնդում, թէ Ս. Մարիամի «միշտ Կոյսն» պնդումը սխալ է, եւ որ Յիսուս եղբայրներ է ունեցել:

***Պատասխան.*** - Այդպէս են կարծում միայն ոչ առաքելական եկեղեցիները: Բոլոր առաքելական եկեղեցիները (այդ թւում նաեւ մեր՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին) ընդունում են «միշտ Կոյսն» բանաձեւը, դաւանելով, որ Ս. Կոյսը Յիսուսի ծնունդից յետոյ էլ կոյս եւ անարատ մնաց: Անհասկանալի կլինէր անարատ ծնունդից յետոյ Մարիամին վերագրել ապականացու ծնունդներ: Յիսուսին ծնելուց յետոյ, Աստուածամայրը դարձաւ լոյսի աղբիւր: Իսկ աղբիւրը չի կարող

միաժամանակ թէ՛ քաղցր եւ թէ դառը ջուր բխեցնել (Յակոբոս Գ, 11): Ուշադրութեան են արժանի նաեւ Եզեկիէլի ԽԴ, 1-3 համարները. *«Եւ ինձ յետ դարձրեց դուրսի սրբարանի դռան ճանապարհով, որ նայում էր դէպի արեւելք. նա փակուած էր: Տէրն ասաց ինձ. "Այս դուռը փակուած պիտի մնայ, չպիտի բացուի, նրանով պիտի չմտնեն, որովհետեւ Իսրայէլի Տէր Աստուածը մտաւ նրանով. ուրեմն փակուած պիտի մնայ"»:* Եկեղեցու հայրերը, նոյնացնելով Արեւելեան դուռը Ս. Կոյսի հետ, ընդունել են, որ այստեղ մարգարէն հռչակում է «միշտ Կոյսն» բանաձեւը:

Իսկ Աւետարաններում նշուած Յիսուսի եղբայրները՝ Յովսէսը, Յակոբոսը, Յուդան եւ Սիմոնը Ս. Կոյսի զաւակները չեն, այլ՝ ազգականները: Հրէաների մօտ ընդունուած էր մօտիկ ազգականներին եղբայր կամ քոյր անուանել: Օրինակ Ծննդոցում (ԺԴ, 13-16) Աբրահամը Ղովտին անուանում է եղբայր, մինչդեռ Ղովտը Աբրահամի եղբօր որդին էր:

***Հարց.*** - Այդ դէպքում ինչպէ՞ս հասկանալ Մատթէոսի Ա 20 համարը, ուր ասւում է. «Յովսէփ, Դաւթի որդի, մի վախեցիր քեզ մօտ առնել քո կին Մարիամին»:

***Պատասխան.*** - Համաձայն Հին Կտակարանի, նշանածին էլ էին կին անուանում: Օրինակ՝ Ծննդոց ԻԹ, 21-ում Յակոբն ասում է Ռաքէլի մասին՝ *«Կինն իմ»,* մինչդեռ նրանք միայն նշանուած էին: Ուրեմն այդտեղ օգտագործուած *«քո կին Մարիամին»* արտայայտութիւնը նշանակում է՝ *«քո նշանած Մարիամին»*, այսինքն, չի հակասում «միշտ Կոյսն» բանաձեւին:

***Հարց.*** - Իսկ Մատթէոսի Ա, 25-ում գրուած է. *«Եւ չգիտէր նրան, մինչեւ որ նա իր անդրանիկ որդին ծնեց»:* Մի՞թէ սա չի նշանակում, որ Յիսուս յետոյ եղբայրներ է ունեցել:

***Պատասխան.*** - *«Մինչեւ»* բառի օգտագործումը այս նախադասութեան մէջ ամենեւին չի նշանակում, որ ճիշտ կամ իրական է հակառակը: Ս. Գրքում շատ կիրառական է այդ ոճական ձեւը ինչպէս Հին, այնպես էլ Նոր Կտակարանում, չնայած որ նրանք գրուել են տարբեր լեզուներով եւ տարբեր ժամանակներում: Օրինակ.



Բ Թագաւորաց Զ, 23. *«Եւ Սաւուղի աղջիկ Մեղքողը մինչեւ իր մահուան օրը զաւակ չծնեց»:* Մի՞թէ այստեղից կարելի է եզրակացնել, որ Մեղքողը մահուանից յետոյ զաւակ ծնեց: Իհարկէ ո՛չ:

Մատթ. ԻԸ, 20. *«Ահա ես ձեզ հետ եմ ամէն օր, մինչեւ աշխարհի վերջը»:* Այստեղից ամենեւին չի հետեւում, որ Յիսուս մեզ հետ չի լինելու աշխարհի վերջից յետոյ (Աստծու Թագաւորութեան մէջ):

***Հարց.*** - Եթէ Ս. Գիրքը այդքան բարձրացնում է կնոջը, ինչո՞ւ է Պօղոսը պատուիրում (Ա Կորնթ., ԺԱ, 1-11), որ կինը առանց գլխաշորի եկեղեցի չմտնի:

***Պատասխան.*** - Համաձայն Ս. Գրքի, տղամարդը ստեղծուած է Աստծու պատկերով եւ կերպարանքով, իսկ նրա գլուխը Քրիստոսն է. ուստի նա իր կեանքում անդրադարձնում է Աստծու փառքը, ուրուագծում է Քրիստոսին: Կնոջ գլուխը տղամարդն է (ամուսինը), ուստի նա էլ իր կեանքում պէտք է անդրադարձնի իր ամուսնուն, ուրուագծելով նրան: Տղամարդը եկեղեցում պէտք է իր գլուխը բաց պահի, քանի որ աղօթքի պահին, պատարագի պահին, իր մտքերն ու խոհերը պէտք է բաց լինեն Աստծու առաջ եւ ոչինչ չթաքցնի, այլ մաքուր սրտով կանգնի Աստծու առաջ (Լամբրոնացի): Իսկ կինը, ծածկելով գլուխը, ազատօրէն կանգնում է Աստծու առաջ, խոնարհութեամբ ու հնազանդութեամբ, որպէս միայն Աստծուն նուիրուած: Երբ կինը բաց գլխով է կանգնում Աստծու առաջ, նշանակում է նա չէ, այլ իր ամուսինն է կանգնած: Ուստի գլխաշորը անհատականացնում է կնոջը Աստծու առաջ, այլ ոչ թէ նսեմացնում: Աւելի բարդ է «հրեշտակների համար» արտայայտութիւնը (ԺԱ, 10): Ընդունուած կարծիքի համաձայն այդ կապուած է Ծննդոց Զ, 1-2 համարների հետ: Յունաստանի առաջին քրիստոնեաները (որոնք հրէաներ էին) հաւատում էին, որ ընդհանրական աղօթքի պահին (եկեղեցում) ներկայ են լինում նաեւ հրեշտակներ, ուստի եւ

կանայք պէտք է ծածկեն իրենց գլուխները նրանցից: 14-րդ համարում Պօղոսն ասում է, որ բնութիւնն էլ է սովորեցնում, որ կանայք ծածկեն գլուխները, որպէս ամօթխածութեան եւ պատշաճութեան նշան:

***Հարց.*** - Ի՞նչ է ջատագովութիւնը:

***Պատասխան.*** - Ջատագովութիւն բառացի նշանակում է պաշտպանութիւն: Քրիստոնէութեան տարածման զուգահեռ անհրաժեշտ էր պաշտպանել, բացատրել, մեկնել Քրիստոսի Վարդապետութիւնը, Ս. Գիրքը, հակաճառել այս կամ այն աղանդաւորական ուղղութիւններին: Հայաստանում նոյնպէս քրիստոնէութեան տարածման զուգընթաց ծաղկեց ջատագովական, հակաճառական, մեկնողական գրականութիւնը: Եզնիկի յայտնի «Եղծը» առաջին հարուածն էր, ուղղուած հեթանոսական կրօններին: Քաղկեդոնի ժողովից յետոյ Հայոց մէջ սկիզբ է առնում հակաքաղկեդոնական շարժում, որի նպատակն էր պաշտպանել Հայ Եկեղեցու դիրքորոշումը, հիմնաւորել, հակաճառել, քննադատել քաղկեդոնական հայեացքները: Աստուածաբանութեան եւ դաւանաբանական պայքարի տեսական հարցերին զուգորդուել են նաեւ գործնական բնոյթի հարցեր (ծիսական, եկեղեցական իրաւունքի հարցեր եւ այլն), որոնք բխում էին թէ՛ ընդհանրապէս եկեղեցական կարգերի եւ թէ՛ նաեւ ազգային-եկեղեցական առանձնայատկութիւնների անխախտ պահպանութեան մտահոգութիւնից: Այսօր էլ, երբ ամէն մի հայ ընտանիքում արդէն կայ ընտանեկան «Աստուածաշունչ», անհրաժեշտաբար կարիք է զգացւում ջատագովական, մեկնողական գրականութեան: Ինչպէս տեսանք, «Հաւատամք»-ի ամէն մի նախադասութիւն, անգամ բառ, պատահականօրէն չի ընտրուած եւ ամէն անգամ այն ընթերցելիս, կարծես մի նոր բան ես գտնում: Ուստի հաստատուած լինելով այդ անխախտ դաւանութեան վրայ, ամէն մէկը անձամբ կարող է ջատագով դառնալ, պաշտպանելով մեր հայրերի հաւատը, դաւանութիւնը եւ աւանդութիւնը այսօրուայ յեղյեղուկ այլադաւան ուղղութիւններից եւ զանազան արեւելեան մոլորութիւններից:



***Հարց.*** - Մի՞թէ մեր հայրերի գրուածներն էլ կարիք ունեն մեկնաբանման:

***Պատասխան.*** - Իհարկէ՛: Առանց քրիստոնէական վարդապետութեան եւ Աստուածաշնչի իմացութեան, հաւատի, եկեղեցու աւանդութիւնների մասին որոշ գիտելիքներ ունենալու, անհնար է հասկանալ մեր հայրերին: Ս. Գրքում կայ մի գեղեցիկ պատմութիւն՝ մեկնութեան անհրաժեշտութեան մասին.

Եթովպիայի թագուհու գանձապետը Երուսաղէմից վերադառնալիս, ընթերցում էր Եսայի մարգարէի գիրքը: Այդ պահին նրան է մօտենում Փիլիպոս առաքեալը եւ հարցնում. *«Արդեօ՞ք հասկանում ես կարդացածդ»:* Նա պատասխանում է. *«Ինչպէ՞ս կարող եմ հասկանալ, եթէ մէկն ինձ չառաջնորդի»:* Եւ առաքեալը սկսում է բացատրել ու մեկնել գրուածը:

Այդպէս էլ հիմա՝ մեր օրերում, դարձեալ ու դարձեալ կարիք ունենք ջատագովական, մեկնողական գրականութեան: Նոյնը կարելի է ասել նաեւ մեր հայրերի աւանդած գրքերի մասին, օրինակ՝ Նարեկացու Մատեանի:

Հնուց ի վեր, հայ ընտանիքներում Աստուածաշնչին զուգահեռ ընթերցանութեան գիրք է եղել Նարեկացու Մատեանը, որին անուանել են Աղօթագիրք, քանի որ ամենածանր պահին կարողացել է սփոփել, բժշկել, օգնել, մխիթարել, սովորեցնել, ոտքի կանգնեցնել: Եթէ չենք ուզում, որ Մատեանը դառնայ գրադարակում երեւացող մի գիրք՝ փայլուն փոշեծածկ կազմով, ապա պէտք է ընթերցել այն նոր աչքերով, Աստուածաշնչի աչքերով, հաւատի աչքերով (Մատեանի Ա գլխի մեկնութիւնը տե՛ս «Յաւելուածում»):

***Հարց.*** - Ինչպէ՞ս հասկանալ «Հաւատամքի» 4-րդ մասը. «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»:

***Պատասխան.*** - Այստեղ ասւում է հետեւեալը.

- Յիսուս Քրիստոս չարչարուեց, խաչուեց, մեռաւ եւ թաղուեց:
- Այդ չարչարանքները նա կրեց ոչ թէ Իր մեղքի համար, այլ՝ մեր:

Ինքն անմեղ էր եւ անարատ:

Մարդկային ամէն կիրք նա կրեց, բայց առանց մեղքի.

- քաղցեց, որ կերակուր տայ բոլոր քաղցածներին.

- ծարաւեց, որ կենաց ջուր պարգեւի բոլոր իրեն հաւատացողներին.

- աշխատեց, որ հանգիստ տայ աշխատողներին ու բեռնաւորուածներին.

- արտասուեց, որ սրբի բոլոր լացողների աչքերը.

- լռեց ու մինչ իր ժամանակի գալը չյայտնեց իրեն աշխարհին.

- մկրտուեց, որ ցոյց տայ մաքրուելու ճանապարհը:

Այս ամենից յետոյ՝ համաձայն մարգարէութիւնների, չարչարուեց: Իր անմեղ մարմինը տուեց նուէր եւ պատարագ հաշտութեան: Անչարչարը չարչարուեց չարչարուելով եւ անմահը մեռաւ մահկանացութեամբ (Նարեկացի):

Քրիստոնէական կրօնի նպատակն է Աստծու եւ հաւատացեալների միաւորութիւնը: Այդ միաւորութիւնը կատարելու համար էլ մարմնացաւ անմարմին Բանն Հօր՝ Քրիստոս, որպէսզի մեզանից մերը ստանալով՝ միաւորի Իր Աստուածութեան հետ եւ նրանով Ինքը միաւորուի մեզ հետ: Այդ նպատակն իրագործելու համար էլ Յիսուս «չարչարուեց, խաչուեց եւ թաղուեց»: «Ճշմարիտ խոստովանողները եւ ապաշխարողները ազատւում են Յիսուսի փրկաւէտ մարմնով եւ արեամբ: Քանի որ նա է մեր յոյսը եւ քաւութեան միջոցը, նրանով է ազատութիւնը, ուրախութիւնը եւ ժառանգութիւնն ընդունելը բոլոր մեղաւորների համար, որոնք ապաշխարում են: Քրիստոս իր մահուամբ լուծանեց սատանայի զօրութիւնը, որ մահուան իշխանութիւնն ունէր մեղքի միջոցով: Նա իր կամաւոր խաչելութեամբ հաշտեցրեց արարածներին Արարչի հետ» (Լուսաւորիչ, Յաճախապատում):

Վերջին ընթրիքի ժամանակ Յիսուս ասաց. *«Այս արէ՛ք ինձ յիշելու համար»* (Ղուկ. ԻԲ, 19-20): Այսինքն, Պատարագի Խորհրդի հացն ու գինին ճաշակելով՝ հոգեւորապէս միանում ենք Յիսուսի հետ եւ յիշում



նրա չարչարանքները, մահը, թաղումը: Կորնթացիների Առաջին Նամակում (ԺԵ, 3-4) Պօղոս առաքեալը սահմանում է Աւետարանի էութիւնը հետեւեալ կերպ. «Ձեզ աւանդեցի այն, ինչ ինքս ընդունեցի. թէ՝ Քրիստոս մեռաւ մեր մեղքերի համար՝ ըստ գրուածների եւ թէ՝ թաղուեց եւ թէ՝ յարութիւն առաւ երրորդ օրը՝ ըստ գրուածների»: Այսինքն, Պօղոս Առաքեալը «Աւետարան» ասելով հասկանում էր երեք բան. Քրիստոսի մահը, թաղումը եւ յարութիւնը:

Քրիստոսի մահը քրիստոնէութեան ամենակենտրոնական եւ կարեւոր մասն է: Աւետարանները մանրամասն նկարագրում են Յիսուսի մահուան պարագաները՝ տեղը, ժամանակը, գերեզմանի կնքելը, սրունքների կոտրելը, գեղարդով խոցուելը եւ այլն: Նոյնիսկ Պիղատոսը եւ հրէաների իշխանները կարեւորութիւն էին տալիս Նրա մահուան մանրամասներին: Պիղատոսը Յիսուսի մահուան փաստը ճշտելուց յետոյ միայն թոյլատրեց մարմինը իջեցնել խաչից: Յիսուսի մահը սարսափեցնում էր հրէաների իշխաններին աւելի, քան՝ կենդանի Յիսուսը:

Սկսած առաջին դարից մինչեւ մեր օրերը, միշտ էլ եղել են հերձուածողներ, որոնք տարբեր ձեւերով մերժել են Քրիստոսի մահուան իրական լինելը: Չհասկանալով Քրիստոսի մահուան իմաստը, մենք չենք կարող ըմբռնել քրիստոնէութիւնն ընդհանրապէս: Առանց այդ Մահուան չկայ քաւութիւն, չկայ թողութիւն, ուրեմն եւ՝ փրկութիւն: Յիսուս իր չարչարանքներով համեմատուեց մարդկանց հետ: Եթէ Յիսուս չնմանուէր մարդկանց, չէր կարող մարդկանց փրկիչ լինել: Եթէ մէկը վիշտ, նեղութիւն չունենայ, չի կարող հասկանալ վշտերի եւ նեղութիւնների մէջ գտնուող մէկ ուրիշին: Չարչարանքների ճանապարհով գնացող մարդը միայն կհասկանայ այդ ճանապարհով գնացող մէկ ուրիշի դժուարութիւններն ու ապրումները: Յիսուս հէնց այդպէս էլ վարուեց. ինչպէս որ ինքը չարչարուեց՝ փորձութեան մատնուելով, այնպէս էլ կարող է օգնել փորձութեան ենթարկուածներին:

***Հարց.*** - Բայց ինչպէ՞ս կարող է Աստուած մեռնել:

***Պատասխան.*** - Այս հարցադրումն առիթ է տուել բազմաթիւ վէճերի ու բաժանումների: Նախնի եկեղեցու առաջին տրոհման պատճառներից մէկն էլ հէնց այդ հարցն էր (Քաղկեդոնի ժողովի որոշումները). խաչի վրայ ո՞վ մեռաւ, Քրիստոս Աստուա՞ծ, թէ՞ Քրիստոս մարդը: Մինչ այդ Չորրորդ ժողովը, եկեղեցու հայրերը հարցի լուծումը տեսնում էին Կիւրեղ Ալեքսանդրացու յայտնի բանաձեւի մէջ. «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ»: Այսինքն, չի կարելի Քրիստոսի մէջ տեսնել երկու բնութիւն, չի կարելի բաժանել Քրիստոսի բնութիւնը: Քրիստոսի մէջ անխառն ձեւով միաւորուած են մարդկային եւ Աստուածային էութիւնները եւ դրանք անբաժան են: Հայ եկեղեցին, հաւատարիմ մնալով Նախնի եկեղեցուն, չընդունեց Քաղկեդոնի եւ յետագայ Տիեզերական ժողովների որոշումները: Յայտնի է, որ Հայ եկեղեցին նաեւ չմասնակցեց Քաղկեդոնի ժողովին, ուրեմն եւ անուանել այն «Տիեզերական» սխալ է, քանի որ Արեւելեան շատ եկեղեցիների բացակայութիւնը նրան զրկում է Տիեզերական լինելուց: Հայ եկեղեցում «Հաւատամքն» ընթերցելուց յետոյ, անմիջապէս ընթերցում են Ս. Գրիգոր Լուսաւորիչի «Իսկ մեք փառաւորեսցուք»-ը, որը նշանակում է, թէ հաւատի խնդիրներում երկար վէճերն աւելորդ են: Այսինքն, մենք ընդունում ենք միայն Նիկիական Հանգանակը, միայն առաջին երեք Տիեզերական ժողովները եւ մերժում ամէն մի յաւելում Հանգանակի վրայ (Դուինի Ա ժողովի որոշումներից, 507 թ.): Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թէ ո՞վ մեռաւ խաչի վրայ, մա՞րդ, թէ՞ Աստուած, հայրերը մեկնել են շատ պարզ եւ հասկանալի ձեւով.

Ինչպէս որ ծաղիկը տրորելիս հոտը չի տրորւում եւ հրացեալ երկաթը ծեծելիս, հուրը չի ծեծւում, այնպէս էլ Քրիստոս անբաժան է, եւ չարչարանքը, տրտմելը, յոգնելը վերաբերում են Քրիստոսին որպէս անբաժան Աստուածմարդու:

Վերջին ժամանակներում այդ խնդիրը Պոլսի Շնորհք պատրիարքը մեկնաբանել է այսպէս.

«Մարդ մարմնի եւ հոգու միաւորութիւնն է եւ իրենից ներկայացնում



է մի բնութիւն, այնպէս որ չի կարելի մարդացեալ Աստծուն վերագրել երկու բնութիւններ: Մարդը ծնուելով հօրից եւ մօրից չունի երկու բնութիւն, այլ մէկ. նա իրեն չի պահում մի դէպքում որպէս կին եւ մի ուրիշ դէպքում՝ որպէս տղամարդ: Զինուորները չկարողացան բաժանել Յիսուսի զգեստը, իսկ Քաղկեդոնը Յիսուսին բաժանեց երկու մասի: Յորդանանում (Մկրտութեան ժամանակ), Թաբոր լերան վրայ (Պայծառակերպութեան ժամանակ) երկնքից ձայն լսուեց՝ «Դա է իմ սիրելի Որդին», եւ ոչ թէ «Նրա մէջ է իմ սիրելի Որդին», այսինքն այդ «Դա»ն ցոյց է տալիս Յիսուսի մի միասնական բնութիւնը» (Օրագիր, 1935 թ.):

Այս առումով շատ հետաքրքրական է «Երեքսրբեանի» պատմութիւնը, որի պատճառով միշտ վէճեր են եղել օտար եկեղեցիների հետ, մասնաւորաբար՝ յոյն:

Յոյն եկեղեցում այն հնչում է այսպէս. «Է ագիոս օ թէոս էագիոս իսխեւրոս էագիոս աթանատոս, էլէիսոն իմաս», որ թարգմանւում է՝ Սուրբ Աստուած, Սուրբ Հզօր, Սուրբ անմահ, ողորմեա մեզ:

Հայոց եկեղեցում «Երեքսրբեանը» երգում են այսպէս. Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, (որ խաչեցար վասն մեր), ողորմեա մեզ: Ըստ տօնի փակագծում նշուածը փոխւում է. օրինակ, Հոգեգալստեան ժամանակ «որ խաչեցար վասն մեր»-ի փոխարէն երգում են՝ «որ եկիր եւ հանգեար յառաքեալսն»:

«Երեքսրբեանի» մասին Տաթեւացու եւ այլոց մօտ գրուած է հետեւեալ պատմութիւնը.

Երբ Յովսէփ Արիմաթացին փորձեց Յիսուսին խաչից իջեցնել, չկարողացաւ, քանի որ նրա վիրաւոր տեղերից լոյս էր փայլատակում եւ սարսափեցնում Խաչի մօտ կանգնածներին: Եւ այդ ժամանակ Յովսէփ Արիմաթացին ձեռքերը վեր բարձրացնելով աղօթեց. «Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»: Ու դրանից յետոյ միայն կարողացաւ խաչից իջեցնել Յիսուսի մարմինը եւ թաղել:

Նախնի եկեղեցին (այդ թւում նաեւ Հայ եկեղեցին) աւանդապահ

գտնուելով՝ պահպանեց «Երեքսրբեանի» այդ ձեւը: Սկսած 5-րդ դարից (Քաղկեդոնի ժողովից յետոյ), Արեւմտեան Եկեղեցին «Երեքսրբեան»-ում աւելացրեց՝ «որ մարմնով խաչեցար» յաւելումը եւ դրանով իսկ բաժանուեց աւանդապահ եկեղեցիներից՝ բաժանելով Քրիստոսի աստուածութեան եւ մարդկայնութեան միասնութիւնը:

Գիրք Թղթոցում գտնում ենք «Երեքսրբեանի» հետեւեալ մեկնութիւնը.

«Սուրբ Աստուած Սուրբ եւ հզօր» - Սուրբ Աստուած, որ յաւիտենից առաջ էիր եւ կոյսից ծնուեցիր, խաչուեցիր եւ թաղուեցիր անբաժան Աստուածութեամբ եւ անբաժան մարմնաւորութեամբ. խոնարհելով հզօրապէս յաղթեցիր մեղքը եւ դժոխքը աւերեցիր: «Սուրբ եւ անմահ» - թէպէտ կամաւորաբար մահ կրեցիր՝ անմահ ես: Անդունդը սարսափում է, երբ յիշում է խաչեալին. Սուրբ Աստուած, որին ապտակեցին, որի վրայ թքեցին եւ գեղարդով ծակեցին, իր արիւնը թափեց մեզ համար. Սուրբ Աստուած ողորմեա մեզ»:

Ինչո՞ւ էր Եկեղեցին այսքան մեծ ուշադրութեան արժանացնում այս ոչ մեծ թուացող «Երեքսրբեանը»: Որովհետեւ Յիսուսի մահը, խաչելութիւնը քրիստոնէութեան ամենակարեւոր կէտերն են:

Դուինի 5-րդ ժողովի որոշումներում մասնաւոր կետ կայ «Երեքսրբեանի» համար.

«Խաչեցարը երեք անգամ ասել՝ չնուազեցնել եւ դրանով իսկ զրկուել Քրիստոսի խաչի շնորհքներից»:

Շնորհալին Յիսուսի այն խօսքերը, որ նա ասում էր իր մահուան մասին («հասաւ ժամը, որ փառաւորուի մարդու Որդին») մեկնում է այսպէս. «մեր Տէրը իր չարչարանքները կոչում է փառք, եւ ոչ թէ՝ անարգանք»:

Միայն քրիստոնէութեան մէջ է փրկութիւնը ծրի պարգեւ համարւում: Այն տրւում է մարդկանց ոչ թէ նրա համար, որ մարդիկ արժանի են դրան, այլ որովհետեւ Աստծու սէրն ու բարութիւնը սահման չունի:

***Հարց.*** - Մի՞թէ Քրիստոսի մահը անհրաժեշտութիւն էր:

***Պատասխան.*** - Մեղքի պատճառով մարդը հեռացաւ Աստծուց: Եւ



որպէսզի մարդ ի վիճակի լինէր Սուրբ Աստծու առաջ կանգնել, Աստուած ինքը ցոյց տուեց այդ ճանապարհը. միայն մեղքերից սրբուած մարդը կարող է կանգնել Աստծու առաջ: Հինկտակարանեան զոհի արիւնը կատարեալ չէր. քանի որ մարդ միշտ ենթակայ է մեղանչելու, ապա միշտ էլ կարիք ունի զոհի արեան: Հինկտակարանեան մարգարէները այս հասկանալով՝ հաւատի աչքերով տեսան այն յաւիտենական, վերջնական եւ կատարեալ զոհին՝ Աստծու Գառին՝ Քրիստոսին, որ գալու էր եւ իր արիւնով փրկելու էր մարդկութիւնը:

Էմմաուսի ճամփորդներին Քրիստոս բացատրում էր, որ ամբողջ Հին Կտակարանը իր մահուան եւ չարչարանքների մասին է:

Ուրեմն Հին Կտակարանում հաւատի աչքերով էին նայում այդ գալիք փաստին՝ Խաչին, եւ այդ հաւատով էլ փրկւում էին, իսկ մենք հիմա փրկւում ենք յետ նայելով նոյն այդ փաստին՝ Խաչին: Այսինքն, Խաչը միշտ էլ եղել է Աստծու տնօրինութեան ամենակենտրոնական կէտը բոլոր ժամանակներում:

Այստեղ բնականաբար հանդիպում ենք մի քանի աստուածաբանական գաղափարների՝ քաւութիւն, թողութիւն, զոհաբերութիւն, փոխանորդական մահ եւ այլն, առանց որոնց չենք կարող պատկերացնել աչի վրայ կատարուած դէպքը՝ Յիսուսի խաչելութիւնը:

Հայ Եկեղեցին ճանաչել է Խաչի սրբազան խորհուրդը, նրա կարեւորութիւնը, իմաստը, նշանակութիւնը եւ զօրութիւնը: Իզուր չէ, որ մենք հնուց ի վեր մեզ անուանել ենք խաչապաշտ, նոյնացնելով Խաչը Յիսուսի հետ: Ս. Խաչը ոչ միայն Յիսուսի խաչելութեան գործիքն է, որից այս օրերին այդպէս վախենում են նորայայտ օտար եւ հիւսիսից կամ արեւմուտքից եկած ուղղութիւնները, այլ նաեւ ամբողջ քրիստոնէութեան խորհրդանշանն է, Քրիստոսի քարոզած բոլոր սկզբունքների եւ աստուածային ճշմարտութիւնների իրականացման ճանապարհը: Աշխարհի համար Խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, բայց հէնց դրանում է Քրիստոսի զօրութիւնը: Մեր երեսը խաչակնքելով մենք Ս. Նշանի (Խաչի) պաշտպանութեանն ենք ապաւինում, նրա փրկագործ խորհուրդը դաւանելով:

Տաթեւացին խաչելութեան տեսարանն այսպէս է մեկնում.

-Յիսուս իր գլուխը խոնարհեց Խաչի վրայ, որը հաշտութեան նշանն է ցոյց տալիս:

- Ձեռքերի տարածումը աջ եւ ձախ՝ բոլոր դարձի եկողներին գրկելն է նշանակում:

- Կողի բացուելը՝ մեզ թանկ գնով գնելն է խորհրդանշում:

- Ջրի եւ արեան բխելը՝ նշանն է մեր մաքրուելու, սրբուելու իր արեան միջոցով:

- Ոտքերի եւ ձեռքերի մեխելը՝ մեզ միշտ յիշելն է խորհրդանըշում:

- Մարմնի մերկացումը (զինուորները զգեստի վրայ վիճակ գցեցին)՝ սովորեցնում է մեզ Աստծու առաջ կանգնել մաքուր, բաց սրտով, անկեղծ խոստովանութեամբ:

- Խաչ բարձրանալը ցոյց է տալիս Նրան հետեւելու ճանապարհը:

- Փշէ պսակը՝ մեր փառաւորման նշանն է Աստծու թագաւորութեան մէջ:

***Հարց.*** - Յիսուս Խաչի վրայ աղաղակեց. «էլի՜, էլի՜ լամա սաբաքթանի», այսինքն՝ Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ ինձ թողեցիր (Մատթ. ԻԷ, 46): Մի՞թէ այստեղից չի հետեւում, որ Քրիստոս ունէր երկու բնութիւն եւ մէկը՝ Աստուածութիւնը, թողել էր իրեն:

***Պատասխան.*** - Այդ խօսքերը ԻԱ սաղմոսի 1-ին համարի բառերն են: Օրթոդոքսները (պրաւոսլաւ) եւ կաթոլիկները հենց այս համարն են բերում, ապացուցելու Քաղկեդոնի որոշումների ճշմարտացիութիւնը: Հայրերը դրան ի պատասխան՝ բերել են Մատթ. ԻԸ, 5 համարի հրեշտակների յայտարարութիւնը. «Նա, որ խաչուեց, այստեղ չէ, այլ յարեաւ»: Այսինքն, եթէ յարուցեալն Աստուած էր, ուրեմն խաչուածն էլ էր Աստուած:

Յիսուսին ապտակեցին, փշէ պսակ դրին գլխին, եւ նա խոնարհուելով մեզ նման աղօթեց Հօրը եւ մեզ էլ սովորեցրեց Հօր կամքին հնազանդ լինել: Ամենայն գործ, որ նա գործեց, անճառելի եւ անհասանելի



միաւորութեամբ գործեց, այլ ոչ թէ բաժան-բաժան եղած բնութեամբ: Իսկ Խաչի վրայ նրա արտասանած խօսքերը օրինակ են մեզ համար, նեղութեան պահին Հօրը դիմելու (Տաթեւացի):

Ճշմարիտ Աստուած դարձաւ ճշմարիտ մարդ եւ նոյն ճշմարիտ Աստուած եւ մարդ գամուեց Խաչի վրայ: «Հրեաները մարմինը խաչելով՝ Աստծուն խաչեցին եւ ոչ թէ միայն մարդուն» (Եփրեմ Խուրի):

Նախնի Եկեղեցում հայրերը միշտ եւ ամէն տեղ Յիսուսին դիտել են որպէս մէկ եւ երբեք չեն բաժանել երկու մասի: Դրա մէջ մեծ վտանգ տեսնելով՝ Ս. Կիւրեղ Ալեքսանդրացին ասում էր. «Եթէ որեւէ մէկը ասի, թէ այլ էր նա, որ չարչարուեց եւ այլ էր նա, որը չչարչարուեց, եւ չխոստովանի, որ Բանն իր մարմնով չարչարուեց առանց փոփոխուելու, ինչպէս եւ գրուած է, նզովեալ լինի»:

Այժմ սաղմոսի մասին:

Այդ սաղմոսը (ԻԱ) յայտնի է «խաչելութեան եւ չարչարանքների սաղմոս» անունով: Այն ընթերցելիս, թւում է, թէ ընթերցում ես Աւետարանների վերջին գլուխները՝ չարչարանքների մասը: Սաղմոսը սկսւում է յուսահատական մի աղաղակով եւ աւարտւում Աստծու փառաբանութեամբ: Հասկանալի է, որ մահուան չարչարանքների մէջ գտնուող մարդը բանաստեղծական մէջբերումներով չէր զբաղուի, այսինքն՝ Յիսուսի այդ խօսքերը հզօր ապացոյցն են այն փաստի, որ մեռնողն Աստուած էր: Միւս կողմից այդ խօսքերը նաեւ ապացոյցն են Յիսուսի պատմական, իրական անձ լինելու: Դրանում համոզուելու համար բաւական է համեմատել Խաչի վրայ արտասանած խօսքերը՝ սաղմոսի խօսքերի հետ:

Մատթ. ԻԷ, 46. - էլի՜, էլի՜ լամա սաբաքթանի:

Սաղմ. ԻԱ, 1. - Բնագրի լեզուով հնչում է այսպէս՝ էլի՜, էլի՜ լամա էզեբթանի:

Երկուսն էլ ունեն նոյն իմաստը. «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ինչո՞ւ ինձ թողեցիր»: Տարբերութիւնը բայերի մէջ է: Գեզենիուսի յայտնի բառարանում գտնելով այդ բառերը՝ կտեսնենք, որ «էզեբթանին»

դասականն է «թողնել» բայի, իսկ «սաբաքթանին» նոյն «թողնել» բայի խօսակցական տարբերակն է (արամէերէն), ընդ որում առաջին դարի, այսինքն՝ Յիսուսի ժամանակների: Յիշենք նաեւ, որ Մատթէոս աւետարանիչը, քաջ գիտենալով եբրայերէնը եւ Հին Կտակարանը, կտեսնէր այդ տարբերութիւնը եւ եթէ «սրբագրէր», ապա կվերացնէր այդ տարբերութիւնը: Ուրեմն, սխալը բացառւում է, եւ աւետարանիչի գրածը հաւաստի է: Այսինքն՝ միայն Աստուած կարող էր Խաչի վրայ սաղմոսի համարներով աղօթել եւ երկրորդ՝ միայն առաջին դարի առաջին կէսում ապրող անձը կարող էր այդ նոյնը արտաբերել իր ժամանակուայ խօսակցականով: Այս «լեզուաբանական» ապացոյցը կրկին անգամ ցոյց է տալիս Յիսուսի անբաժան եւ մէկ բնութիւնը, այսինքն՝ արտայայտում է Ս. Կիւրեղի բանաձեւը:

*Հարց.* - Իսկ ինչի՞ համար մեռաւ Քրիստոս:

***Պատասխան.*** - Քրիստոս, լինելով Աստծու Որդի, Փրկիչ եւ Աստծու Գառը, Իր մահուամբ յաղթեց աշխարհին, նոր ճանապարհ բացելով դէպի անմահութիւն: Նա Աստծու Թագաւորութիւնը աշխարհ բերեց, Փրկութեան Բարի Լուրը (Աւետարանը) մատչելի դարձրեց բոլորին: Քրիստոսի մահը միայն սկիզբն էր այն հրաշափառ առաքելութեան, որի համար նա աշխարհ եկաւ: «Հաւատամքի» յաջորդ մասում աւում է «Յարութեան» մասին, որով եւ աւարտւում է այն գործը, որ Յիսուս յանձն էր առել կատարել: Այդ մասին քիչ յետոյ: Եթէ Յիսուս իր կեանքը աւարտէր մահուամբ եւ յարութիւն չառնէր, քրիստոնէութեան շէնքը այդպէս էլ մեռած կմնար: Այդ դէպքում Յիսուսի անունը միայն կլրացնէր Հին աշխարհի այն մեծ մարդկանց ցուցակը, որոնք իրենց հանճարի հետքն են թողել պատմութեան մէջ. ոչ աւելի: Ուրեմն, խօսելով Յիսուսի մահուան մասին, միշտ պէտք է անբաժանելիօրէն նկատի ունենալ նաեւ Նրա հրաշափառ յարութիւնը, համբարձումը եւ այլն: Այդպէս էլ «Հաւատամքում». քննելով նրա որեւէ մաս, այն պէտք է դիտել ամբողջութեան մէջ, որպէս մի միութեան առանձին բաժին:



Անփոփենք. Ս. Գիրքը սովորեցնում է, որ Յիսուս մեռաւ

1. Մեղքի համար (Ես., ԾԳ, 5),
2. Շատերին Փրկանք տալու համար (Մատթ. Ի, 28),
3. Մեր մեղքերի քաւութեան համար (Ա Յովհ., Դ, 10),
4. Օրէնքի անէծքից ազատելու համար (Գաղ., Գ, 10),
5. Մեր Զատիկը լինելու համար (Ա Կորնթ. Ե, 7),
6. Այս չար աշխարհից մեզ փրկելու համար (Գաղ., Ա, 4),
7. Մարդկանց Աստծուն մօտեցնելու համար (Ա Պետր., Գ, 18):

Քրիստոսի մահուանից յետոյ փոխուեց նաեւ Մարդ-Աստուած յարաբերութիւնը.

1. Մարդը հաշտուեց Աստծու հետ (Հռ., Ե, 10),
2. Մեղքի թողութիւն ստացաւ (Եփես., Ա, 7),
3. Նրա արեամբ արդարացուեց (Հռոմ., Ե, 9),
4. Որդեգրուեց (Գաղ., Դ, 4),
5. Նրա զոհաբերութեամբ սրբուեց (Եբր., Ժ, 10),
6. Մեռած գործերից մաքրուեց (Եբր., Թ, 14),
7. Արժանացաւ նրա հետ ապրելու շնորհին (Ա Թեսաղ., Ժ, 10):

Հետեւաբար, մեր փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, եկաւ, մեզ մեղքերից փրկեց եւ ցոյց տուեց ճշմարիտ ճամփան, որով կարելի է Աստծու թագաւորութիւն գնալ. Քրիստոս իր մահուամբ մահը խափանեց եւ լուսաւոր դարձրեց կեանքն ու անմահութիւնը՝ Աւետարանի միջոցով: Ով հետեւի Յիսուսին, կապրի նրա սիրոյ եւ բարութեան կեանքը, կփրկուի, իսկ ով որ չի ճանաչում այդ ճշմարիտ լոյսը եւ չի հետեւում Յիսուսի փրկութեան ճանապարհին՝ կդատապարտուի եւ կզրկուի Աստծու երանաւէտ ներկայութիւնից:

Եւ եթէ հետեւենք Փրկչին եւ սովորենք այդ ճանապարհը, կփրկուենք: Աստուած Քրիստոսի միջոցով արեց այն, ինչ մարդը չէր կարող անել: Աստուած ճանապարհ պատրաստեց, որ մարդն ազատուի իր մեղքերից եւ սրբուի::

## ԾԻՍԱԿԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ

***Հարց.*** - Ի՞նչ հիմնական տարբերութիւններ կան Հայ Առաքելական եկեղեցու եւ միւս եկեղեցիների միջեւ:

***Պատասխան.*** - Այս հարցը քննելուց առաջ օգտակար կլինի ծանօթանալ որոշ պատմական տեղեկութիւնների հետ.

Ա. Հայ եկեղեցին Առաքելական, Քրիստոսի Ընդհանրական եկեղեցու մի հարազատ ճիւղն է: Քրիստոնեայ բոլոր եկեղեցիները մինչեւ Քաղկեդոնի ժողովը (451 թ.) մէկ էին: Բոլոր եկեղեցիները միեւնոյն դաւանանքն ու վարդապետութիւնները ունէին եւ միեւնոյն եկեղեցու տարբեր մասերն էին: Ամէն մէկը կարող էր գնալ ուրիշ ազգերի եկեղեցի եւ հաղորդութիւն ընդունել, քանի որ միեւնոյն դաւանանքն ունէին, եւ տարբերութիւնն այն էր, որ տարբեր լեզուներով էին խօսում:

451 թ.-ից յետոյ եկեղեցիները բաժանուեցին: Հայերը չընդունեցին նրա որոշումները, որ Յիսուսի համար «երկու բնութիւն եւ երկու կամք» էր դաւանում: Մինչ առաջին երեք Տիեզերական ժողովներում ընդունուած բանաձեւն էր՝ «Մի բնութիւն՝ Բանին մարմնացելոյ»: Այս երեք ժողովներն են որոշել դաւանութեան հիմնական կէտերը՝ Ս. Երրորդութեան, մարդեղութեան մասին, փրկչական խորհուրդները եւ Հաւատամքը:

Բ. Քրիստոնէական եկեղեցին այսօր ներկայացնում է Հին եւ Նոր եկեղեցիները: Հին եկեղեցիները բաժանւում են երկու մասի՝ Արեւմտեան եկեղեցիներ եւ Արեւելեան եկեղեցիներ: Արեւմտեան եկեղեցին Հռոմէական Կաթոլիկ եկեղեցին է: Արեւելեան եկեղեցին իր հերթին դարձեալ բաժանւում է երկու մասի՝ Արեւելեան Օրթոդոքս (Ուղղափառ) քաղկեդոնական եկեղեցիներ եւ Արեւելեան Ուղղափառ ոչ քաղկեդոնիկ եկեղեցիներ: Առաջին խմբի մէջ մտնում են յոյն, ռուս, վրաց եւ այլ եկեղեցիներ, իսկ երկրորդի մէջ՝ հայ, ասորական, ղպտական, եթովպիական եւ այլ եկեղեցիներ: Քաղկեդոնի «միութիւնը» երկար չտեւեց: ԺԱ



դարում Պապը Հանգանակի Սուրբ Հոգուն վերաբերող մասում աւելացրեց «յՈրդւոյ» բառը (Բխումն ի Հօրէ եւ յՈրդւոյ): Այդ «ողբերգական» բառն էլ դարձաւ վէճերի ու բաժանման պատճառը: Այս բաժանումից յետոյ արեւելեան յոյն եկեղեցին իրեն անուանեց «Յոյն Օրթոդոքս (Ուղղափառ) եկեղեցի», իսկ արեւմտեան կամ լատին եկեղեցին՝ կաթոլիկ (ընդհանրական) եկեղեցի:

ԺԶ դարում Հռոմի եկեղեցում ծաւալուեց բարենորոգչական շարժում (Լիւթեր, Կալուին եւ այլն), որի հետեւանքն եղաւ ընդհանուր Բողոքական եկեղեցու առաջացումը՝ իր բազմաթիւ ու բազմազան ճիւղաւորումներով:

Գ. Հռոմի եկեղեցու գլուխը համարւում է Հռոմի Պապը, որի խօսքը համարւում է անսխալական՝ դաւանաբանական եւ այլ հարցերում: Պապը ընտրւում է կարդինալների կողմից՝ կարդինալների միջից: Յոյն Ուղղափառ եկեղեցու պատմական Աթոռը համարւում է Կ. Պոլսի Պատրիարքութիւնը, որի գահակալը կոչւում է «Տիեզերական Պատրիարք»: Հայ եկեղեցու գլուխն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայ եկեղեցին Կաթողիկոսին անսխալական չի հռչակում, այլ անսխալականութիւնը դիտում է եկեղեցու ամբողջութիւնը ներկայացնող Տիեզերական ժողովի մէջ: Կաթողիկոսը ընտրւում է եպիսկոպոսների միջից, ձեռնադրւում է եւ օծւում: Կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման կարգը բնորոշ է միայն Հայ եկեղեցուն, մինչ միւս եկեղեցիներում «եկեղեցու գլուխը» միայն ընտրւում է, ձեռնադրութիւն եւ օծում չեն կատարում: Հայերի մէջ կան նաեւ կաթոլիկ դաւանանք ունեցող հայեր (Հայաստանում բնակուող հայ կաթոլիկներին ժողովուրդը յաճախ կոչում է «ֆրանկ» անունով): Կաթոլիկ հայ եկեղեցու գլուխն է ընտրովի Պատրիարքը: Արեւելեան եկեղեցում քահանաները պէտք է ամուսնացած լինեն: Հռոմի եկեղեցում քահանաները չեն ամուսնանում, կուսակրօն են:

Դ. Բողոքական եկեղեցին չունի նուիրապետական կարգ, հետեւաբար չկայ նաեւ «Բողոքական եկեղեցու գլուխ» հասկացութիւն: Բո-

ղոքական եւ Կաթոլիկ եկեղեցիների միջին դիրքում է Անգլիկան եկեղեցին, որն առաջացել է ԺԶ դարում՝ բողոքական շարժման հետեւանքով: Ի տարբերութիւն միւս բողոքական եկեղեցիների, Անգլիկան եկեղեցին ունի նուիրապետական կարգ եւ ընդունում է Հին եկեղեցիների կողմից ընդունուած որոշ դաւանաբանական սկզբունքներ (Նիկիայի «Հաւատամքը», եօթը խորհուրդները եւ այլն):

Ե. Յոյն Ուղղափառ (կամ պատմական Բիւզանդական) եկեղեցին ընդունում է միայն առաջին եօթը Տիեզերական ժողովները, Հայ եկեղեցին՝ միայն առաջին երեքը (Նիկիայի՝ 325 թ., Կոստանդնուպոլսի՝ 382 թ. եւ Եփեսոսի՝ 431 թ.): Միւս ժողովներին (Քաղկեդոն՝ 451 թ., Կոստանդնուպոլսի Բ՝ 553 թ., Կոստանդնուպոլսի Գ՝ 681 թ., եւ Նիկիայի Բ՝ 767 թ.) Հայ եկեղեցին տիեզերականութեան ուժ եւ հեղինակութիւն չի տալիս:

Զ. Հայ եկեղեցին ընդունում եւ հետեւում է հետեւեալ կանոնին.

«Միութիւն ի կարեւորս,

ազատութիւն յերկբայականս

եւ սէր յամենայնի»,

որ թարգմանւում է՝ միութիւն կարեւոր հարցերում, երկրորդականներում՝ ազատութիւն, իսկ ամէն ինչում՝ սէր:

Է. Քրիստոսի բոլոր ճշմարիտ եւ ուղղափառ եկեղեցիները իրենց անդամներին ցոյց են տալիս ճշմարտութեան ճամփան եւ ամէնքն էլ Յիսուսի Աւետարանի վրայ են հիմնուած: Այս է «ամէն բանում՝ սէր» սկզբունքը: Իսկ ինչ վերաբերում է այն նորահնար կոչերին, թէ՝ մեր եկեղեցուց դուրս չիք փրկութիւն, մերժելի են ու անընդունելի, որ եկեղեցու կողմից էլ որ հռչակուած լինի: Այսինքն՝ այստեղ բացակայում է «ամէն բանում՝ սէր» սկզբունքը, եւ հետեւաբար քրիստոնէական չեն:

Ը. Հայ եկեղեցին հիմնել են Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալները եւ ըստ այդմ նրա անունն է «Հայաստանեայց Առաքելական եկեղեցի»: Միայն ռուսներն են Հայաստանեայց եկեղեցուն կոչում «Հայ Գրիգորեան եկեղեցի» անունով, նշելով Ս. Գրիգոր Լուսաւորչին, այսինքն՝



Հայ եկեղեցու ծագումը դնելով 301թ.-ին, մինչդեռ Հայ եկեղեցին Առաքելադիր է, իսկ Ս. Լուսաւորչի օրօք մենք ամբողջ ազգով պետականօրէն ընդունեցինք քրիստոնէութիւնը եւ այդ ժամանակ էլ ծնուեցինք Ս. Աւետարանի խօսքով, իսկ եկեղեցին Հայաստանում սկիզբ էր առել դեռեւս առաքելական շրջանից: Յիշենք Աբգարի, Սանատրուկի, Սանդուխտ կոյսի եւ այլոց պատմութիւնները: Հայ եկեղեցին սրբացնելով այդ աւանդութիւնները, ընդունում է նրանց ճշմարտացիութիւնը: Ուղղափառները չեն ընդունում մեր եկեղեցու առաքելական ծագումը եւ մինչ հիմա ջանում են ապացուցել վերոյիշեալ անձերի ոչ պատմական լինելը. աւելացնենք, որ այդ բանակի մէջ իրենց «ուրոյն» տեղն ունեն նաեւ հայ պատմաբանները, հայ կաթոլիկ հայրերից ոմանք եւ այլն: Չգիտես ինչու, ճշմարիտ է համարւում Հռոմի եկեղեցու առաքելադիր լինելու աւանդութիւնը, մինչ Հայ եկեղեցու համար այն համարւում է ոչ ճշմարիտ, չնայած որ պատմագրական տեղեկութիւնների շատութեամբ ու ստուգութեամբ Հայ եկեղեցին չի զիջում Հռոմի եկեղեցուն:

Թ. Հայ եկեղեցին լինելով Ընդհանուր Քրիստոնէական եկեղեցու մէկ անդամը, իր տօնացոյցի մէջ ընդգրկում է նաեւ ազգութեամբ ոչ հայ սրբերի: Տօնացոյցի մէջ ընդգրկուած են հիմնականում Ա-ԺԵ դարերի սրբերը, որոնց վարքը արձանագրուած է «Յայսմաւուրքում»:

Հայ եկեղեցու հայազգի տօնելի սուրբերն են՝ Սանդուխտ կոյս, Ոսկեանք, Սուքիասեանք, Հռիփսիմեաց կոյսեր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ թագաւոր, Արիստակէս եւ Վրթանէս, Ներսէս Մեծ, Սահակ ու Մեսրոպ եւ նրանց թարգմանիչ աշակերտները, Վարդանանք, Վահան Գողթնացի, Յովհաննէս Օձնեցի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի եւ Մովսէս Տաթեւացի:

Օտար եկեղեցիներում հայազգի սուրբերից նշում են Ս. Գրիգոր Լուսաւորչի յիշատակը:

Բացի սուրբերից հայոց մէջ եղել են նաեւ բազմաթիւ վկաներ (նրանք, ովքեր նահատակուել են Յիսուսի անուան համար՝ վկայելով

իրենց հաւատարմութիւնը Աւետարանին եւ Քրիստոսին): Բազմաթիւ աղբիւրներից եւ ձեռագրերից Մանանդեանն ու Աճառեանը հաւաքել են ԺԲ-ԺԶ դարերի շուրջ 150 վկաների մասին տեղեկութիւններ: Առաւել յայտնի վկաներից են Զաքարիա կաթողիկոս Աղթամարցին եւ մեծն Սայեաթ-Նովան: Ինչ խօսք, որ հիմա, այդ ցանկը կարելի է աւելացել վերջին՝ կարմիր ժամանակների բազմաթիւ նորանոր անուններով:

Ժ. Նոր Եկեղեցու ճիւղերից շատերի մօտ այնպիսի յաւակնութիւն կայ, թէ իրենց աղօթքի ու պաշտամունքի ձեւերը համաձայն են առաքելական դարի պարզութեանը: Սա ոչ թէ յաւակնութիւն է, այլ՝ ինքնախաբէութիւն: Նոր Եկեղեցու եւ ոչ մի ճիւղ իր պաշտամունքային ձեւով նման չէ առաքելական դարի քրիստոնեաների պաշտամունքի ձեւերին:

Քրիստոնէական կրօնը Աստուծոյ բացառիկ յայտնութիւնն ու միջամտութիւնն է պատմութեան եւ մարդկային կեանքի մէջ: Քրիստոնէական սկզբնական շրջանում ամէն ազգ իրեն յատուկ ձեւով եւ ոգով կազմեց ու դասաւորեց իր ծէսը: Հայ Եկեղեցու ծէսը Ընդհանուր Եկեղեցու ծէսերի մէջ ինքնայատուկ է եւ շեշտուած է իր ազգային նկարագրով ու արտայայտութեամբ: Հայ Եկեղեցու ծէսը ծնունդ առաւ եւ կազմաւորուեց գրերի գիւտից յետոյ եւ ապա Աստուածաշնչի թարգմանութեամբ: Այստեղից սկսած Հայ Եկեղեցին թէ՛ իր վարդապետական ըմբռնումով եւ թէ՛ իր իւրայատուկ ծէսով, ազգային ուրոյն դրոշմ ստացաւ եւ ազգայնացաւ:

Բաւականին շատ են ոչ էական, երկրորդական տարբերութիւնները թուարկած բոլոր եկեղեցիների միջեւ, որոնք հիմնականում ծիսական բնոյթ են կրում: Այսպէս.

-Հայերը եւ կաթոլիկները նոյն ձեւով են խաչակնքւում՝ ձախից աջ, իսկ ուղղափառները՝ աջից ձախ:

-Ասորիները մէկ մատով են խաչակնքում, իսկ միւս ազգերը՝ երեք մատը սեղմած:

-Բողոքական յարանուանութիւնները չեն խաչակնքում ընդհանրապէս եւ այլն:



ԺԱ. Այժմ մի քանի խօսք այն տարբերութիւնների մասին, որոնք միշտ հարցեր եւ վէճեր են առաջացնում տարբեր եկեղեցիների պատկանող հաւատացեալների միջեւ:

Ինչպէս նշեցինք, Հայ Եկեղեցու եւ կաթոլիկ ու ուղղափառ եկեղեցիների միջեւ հիմնական անջրպետը Քաղկեդոնն է, իր որոշումներով ու դրանցից բխող հետեւութիւններով:

Մնացած դաւանաբանական խնդիրներից կաարելի է առանձնացնել՝

- Քաւարանի հարցը,
- Պատկերների հարցը,
- Աստուածամօր անարատ յղութեան հարցը,
- Ս. Հոգու բխման հարցը:

Բողոքական եկեղեցու հետ ունեցած խնդիրներից կարելի է առանձնացնել՝

- Սուրբերի բարեխօսութեան հարցը,
- Ննջեցեալների համար հոգեհանգիստ կատարելու հարցը,
- Յիսուսի «եղբայրների» հարցը,
- Մանկամկրտութեան հարցը,
- Մատաղի հարցը,
- Վերստին Ծննդի եւ Ս. Հոգու պարգեւների առնչութիւնը:

***Հարց.*** - Ի՞նչ է քաւարանը:

***Պատասխան.*** - Համաձայն կաթոլիկների քաւարանը մի մասնաւոր տեղ է, ուր մահուանից յետոյ հոգիները գնում են սրբուելու, որտեղ էլ մեղքերից ազատուելով միանում են փրկուած հոգիներին: Հայ Եկեղեցին չի ընդունում նման գաղափարը եւ մերժում է այն:

Հայաստանեայց Եկեղեցին ընդունում է, որ
աստ շնորհքն է,
անդ՝ փառքն,
աստ մեղքն է, անդ՝ պատիժ:

Հոգին այնտեղ չի կարող ապաշխարել եւ քաւել մեղքերը, քանի որ ապաշխարութեան ժամանակը այս կեանքն է, ինչպէս որ ասում է Պօղոս առաքեալը. *«Հիմա է ընդունելու ժամանակը եւ հիմա է փրկութեան օրը»* (Բ Կորնթ., Զ, 2, Եսայի ԽԹ, 8):

Մի դիտողութիւն այդ համարի *«ժամանակ»* բառի մասին. հին յունարէնում (Նոր Կտակարանի լեզուն) կայ երկու բառ «ժամանակ» իմաստով՝ «քրոնոս» եւ «կայրոս»: Առաջինը նշանակում է ժամանակի ֆիզիկական ընթացքը: Երկրորդը՝ ժամանակի էութիւնը, իմաստը, բովանդակութիւնը: Այսպէս՝ օրացոյցը կամ ժամացոյցը ցոյց են տալիս «քրոնոսը»: Բայց Քրիստոսի ծնունդով աշխարհում սկսուեց մի նոր ժամանակ («կայրոս» ու ոչ թէ՝ «քրոնոս»)՝ նոր բովանդակութեամբ եւ իմաստով: Պօղոսն օգտագործել է այս համարում «ժամանակ» բառի համար յունարէն «կայրոս» բառը: Հետեւաբար, ընդունելու ու փրկուելու ժամանակը հիմա է՝ Քրիստոսից յետոյ եւ Քրիստոսով աշխարհ բերած ժամանակում: Այդ ժամանակը միայն «ֆիզիկական» ժամանակ չէ, որը գալիս է ու գնում, այլ էութեամբ իւրայատուկ ժամանակ է, երբ մարդ կարող է իր կեանքն իմաստաւորել, հասկանալ Աստուածային արարչութեան իմաստն ու Քրիստոսի փրկարար խորհուրդը: Ամէն մարդու համար իր կեանքը ընդգրկուած է այդ «ժամանակի» մէջ եւ այդ «ժամանակը» աւարտւում է մարդու համար այս կեանքից հեռանալուց յետոյ: Այդ «ժամանակի» իւրայատուկ լինելն իսկ բացառում է քաւարանի գոյութիւնը:

***Հարց.*** - Ինչո՞վ է հիմնաւորում քաւարանի գոյութիւնը Հռոմի եկեղեցին:

***Պատասխան.*** - Հռոմի եկեղեցին որպէս քաւարանի ապացոյց բերում է Ս. Գրքի մի քանի համարներ՝ Սաղմոս ՁԵ, 13, Մատթ. Ե, 26, Մատթ. ԺԲ 32 եւ այլն:

Սաղմոս ՁԵ, 13. - «Որովհետեւ մեծ է քո ողորմութիւնը ինձ վրայ եւ դու փրկեցիր իմ անձը ներքեւի դժոխքից»:



«Եթէ կայ ներքեւի դժոխք, ապա ուրեմն եւ կայ վերին դժոխք, որն էլ քաւարանն է», - եզրակացնում են կաթոլիկները: Ներքին եւ վերին դժոխքները, որ յիշում է Դաւիթը, չարչարանքների չափն են բնորոշում եւ տեղի իմաստ չունեն: Յայտնի է, որ Հին Կտակարանում բազում վկայութիւններ կան, ուր «դժոխք» բառն օգտագործուած է գերեզմանի իմաստով (Ծննդ., ԼԷ, 35, ԽԲ, 33, Գ Թագ., Բ, 9 եւ այլն) եւ ամենեւին ոչ «քաւարանի» իմաստով:

Տաթեւացու եւ ուրիշների մօտ հանդիպում ենք հետեւեալ եզրակացութեան.

- Համաձայն Ս. Գրքի, Յիսուսի երկրորդ գալուստի ժամանակը լինելու է հատուցման ժամանակը, մինչդեռ «քաւարանի» սկզբունքի համաձայն հատուցումը լինում է մինչ երկրորդ գալուստը եւ այն էլ ամէն օր:

- Քաւարանը մարդկանց մեղք գործելու ազատութեան է տանում, որը հակառակ է Յիսուսի Աւետարանին:

- Մեղքից ազատւում ենք խոստովանութեամբ եւ հաւատով մաքրւում Յիսուսի թափած արեան քաւչարար ներգործութեամբ, այլ ոչ թէ քաւարանի կրակով:

- Յիսուսի տուած իշխանութեան համաձայն, *«ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած կլինի երկնքում եւ ինչ որ երկրի վրայ արձակէք, երկնքում էլ արձակուած կլինի»,* մինչդեռ քաւարանի սկզբունքը բացառում է այդ իշխանութեան գործադրութիւնը:

Մատթ., Ե, 26 - *«Ճշմարիտ եմ ասում քեզ, դուրս չես գայ այդտեղից, մինչեւ որ չվճարես վերջին նաքարակիտը»:*

Այստեղից էլ եզրակացնում են, որ «բանտում» նաքարակիտ վճարելու հնարաւորութիւն կայ, որն էլ քաւարանի սկզբունքն է: Արդէն խօսել ենք Ս. Գրքում «մինչեւ» բառի գործածութեան մասին: Երբ Յիսուս ասում է աշակերտներին, թէ մինչեւ աշխարհի վերջը ձեզ հետ եմ, ամենեւին չի նշանակում, որ աշխարհի վերջից յետոյ Յիսուս մեզ հետ չէ: Այդպէս էլ այստեղ. «մինչեւ» բառը չի նշանակում, թէ «բան-

տում» վճարելուց յետոյ դուրս կգաս այնտեղից: Եթէ «Բանտը» դժոխքն է, ապա ուրեմն, անհնար է, որ այնտեղ մարդ ի վիճակի լինի վճարելու: Նամանաւանդ որ բանտում ոչ մէկը կարողութիւն չունի նաքարակիտ տալու (տե՛ս Մատթ., ԻԵ, 8-ր՝ Տասը կոյսերի առակը): Յետեւաբար այդ պատմութիւնից կարելի է եզրակացնել, որ մահուանից յետոյ, ընդհակառակը, մեղաւորների համար փրկութիւն այլեւս չկայ, եւ նրանց սպասում է դատաստանը, որից ազատուելու հնարաւորութիւն չկայ, քանի որ անկարելի է վճարել (Դ. Ճահկեցի, Դրախտ Ցանկալի):

Մատթ., ԺԲ, 32. - *«Բայց ով Սուրբ Յոգու դէմ հայհոյի, նրան չի ներուի ոչ այս աշխարհում, ոչ էլ՝ գալիքում»:*

Այստեղից էլ եզրակացնում են, որ գալիք աշխարհում (մահուանից յետոյ) ներուելու հնարաւորութիւն կայ:

Այս համարը Յիսուսի ասած ամենախիստ խօսքերից են. խօսքեր, որտեղ Յիսուս ներկայացնում է մեղքի ահաւորութեան չափը եւ ոչ թէ ներելու կարողութեան սահմանափակութիւնը: Ինչպէս վերեւում տեսանք («մինչեւ» բառը), միշտ չէ, որ ճիշտ սկզբունքը ժխտելով, ստանում ենք դարձեալ ճիշտ սկզբունք: Այսինքն՝ եթէ մեղքը չի ներուի ոչ հիմա եւ ոչ է գալիքում, ապա ամենեւին չի նշանակում, որ գալիքում կայ «ներուելու» հնարաւորութիւն: Իսկ որ գալիքում չի ներուի, դա ճիշտ է, քանի որ ներուելու միակ ժամանակը եւ տեղը այս աշխարհն է: Յետեւաբար, այս համարն էլ է ժխտում քաւարանի սկզբունքը: Այդ համարի մասին Ճահկեցու մօտ կարդում ենք.

«Գալիքում չկայ թողութիւն երկու պատճառով. նախ, որ այնտեղ չկայ մեղք գործել, հետեւաբար չկայ եւ մեղքի թողութիւն: Քանի որ այս կեանքն է մեր գործելու տեղը, իսկ այն կեանքը՝ դրա հատուցումը՝ բարին կամ չարը: Այս կեանքն է սերմանելու ժամանակը, այն կեանքը՝ հնձելու ու ժողովելու. այստեղ աշխատելն է, այնտեղ՝ հանգստանալը: Ինչպէս Ոսկեբերանն է ասում, հանդերձեալում չկայ թշնամութիւն, փորձութիւն եւ բարի խոստումների ակնկալութիւն, այլ՝ վայելումը այդ խոստումների:



Երկրորդ՝ ինչպէս մարմինը չի փոխւում, երբ հոգին ելնում է, ոչ բարու եւ ոչ էլ չարի, այնպէս էլ հոգին: Ըստ Սողոմոնի (Ժող. ԺԱ, 3), երբ փայտը (ծառը) որեւէ կողմի վրայ է ընկնում, մնում է նոյն տեղում: Եթէ հարաւ՝ ապա Աստծու սիրոյ եւ ջերմութեան տեղում է, իսկ եթէ հիւսիս՝ Աստծու ատելութեան, ցրտի ու խաւարի տեղում է»: Այսինքն՝ հարաւը դրախտն է, իսկ հիւսիսը՝ դժոխքը, եւ մի ուրիշ՝ երրորդ տեղ (քաւարան) չկայ:

Եւ այսպէս, Յայ Եկեղեցու դիրքորոշումը այս հարցի վերաբերեալ հետեւեալն է.

Ոչ մի քաւարանական կրակ չի կարող մեղաւորին քաւել մեղքերից, որովհետեւ մեռնելուց յետոյ այլեւս չկայ ապաշխարութեան տեղ, այլ միակ ապաշխարութեան տեղը այս կեանքն է եւ միակ քաւարանը՝ եկեղեցին:

Մեր բոլոր մեղքերի համար Քրիստոս յանձն առաւ իր գերահրաշ պատարագով քաւել եւ ճշմարիտ զղջացողը անպատճառ թողութիւն կստանայ այս աշխարհում՝ Քրիստոսի շնորհքով:

(Շարունակելի)



# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ս. Ներսէս Շնորհալու

«ՆՈՐԱՅՐԱՇ ՊՍԱԿԱՒՈՐ» շարականի մեկնութիւն

Քրիստոնէական ընկալմամբ ամէն մի պատերազմ ունի իր նախապատմութիւնը, այսինքն, հետեւանքն է «աներեւոյթ» մի պատերազմի, որ մղւում է չար ուժերի ու երկնային աներեւոյթ զօրութիւնների դէմ: Պօղոս առաքեալն այդպէս էլ գրում է. «Մեր պատերազմը մարմնի ու արիւնի դէմ չէ, այլ այս խաւարի իշխանների դէմ» (Եփես., Զ, 13): Ուստի երեւացող պատերազմից աւելի սոսկալի ու վտանգաւոր է չերեւացող պատերազմը: Այդ պայքարում մարդկային զէնքերը, աշխարհի զէնքերն ու միջոցները զօրութիւն չունեն, քանի որ պատերազմը հոգեւոր է, իսկ զէնքերը՝ մարմնաւոր: Պօղոս առաքեալն այդ զէնքերն անուանում է «լուսոյ զէնքեր», ի տարբերութիւն «խաւարի զէնքերի»: Ս. Գիրքը միակ գիրքն է, որը նկարագրում է այդ զէնքերն ու նրանցից օգտուելու կանոնները: Ըստ որում պէտք է նկատի ունենալ, որ

ա. հոգեւոր թշնամու դէմ պէտք է կռուել հոգեւոր զէնքերով, այսինքն՝ զինուել «Աստծու սպառազինութեամբ»:

բ. այդ պատերազմում չէզոք դիրք չկայ: Թշնամին յարձակւում է նաեւ «չէզոք» դիրքում գտնուողների վրայ:

գ. այդ պատերազմը երկարատեւ է, անժամկէտ, սկսուել է դարեր առաջ եւ շարունակւում է հիմա ու դեռ պիտի շարունակուի:

Ս. Գիրքը առանձնացնում է հետեւեալ հոգեւոր զէնքերը (Եսայի, ԾԹ, 17-19, Իմաստ., Ե, 17-24, Եփես., Զ, 13-17):

ա. Ճշմարտութեան գօտին: Գօտին զգաստ եւ արթուն է պահում զինուորին: Գօտու վրայ են ամրացւում զինուորական միւս զէնքերը: Երբ զինուորը գերի է ընկնում, թշնամին արձակել է տալիս գերու գօտին: Սա նշանակում է, որ առանց ճշմարտութեան մենք ուղղակի



գերի ենք առանց գերի ընկնելու: Այդ պատճառով էլ Մաշտոցը աստուածատուր տառերով գրեց «Ճանաչել զիմաստութիւն...» հայերէն առաջին նախադասութիւնը, որպէսզի գօտեւորուենք ճշմարտութեամբ ու ազատուենք ամէն տեսակի գերութիւնից (Յովհ., Ը, 32):

բ. Արդարութեան զրահը: Զրահը զինուորը կրում է մարմինը պաշտպանելու համար: Քրիստոսի արդարութիւնն է մեր զրահը, որը պաշտպանում է մեզ թէ՛ թշնամու հարուածներից, թէ՛ դժոխքի կրակից, թէ՛ աշխարհի պղծութիւնից:

գ. Խաղաղութեան աւետարանի պատրաստութիւնը, որն ամրացւում է ոտքերին: Քրիստոնէական ընկալմամբ յաղթանակը ոչ թէ թշնամուն սպանելն է, այլ նրան բարեկամ դարձնելը: Ուստի եւ քրիստոնեան պէտք է պատրաստ լինի Աւետարանի խաղաղութիւնը քարոզել բոլորին: Երբ զինուորի կօշիկները ծանրացել են աշխարհի ու մեղքի ճանապարհների հոգսերով, նա կորցնում է իր թեթեւութիւնը եւ պարտւում մարտի առաջին իսկ պահին: Երկնային խաղաղութիւնն իր սրտում պահող զինուորի հետ շատ դժուար կլինի պայքարել:

դ. Հաւատի վահանը: Հաւատն այն վահանն է, որը պիտի մարի թշնամու կրակոտ նետերը, անվնաս պահելով մարմինը: Հաւատն է այն վահանը, որ ժամանակի մէջ անվնաս է պահում մարմինը բոլոր յարձակումներից: Վահանը երբեք չպէտք է վայր դնել, այն պէտք է միշտ պարզել ի ցոյց բոլոր թշնամիների:

ե. Փրկութեան սաղաւարտը: Սաղաւարտը պահում-պահպանում է գլուխը, որպէսզի ամբողջ մարմինը, նրան ենթարկուելով, ներդաշնակօրէն կազմակերպի մարմնի գործունէութիւնը: Այդ սաղաւարտը փրկութիւնն է, որ Յիսուս պարգեւեց մեզ: Այդ սաղաւարտը Ինքը անձամբ Յիսուսն է, որ բոլոր քրիստոնեաներին միացնում ու մէկ է դարձնում, Ինքը լինելով Եկեղեցու Գլուխը:

զ. Հոգու սուրը: Աստծու խօսքը այն ազդեցիկ զէնքն է, որ ջախջախում է թշնամուն, օտար ամէն մի գաղափար, լոյս սփռելով խաւարում եւ բացելով մարդկանց ծածկուած շատ խորհուրդներ:

Պատերազմը վարելու այս սկզբունքներն էլ արտայայտուած են Ս. Վարդանանց նուիրուած շարականում: Այսինքն, Վարդանանց պատերազմը նախ հոգեւոր պատերազմ է չարի դէմ, հեթանոս տգիտութեան դէմ, դժոխքի մազղեզական հրի դէմ, որի կրակոտ նետերը մարուեցին Աւարայրում՝ Ս. Նահատակների թափած արեան շնորհիւ, եւ յետոյ՝ պատերազմ աշխարհի խաւարը սիրող թագաւորների դէմ: Շարականի ամէն մի տուն նուիրելով մի նախարարի, Շնորհալին ամփոփ ներկայացնում է այդ պատերազմում յաղթանակի հասած հերոսների հոգեւոր զէնքերը: Երբ «աներեւոյթ» պատերազմում յաղթում ենք, բնականաբար կյաղթենք նաեւ «տեսանելի» պատերազմում՝ անկախ ճակատամարտի ելքից:

## Առաջին տուն

Նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,
վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու.

Այս պատկերում Վարդանը ներկայանում է որպէս հաւաքական մի ամբողջութիւն, բովանդակելով իր մէջ բոլոր առաքինութիւնները: Պսակաւորը, այսինքն՝ թագաւորը, նորահրաշ զէնքերով դուրս է գալիս մահուան դէմ:

Վարդան՝ քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին,
վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի:

Պատերազմի վերջնական արդիւնքն է. ինքը՝ Վարդանը, քաջ նահատակ, թշնամին հալածուած, եկեղեցին պսակուած վարդագոյն արիւնով: Եկեղեցին, այսինքն՝ ժողովուրդը, շնորհիւ Վարդանի պսակուեց Յիսուսի հետ, ճշմարտութեան եւ կեանքին միացաւ, մերժելով խաւարը: Ի տարբերութիւն այս տան, միւս տների վերջին տողերում անհատներն են պսակւում: Ինչպէս որ Պօղոսի մօտ թուարկուած զէնքերի մարմնաւորում Ինքը Յիսուսն է, այստեղ էլ Վարդանն է «Հոգու զինու» մարմնաւորումը:

Փրկութեան սաղաւարտը, որպէս կանոն պաշտպանում է գլուխը եւ ընդունում առաջին հարուածը: Համաձայն Աստուածաշնչի յաղթանա-



կն ապահովւում է, եթէ գտնուի մէկը, որն իր վրայ վերցնի թշնամու գլխաւոր հարուածը: Այդպէս վարուեց Ինքը՝ Յիսուս, բանակից դուրս չարչարուելով եւ այդպիսով բանակը փրկեց՝ իր վրայ առնելով նրա նախատինքը (Եբր., ԺԳ, 12-13): Բանակն այստեղ ժողովուրդն է, Աստծու ժողովուրդը, Եկեղեցին: Այդպէս վարուեց նաեւ Վարդանը, իր վրայ վերցնելով բանակի (ժողովրդի) նախատինքը (յիշենք ուրանալու փաստը), եւ իր արիւնով եկեղեցին պսակեց:

## Երկրորդ տուն

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին.
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս.

Խորէնն այստեղ մարմնաւորում է իմաստութիւնը, ճշմարտութիւնը, այսինքն, հոգեւոր զէնքերից ճշմարտութեան գօտին: Ո՞րն էր այդ իմաստութիւնը: Իհարկէ այն, որ նա խոհեմացեալ ընտրեց երկնաւոր թագաւորի զէնքը, Աստծու խօսքը եւ

Խորէն՝ խորհրդական եւ ծանուցեալ անուն բարի.
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ:

Ծանուցեալ բարի անունը ակնարկն է այն առակի, ուր տէրը գովում է իր հաւատարիմ ծառային հնազանդութեան, իմաստութեան համար (Մատթ., ԻԵ, 24-30): Ամենամեծ իմաստութիւնը Աստծուն եւ Աւետարանին հնազանդուելն է, քանի որ *«իմաստութեան սկիզբը Աստծու վախն է» (Սաղմ., ճԺ, 10): Այն զինուորը, որ չունի այս իմաստութիւնը չի* կարող լաւ զինուոր լինել:

## Երրորդ տուն

Ռենական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ.
Թաթաւեալ ի կարմրութիւն բոսորային բղխեալ աղբերն.

Ելից Գ, 14-ում Աստուած Մովսէսին յայտնում է իր անունը. «Ես եմ ՈՐ ԷՆ»: Այստեղից էլ առաջացել է «Ռենական» բառը «աստուածային» իմաստով: Այդպիսի լոյսով լուսաւորուած զինուորներն են, որ պիտի

կազմեն փրկութեան բանակը, որոնց համար սարսափելի չեն թշնամու փղերն ու մատեան գնդերը: Երկրորդ տողում ակնարկուած է Եսայի ԿԳ, 1-ում նկարագրուած պատկերը:

Եսայի ԿԳ, 1 - *«Ո՞վ է սա, որ գալիս է Եդոմից, կարմրագոյն զգեստնե-րով Բոսրայից, որ փառաւոր հանդերձով զարդարուած է զօրութեամբ: Ես եմ, որ արդարութեամբ եմ խօսում եւ փրկելու կարողութիւն ունեմ»:*

Եկեղեցու հայրերը (Ս. Կիւրեղ, Յերոնիմոս եւ այլն) այստեղ տեսել են Մեսիայի կատարած փրկութիւնը, որով Նա յաղթանակած պիտի վե-րադառնայ ճակատամարտից, հռչակելով Տիեզերքում փրկութեան լուրը: Այն երկիրը, որտեղից գալիս էր Մեսիան Եդոմն ու Բոսորն էին: Եդոմն ու Բոսորը խորհրդանշել են հեթանոս աշխարհը, խաւարի մութ ուժերը, որոնք միշտ հակառակուել են Ճշմարտութեանը (Եսայի, ԼԴ, 6): Այստեղից էլ «բոսոր» բառը հայերէնում ստացել է «արնագոյն, մուգ կարմիր» իմաստը: Այսինքն՝ քաջ Արտակը բոսոր աղբիւրների կարմ-րութիւնով թաթախուած հռչակում է յաղթանակը ճակատամարտի՝ ընդդէմ Եդոմի ու Բոսորի, այսինքն՝ ընդդէմ խաւարի:

զփրկականն ըմպեալ զբաժակ եւ մկրտեալ արեամբն իւրով.

դասակցեալ ընդ անմարմնոցն՝ Երրորդութեան երգել զփառս:

Մի անգամ Զեբեդիոսի որդիների մայրը, Յիսուսին մօտենալով, խնդրեց իր որդիների համար Նրա աջ եւ ձախ կողմերը՝ Թագաւորու-թեան մէջ: Յիսուս հարցրեց նրան. *«Կարո՞ղ էք խմել այն բաժակը, որ ես պիտի խմեմ կամ մկրտուել այն մկրտութիւնով, որով ես պիտի մկրտուեմ»:* (Մատթ., Ի, 35-45): Թէեւ Յիսուսին պատասխանեցին, թէ կարող են, բայց չկարողացան: Փորձութեան պահին նրանք միւս աշա-կերտների նման փախան Յիսուսից: Շնորհալին, յիշեցնելով այդ պատկերը, ուզում է ասել, որ «արիացեալն քաջ Արտակը» փորձու-թեան պահին կարողացաւ ըմպել բաժակը եւ մկրտուեց իր արեամբ՝ դասակցուելով հրեշտակներին եւ փառաբանելով Երրորդութիւնը:

Այս օրինակը սովորեցնում է մեզ փորձութեան ծանր պահերին պատրաստ լինել ըմպելու բաժակը՝ անգամ անձնազոհութեան գնով:



Չորրորդ տուն

Սրբափայլ զգեստուք պճնեալք ի յերկնաւոր հանդիսադրէն.

Երրորդութեամբն զօրացեալ՝ վանեալ զամուրս բանսարկուին.

Ըստ Աւետիքեանի («Բացատրութիւն Շարականաց», Վենետիկ, 1814) «հանդիսադրէն» բառը որոշ ձեռագրերում ունի ներգոյական յոլով՝ «հանդիսադրին»: Բացառականի դէպքում նշանակում է՝ «սրբափայլ զգեստով պճնուած երկնաւոր հանդիսադրից», այսինքն՝ Յիսուսից, իսկ ներգոյականի դէպքում՝ «սրբափայլ զգեստով պճնուած երկնային ասպարէզում», այսինքն՝ նահատակութեան ասպարէզում:

Ո՞րն է այդ «սրբափայլ» զգեստը: Նախ, որպէս Յիսուսի հարս մեր արդարութեան զգեստը, որ Աստուած Ինքը շնորհեց մեզ, ինչպէս անա-ռակ որդու առակում եւ երկրորդ՝ ակնարկն է Յիսուսի այլակերպու-թեան տեսարանում նրա սրբափայլ զգեստի, որի փայլը կուրացրեց աշակերտներին: Այդ լեռան վրայ էր, երբ երեւացին Մովսէսն ու Եղիան եւ խօսեցին Յիսուսի չարչարանքների մասին:

Հմայեակ Հօր ընծայեալ՝ Որդւոյ գոլով չարչարակից.

հոգւովն յաղթեալ պատերազմին եւ չարասէր թագաւորին:

Ուստի եւ Հմայեակն էլ, Յիսուսին չարչարանակից լինելով, յաղթեց չարասէր թագաւորին: Ինչպէս առաջին երկու տողերում հակադրւում են Յիսուսն ու բանսարկուն, այնպէս էլ վերջին երկու տողերում հակա-դրւում են Հմայեակն ու չարասէր թագաւորը:

Հինգերորդ տուն

Էական բարւոյն դիտմամբ՝ ընդդէմ մեղացն վառեցաւ.

տարագնաց եւիւք յերկինս՝ պարակցեալ ընդ անմարմնոցն.

Տաճատ զարմանալի տաճար եղեալ Երրորդութեանն.

տէրունեան սուրբ խորհրդոյն տուն եւ տեղի արժանացեալ:

«Էական բարւոյն» դիտելով վառւում է մեղքի դէմ զարմանալի Տաճատը: Ինքը լինելով տաճար Երրորդութեան (Ա Կորնթ., Գ, 16), տէրունական խորհրդին մասնակցելով՝ իր տեղը գրաւեց Ընդհանրա-

կան եկեղեցում՝ դառնալով մէկ Յիսուսի հետ: Ճակատամարտից առաջ ողջ բանակը հաղորդութիւն ստացաւ, այդպիսով մէկ եղաւ Յիսուսի հետ, որպէս զարմանալի մի տաճար, ուր ամէն մի զինուոր իր տեղն ունի: Այդ միութեան եւ միակամութեան դէմ թշնամու ուժերը անզօր են:

### Վեցերորդ տուն

Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն զրահիւք ծածկեալ.
զփրկականն սաղաւարտ՝ ի գլուխ եդեալ զնշան խաչին.
Վահան վեհ երեւեալն, որ մանկութեամբ նահատակեալ.
խաչելոյն վկայ եղեալ՝ պսակեցաւ արեամբն իւրով:

Հաւատի վահանը, յոյսի զրահը եւ փրկական սաղաւարտը բովանդակւում են Խաչի նշանի ներքոյ, որպէս օրինակ ամէն մի զինուորի համար: Այսօր էլ Խաչի նշանից սարսափում են դիւական ուժերը, քանի որ Խաչով Յիսուս յաղթեց աշխարհին: Վահանի օրինակը մեզ սովորեցնում է ճիշտ եւ ժամանակին օգտագործել մեր հոգեւոր զէնքերը: Վահանը իր վահանով վեհ երեւաց, ոչ միայն իրեն պաշտպանեց, այլ նաեւ՝ միւս զինուորներին: Եղիշէն յիշում է Վահանին որպէս մանուկ նահատակ: Երրորդ տողը որոշ հրատարակութիւններում «որ մանկութեամբ»-ի փոխարէն ունի «նոր մանկութեամբ»: Այս տարբերակները զարմանալիօրէն լրացնում են իրար. «որ մանկութեամբ» նշանակում է մանուկ ժամանակ, իսկ «նոր մանկութեամբ»՝ քրիստոնէական վերածննդով ստացած մանկութեան ժամանակ:

### Եօթերորդ տուն

Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր՝
բանաւոր պատարագաւ ընծայելով հօր ի յերկինս.
Արսէնն ցանկալի, արդարութեամբն ճոխացեալ.
իմաստութեամբ պայծառացեալ յեօթնարփեան
շնորհաց հոգւոյն:

Այստեղ նկարագրուած է աստուածային ծառայութեան սկզբունքը



(Հռոմ., ԺԲ, 1-2): Միայն անձնազոհ նուիրումով կարող ենք ծառայել Աստծուն եւ միայն այդ ձեւով հասնել յաղթանակի: Որպէս կենդանի զոհ, մեր մարմինները ընծայելով երկնային Հօրը ամէն օր, ամէն ժամ, մենք կարող ենք հասնել արդարութեան, պայծառանալով Հոգու եօթնարփեան շնորհներով: Այդ շնորհներն են իմաստութիւնը, հանճարը, խրատը, զօրութիւնը, գիտութիւնը, աստուածապաշտութիւնը եւ երկիւղը (Տաթեւացի): Շարականի եօթերորդ տան մէջ Շնորհալին յիշում է եօթը շնորհները, որոնցով զարդարուած Արսէնը իր կենդանի աստուածապաշտութեամբ օրինակ է նուիրումի եւ անձնազոհութեան:

### Ութերորդ տուն

Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն նահատակօք.
յառաջեալ յամենեցունն՝ գլուխ եւ աւարտ մարտիրոսաց.
նախաշաւիղ գալով բարեաց՝ յառաջադէմն Գարեգին.
ընկալեալ զբրաբիոնն յաղթանակ նահատակացն:

Նրանք երկու եղբայր էին, որ արդէն վկայել էին չարասէր թագաւորին Քրիստոսի Աւետարանը եւ որի համար Աւարայրից առաջ ենթարկուել չարչարանքների ու կալանքի: Աւարայրում նրանք միացան Վարդանին, շարունակելով իրենց կենդանի վկայութիւն, արդէն պատերազմի դաշտում, արժանանալով յաղթական պսակի՝ բրաբիոնի: Եղիշէի ցուցակում Գարեգինը յիշւում է վերջում, բայց Պատմութեան մէջ նա է առաջինը վկայում Քրիստոսի Աւետարանը: Դրա համար էլ Եղիշէն նրան անուանում է յառաջադէմ. վկայելով սկսեցին իրենց կեանքը եւ վկայելով էլ նահատակուեցին:

### Իններորդ տուն

Ռամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,
որք ընդ նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ.
եւ հեղին զարիւնս իւրեանց՝ ի նորոգումն եկեղեցւոյ.
ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն:

Այս տան մէջ Շնորհալին լրացնում է Վարդանանց հերոսների ցուցակը, յիշելով բոլորին միասին: Ռամկական, այսինքն՝ միահամուռ, կուռ միաբանութեամբ եւ «Հոգու զէնքերով» զինուած մարտիկների համար սարսափելի չեն եւ ոչ մի բան: Նրանց պայքարի արդիւնքն է եկեղեցու նորոգումը եւ պսակուելը Յիսուսի հետ:

Տասներորդ տուն

Գոհութեամբ փառատրութիւն՝ երրորդութեանդ նուագեմք.
բազմութեամբ պսակելոցս զմեօք մածեալ առաքինեացս.
եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան՝
ունելով միշտ բարեխօս՝ զճգնութիւն մարտի սոցա:

Ինչպէս եւ միշտ, այստեղ էլ որպէս հետեւանք, կենաց յաղթանակի համար եկեղեցին մատուցում է գոհաբանական եւ բարեխօսական աղօթք Հայաստանեայց եկեղեցու պայծառացման եւ հայոց յարատեւման համար: Շատ զարմանալի ու խորհրդաւոր են Շարականի վերջին տան տողերը:

Առաջինում՝ Երրորդութեան փառաբանութիւնն է, երկրորդում՝ առաքինութիւններով պատած պսակաւորների բազմութիւնը, որոնք Ս. Նահատակներն են, այսինքն՝ Յաղթական Եկեղեցին, երրորդում՝ կենդանի եկեղեցին՝ Մարտնչող Եկեղեցին եւ չորրորդում՝ բոլորին իրար հետ կապող բարեխօսական աղօթքը: Առաջինում Երրորդութիւնն է, երկրորդում՝ Աստծու Թագաւորութիւնը, երրորդում՝ երկիրը եւ չորրորդում՝ աղօթքը: Ռազմի դաշտի աղմուկն ու դղրդիւնը, զէնքերի շչիւնն ու ձիերի դոփիւնը, կոչերն ու աղաղակները, որ կարծես լսւում էին շարականի ընթերցանութեան ժամանակ, տասներորդ տան մէջ փոխւում են օրհներգութեան եւ աղօթքի, որով եւ աւարտւում է այս կենդանի շարականը:

Համեմատելով Շարականում թուարկուած հերոսների անունները Եղիշէի ցուցակի հետ, կտեսնենք, որ բացակայում է Ներսեհ Քաջբերունու անունը: Նրան Եղիշէն անուանում է հրաշակերտ: Աւետիքեանը գրում է, որ Շնորհալին բաց է թողել Ներսեհին, չուզենալով շարականը երկարացնել եւ այդպիսով խախտել շարականի ծայրակապը (աքրոստիկոս): Բայց ինչո՞ւ է Շնորհալին ընտրել Ներսեհին եւ ոչ թէ ուրիշին: Այդ հարցի վերաբերեալ մի քանի խօսք.

ա. Եղիշէի ցուցակի եւ շարականի հերոսների անուններում չնշուած նախարարը խորհրդանշում է այն նահատակներին, որոնց անունները չի յիշում ո՛չ պատմիչը եւ ո՛չ էլ պատմութիւնը, մինչդեռ նրանց յիշում է Երկնային Հանդիսադրողը՝ Յիսուս: Միշտ էլ գտնուել են մարդիկ, որոնց անուան փոխարէն պատմութիւնը յիշում է նրանց գործը եւ սրանում է նրանց մեծութիւնը (Մատթ., Զ, 1-4):

բ. Եղիշէն յիշում է Ներսեհին, որպէս հրաշակերտ: Այսինքն՝ հրաշալի, հոյակապ, փառահեղ է այն անտեսանելի բանակը, որ յաղթեց եւ նրանք, որ կյաղթեն:

Այդպիսի հրաշալի կառոյց է նաեւ այս շարականը, ուր, ինչպէս տեսանք, ընդգրկուած են բոլորը, կազմելով Ռենական խումբ: Ուրեմն, անուղղակի ձեւով թէ՛ Ներսեհն է յիշւում շարականում (կարդանք աքրոստիկոսը, քանի որ Ներսեհի հայացուած ձեւը Ներսէսն է) եւ թէ՛ նրա գործը:

գ. Ամէն մի հայորդի ինքն է որոշում իր տեղը եւ դիրքը: Ուստի կենսական հարց է, թէ ո՞ր ցուցակում նրան կդնի պատմիչը կամ պատմութիւնը. Եղիշէի՞, թէ՞ չարասէր թագաւորի, Կենաց Գրքի՞, թէ՞ մահուան մատեանի, Վարդանի՞ հետ, թէ՞ Վասակի: Այդ հարցը այսօր մեր առաջ է դնում Շնորհալու այս գեղեցիկ շարականը:

# ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՏԵԱՆԻ Ա ԳԼԽԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Երբ մէկն ուզում է որեւէ բան ասել, իսկ լսողները զբաղուած են ուրիշ գործերով, պէտք է առաջին հերթին նրանց ուշադրութիւնը գրաւել, ու երբ ի վիճակի լինեն լսելու, ասել այն, ինչ ցանկանում ես: Այդպիսի միջոցներ շատ են տարածուած երաժշտութեան մէջ. որեւէ ստեղծագործութեան Նախերգանքն իր բարձր, վերից վար սլացիկ ընթացքով հրաւիրում է ունկնդիրներին, ստիպում նրանց իջնել իրենց բարձրութիւններից, մի կողմ դնել առօրեայ հոգսերը եւ կենտրոնանալ:

Այդպիսի մի Նախերգանք է Մատեանի Առաջին գլուխը: Այն ամէնը, ինչի մասին հետագայում մանրամասն գրելու է հեղինակը, ամփոփ ձեւով առկայ է Առաջին գլխում: Վերից վար՝ շանթահար սլացքով, Առաջին գլուխը ընթերցողին բարձրացնում է երկրի ճղճիմ հոգսերից եւ ուշադրութիւնը սեւեռում դէպի երկինք՝ Յաւիտենականը: Ինչպէս կտեսնենք, այստեղ Նարեկացին իմաստուն ձեւով կառուցում է այն անտեսանելի Տաճարը, ուր մտնելով՝ ընթերցողը կլանւում է Աստծու, Յաւիտենականի ներկայութեամբ եւ իր աղօթքներով միանում Ս. Գրիգորի աղօթքներին, նրա հետ միասին վերապրելով այն դժուարութիւնները, որ վիճակուած են մարդ արարածին: Այս է «կենդանի ընթերցումը», երբ մտովի տեղափոխւում ես Նարեկացու ժամանակները եւ, կարծես նրա աչքերով նայում աշխարհին, կեանքին, մարդկանց, երկնքին: Այսպիսի կենդանի տողերն անմահ են, բոլոր ժամանակների եւ բոլոր մարդկանց համար են: Այսօր, քսաներորդ դարի այս ծանր օրերին, մենք անչափ կարիք ունենք Նարեկացու հետ միասին խնկաբոյր աղօթքներով երկինք մտնելուն՝ մեր սրտի խորքերի խօսքն էլ միացնելով Մատեանի աստուածային խօսքերին...

Եւ այսպէս՝

1-2. Ձայն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց,



Գաղտնիքները տեսնողին՝ Աստծուն, վերընծայում է սրտից բխող հեծութեան եւ ողբի աղաղակը: Ինչպէ՞ս: Մի՞թէ կարելի է երկինք մտնել մեր տկարաշունչ աղօթքներով եւ «գաղտնեաց տեսնողին» ներկայանալ: Մի՞թէ մեղաւոր մարդն իր տկար ու անկարող կեանքով արժանի է այդպիսի մեծ ուշադրութեան: Ո՞վ է մարդը, որ յիշում ես նրան, ով Աստուած (Սաղմոս Ը, 4): Այս է Մատեանի բանալին՝ ամէն գլխում ու ամէն տեղ «վերընծայել» սրտի խորքից բխող աղաղակը Գաղտնիքներ Տեսնողին՝ մէկին, որ կարող է մեր սրտի խորքը տեսնել: Վերընծայումը կամ աղօթքը միշտ ունի մէկ ուղղութիւն՝ ներքեւից վերեւ, դէպի երկինք, դէպի Աստուած: Այստեղ հիմքն է դրւում այն անտեսանելի Տաճարի, որը սկիզբ է առնում մարդու սրտից եւ հասնում մինչեւ երկինք: Մատեանն ինքնին այդ Տաճարն է, որի քարերը եւ սիւները Նարեկացին սկսում է կառուցել 95 գլուխներում՝ հրաւիրելով ընթերցողին մասնակցելու այդ շինութեանը: Բայց ովքե՞ր կարող են մասնակցել այդ շինութեանը, կայ արդեօ՞ք երաշխիք, վստահութիւն, որ մեր աղօթքները կհասնեն երկինք: Աղօթքները լինում են երկու տեսակ: Մի դէպքում աղօթքն իրօք վերընծայւում է Աստծուն եւ հասնում երկինք եւ միւս դէպքում մնում երկրի վրայ, չհասնելով երկինք: Յիշենք փարիսեցու եւ մաքսաւորի աղօթքը (Ղուկաս ԺԸ, 9-14): Մէկն իր հպարտութեան եւ յանդգնութեան գահից չուզեց իջնել, եւ նրա աղօթքը այդպէս էլ մնաց անօգուտ, չհասաւ երկինք: Ի՞նչ էր ուզում փարիսեցին: Եթե յիշենք Աւետարանի այդ պատմութիւնը, ապա կտեսնենք, որ նա սկզբունքօրէն ոչինչ չէր ուզում. ո՛չ փառաբանում էր Աստծուն, ո՛չ էլ իր երախտիքը, շնորհակալութիւնը յայտնում: Ընդհակառակը, նա հպարտանում էր, որ ինքը շատ աւելի լաւն է, քան մնացած բոլոր մարդիկ: Իսկ մաքսաւորը իր սրտի ողբն ու աղաղակը վերընծայեց Աստծուն եւ արդարացած դուրս եկաւ Տաճարից: Այսինքն, կարեւոր է, թէ ինչ ձեւով ես մօտենում, ինչպէս ես վերընծայում սրտիդ աղաղակը՝ խոնարհութեամբ, հեզութեամբ, *«հոգիով աղքատ»* (Մատթ. Ե, 3), թե՝ հպարտութեամբ ու ինքնագոհ կերպով: Միայն առաջին ձեւով մօտեցողները կարող են մտնել Նարեկի անտեսանելի

Տաճարն ու միանալ նրա աղօթքներին, սրտի աղաղակը մատուցել Աստծուն ու արդարացած դուրս գալ: Երկրորդ ձեւով մօտեցողների համար Տաճարը փակ է, չի բացուի: Պէտք է իջնել անձի բարձր գահից, հպարտութեան բարձունքներից, սեփական անձնակենտրոն մղումներից: Այդպիսիների համար չէ Նարեկի խնկաբոյր աղօթքները...

Տաճարն (եկեղեցին) ունի մի քանի առանձնայատկութիւններ. նախ Աղօթքի տուն է, երկրորդ՝ Աստծու ներկայութեան վայր, երրորդ՝ ունի խորան, ուր հաղորդակցւում ենք Անտեսանելի Աստծու հետ, չորրորդ՝ ունի Գմբէթ, որը սլանում է երկինք, տանելով իր հետ մեր աղօթքներն ու սրտի հեծութեան աղաղակները, հինգերորդ՝ ունի զանգակատուն, որտեղից լսւում է զանգերի ձայնը, հրաւիրելով ժողովրդին եկեղեցի, վեցերորդ՝ դէպի երկինք գնացող գաղտնի ճամփայ ունի (Թէքէեան, եկեղեցին հայկական), եօթերորդ՝ այնտեղ հաղորդւում ենք անցեալի, ներկայի եւ ապագայի հետ, ութերորդ՝ այնտեղ լսում ենք Աստծու խօսքը, իններորդ՝ մասնակցում Ս. Պատարագին: Այդպիսի առանձնայատկութիւններով օժտուած մի եկեղեցի է նաեւ Մատեանը, ուր եւ մենք անարժանաբար համարձակւում ենք մուտք գործել: Նախ՝ աղօթքով լեցուն է, երկրորդ՝ վստահ ենք, որ Գաղտնիքներ Տեսնողը ներկայ է, երրորդ՝ խորանը երկինքն է, անտեսանելի ու անձեռագործ, չորրորդ՝ ունի անձեռագործ գմբէթ, որին միանում են բոլոր ձեռագործ գմբէթները, հինգերորդ՝ ունի զանգակատուն՝ մեր բոլորի «ձայնը հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի», վեցերորդ՝ գաղտնի ճամփան, որտեղով մեր ձայնը «վերընծայում» ենք երկինք, եօթերորդ՝ այստեղ մեր անցեալը, ներկան եւ ապագան միանում եւ դառնում են մէկ, ութերորդ՝ ամենուր Աստծու շունչն ենք լսում ու *«նրա ոտքերի ձայնը»* (Ծննդոց Դ 8), իններորդ՝ մասնակցում անտեսանելի պատարագին...

(Նալեանը գրում է (Գիրք մեկնութեան). «Ձայնն այդ սովորական չէր, այլ հառաչանքի ձայն էր, այսինքն ոչ թէ ձայնս եմ նուիրում քեզ, այլ՝ սրտիս հառաչանքի ձայնը, փոխանակ լացի ու ողբի՝ հոգուս հեծութիւնը, փոխանակ աղաղակի՝ սրտով եմ գոչում, որ առանց արտաբերելու



իմանաս իղձս սրտիս: Այսպէս Սամուէլի մայրն անմռունչ ձայնով Աստծուն աղօթեց, որը լսեց նրան... Օգոստինոսն ասում է. «Մինչ աղօթելը, աղաղակիր ոչ թէ ձայնով, այլ մտքով, քանի որ Աստուած լռութիւնն է լսում»: Լամբրոնացին գրում է. «Ոչ թէ լեզուով եմ կարդում քեզ եւ ձայնով բացականչում, այլ գիտեմ, որ մարմնական ձայնի աղաղակը առանց մտքի ընթացքի հաճելի չէ քեզ»):

3-5. Եւ մատուցեալ եղէալ ի հուր թախծութեան անձին տոչորման
Զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝
Բուրվառ կամացս առաքել առ Քեզ:

Այսինքն, անձս այրող թախծի կրակին դնելով սասանուած մտքի ճենճերող իղձերի պտուղը՝ կամքիս բուրվառով առաքում եմ քեզ: Դարձեալ մի բանալի է Աստծուն մօտենալու, կեանքի փոթորիկներից յաջողութեամբ դուրս գալու: Մարդու ներաշխարհը բնորոշում է թախծի կրակը, որն այրում է անձը, իսկ իմացական, բանական աշխարհը՝ «սասանուած մտքի իղձերի պտուղը» եւ այս երկուսը՝ այսինքն մարդկային ամբողջ էութիւնը, առաքւում է վեր՝ երկինք, Աստծուն: Երեք բանի մասին է գրուած այստեղ. տոչորուող (այրուող) անձը, սասանուած մտքի ճենճերող (այրուող, ծխացող) պտուղը եւ կամքը (այրուող բուրվառով): Ինչպէս տեսնում ենք, բոլորն էլ մատուցւում են այրուելով՝ բնորոշելով մատուցման ձեւը: Այլ ճանապարհ չկայ: Համաձայն Աստուածաշնչի, մարդը բաղկացած է երեք տարրից՝ հոգի, շունչ (անձ) եւ մարմին: Մարմինը՝ յարաբերուելու աշխարհի հետ, շունչը (անձը)՝ յարաբերուելու մարդկանց հետ եւ հոգին՝ յարաբերուելու Աստծու հետ: Մեր ամենօրեայ կեանքը, կենցաղը, գործելակերպը խիստ բնորոշ են այս կառուցուածքին: Նոյն կառուցուածքն ունի նաեւ եկեղեցին՝ խորան, ատեան եւ գաւիթ: Գաւիթում հաւաքւում են մարդիկ, որոնք պատրաստւում են մտնելու բուն եկեղեցի, ատեանը բուն եկեղեցին է եւ խորանը՝ Աստծու ներկայութեան վայրը: Նոյեան տապանն էլ ունէր նմանատիպ կառուցուածք, քանի որ նախատիպն էր Եկեղեցու՝ փրկու-

թեան վայրի, եւ բաղկացած էր երեք յարկից. առաջինում՝ սնունդը, երկրորդում՝ կենդանական աշխարհը, եւ երրորդում՝ մարդիկ: Տապանի լուսամուտը կողքից չէր, այլ վերեւից՝ միայն Աստծու հետ յարաբերուելու համար: Վերջին երկու օրինակներում խորհրդանշական է, որ թէ՛ եկեղեցում եւ թէ՛ տապանի դէպքում Աստծուն մօտենալու պահանջը միակն է՝ զոհը, բանական զոհը: Հետեւաբար առաջին դէպքում էլ անհրաժեշտ պէտք է լինի մարդկային ամբողջ էութիւնը՝ մարմինը, շունչը եւ հոգին, զոհի արեան միջով ընծայել Աստծուն, վերընծայել: Քրիստոսի քաւչարար զոհաբերութիւնը (պատարագը) բացեց Երկնքի դռները՝ սրտի խորքից բխող աղաղակը Աստծուն առաքելու:

(Նալեանը գրում է. «Այստեղ պատարագ է նուիրում Աստծուն՝ խորհրդաւորաբար, ուստի հրի փոխարէն սրտի թախիծն է դրւում, նուիրւում է իղձն ու սրտի փափագը, որ այրւում է սասանուելով եւ մտքի երկիւղով, իսկ բուրվառի տեղ կամքն է: Ձայնի փոխարէն՝ հառաչանքը, ողբի տեղ՝ հեծութիւնը, երգի տեղ՝ սրտի աղաղակը»:)

6-8

Այլ հոտոտեսցի՛ս, հայեսցի՛ս, գթած,
Քան ի պատարագն բոլորապտուղ,
Մատուցեալ ծխոյն բարդութեան:

Այսինքն՝ կը նայես, կը հոտոտես, ով Գթած, աւելի, քան պատարագը բոլորապտուղ, որ մատուցւում է ծխով բարդութեան կամ այս իմ պատարագը թող ընդունելի լինի աւելի, քան թանձր ծխով մատուցուած պատարագը, զոհը, որ մատուցում էին Հին Կտակարանում: Այստեղ բոլորապտուղ պատարագը ողջակէզն է, երբ զոհն այրւում է ամբողջութեամբ:

9-10

Ընկալ ըզսակաւամասնեայ յաւդուածս բանից՝
Քեզ ի հաճութիւն եւ մի՛ ի բարկութիւն:



Այսինքն՝ ընդունիր խօսքերն այս համառօտ ոչ թէ բարկութեամբ, այլ՝ հաճութեամբ: Յիշենք Աբէլի եւ Կայէնի զոհաբերութեան պատմութիւնը. Աբէլը հովիւ էր, Կայէնը՝ երկրագործ: Երկուսն էլ ընծաներ բերեցին Աստծուն, մէկը՝ երկրի պտուղներից, միւսը՝ իր ոչխարներից: Եւ Աստուած նայեց Աբէլի ընծային, իսկ Կայէնի ընծան մերժեց: Ինչո՞ւ: Որովհետեւ մօտեցման ձեւն էր սխալ: Կայէնը ճիշտ ճանապարհը չընտրեց: Թախծի կրակի վրայ դնելով մեր իմացական եւ բանական էութիւնը, տոչորուող անձը, մենք պէտք է ընծայենք մեր մարմինները Աստծուն, որպէս կենդանի զոհ, սուրբ եւ Աստծուն հաճելի, որը մեր բանաւոր պաշտօնն է (Հռոմ. ԺԲ, 1-2): Այստեղ պաշտօն նշանակում է միայն Աստծուն ծառայութիւն մատուցել, փառաբանել: Հնում «պաշտօն» բառն ուրիշ իմաստով երբեք չի գործածուել. այն նշանակել է ծառայել ոչ թէ մարդկանց, պետութիւնների, այլ՝ միայն եւ միայն Աստծուն: Երկրի պտուղներից բերած Կայէնի ընծան մերժելի էր, քանի որ երկիրն ամբողջովին անէծքի տակ էր, իսկ Կայէնի ընծան ընդունելի, քանի որ այդ էր պահանջում Օրէնքը: Հետեւաբար այդ տողերը կարող ենք հասկանալ այսպէս՝

Տէ՛ր, մեր այս համառօտ խօսքերը,
ընդունիր ինչպէս Աբէլի ընծան եւ ոչ թէ Կայէնի,
որպէս աղօթքն մաքսաւորի եւ ոչ թէ փարիսեցու:

11-15

Ելցէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝
Վաղվաղակի ժամանել առ քեզ՝
Կամաւորական նուէր բանական զոհիս,
Ողջակիզեալ զաւրութեամբ ճարպոյ,
Որ յիսն է պարարտութեան:

Այսինքն՝ զգայութիւնների խորհրդակիր սենեակի խորքերից թող ելնի, քեզ հասնի շուտով, բանական զոհի կամաւոր նուէրը՝ ողջակէզ եղած պարարտ ճարպի զօրութեամբ: Մեր սիրտն է զգայութիւնների

խորհրդակիր սենեակը, որտեղից ելած խօսքերը շուտով պիտի հասնեն Քեզ, որպէս բանական զոհի կամաւոր նուէր: Բանական այս զոհը կենդանի զոհն է, որը հաճելի է Աստծուն: Մեր կեանքը, որպէս կենդանի զոհ, Աստծուն ընծայելը ապրելու ամենազարմանալի ու հիասքանչ գաղտնիքն է: Եւ այդ զոհաբերութիւնը պէտք է լինի կամաւոր ու ոչ թէ ստիպողաբար:

Բայց՝

16-22

Եւ ի դնելս իմ ընդ քեզ դատ՝ խառնեալ աղերսիւ, հզաւր,
Մի՛ իբրեւ զհամբարձումն ձեռաց ամբարշտեալ Յակոբու, -
Ըստ բողոքելոյն Եսայեայ, -
Եւ զանիրաւութիւն Բաբելոնի
Տաղտկալի քեզ երեւեսցի,
Զոր առակ եւթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ,
Այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական՝ ի խորանին Սելովայ,

Այսինքն՝ երբ աղերսախառն դատի մտնեմ Քեզ հետ, Քեզ թող տաղտկալի չերեւայ, ինչպէս ամբարշտացած Յակոբի ձեռքերի վեր պարզելը եւ Բաբելոնի անիրաւութիւնը, կամ եօթանասուներկուերորդ սաղմոսի առակը, այլ ինչպէս Սելովի խորանի բուրաւէտ եւ հաճելի խունկը ընդունելի լինի Քեզ: Այս մի քանի տողում թաքնուած է այն բանալին, առանց որի չենք կարող մտնել այդ խորհրդաւոր աշխարհը: Նախ մի քանի խօսք Եսայու մարգարէութեան առաջին գլխի, Բաբելոնի անիրաւութեան եւ եօթանասուներկուերորդ սաղմոսի մասին, որոնց վկայակոչում է Նարեկացին:

Եսայի Ա 2. - Լսի՛ր, երկինք եւ ականջ դի՛ր, երկիր:

Այսպէս է սկսում Եսային իր մարգարէութիւնը: Նախ՝ ցոյց է տալիս Աստծու բարկութիւնը, քանի որ մարդկանց թողած, Աստուած խօսում է երկրի եւ երկնքի (անբանական տարրերքների) հետ: Երկրորդ՝ երկիրն ու երկինքը լսում են, բայց մարդիկ՝ ոչ, երրորդ՝ երկնային ու երկրային



մեծամեծ հրաշքներով Յակոբի ցեղը դուրս եկաւ Եգիպտոսից, բայց հիմա ամբարիշտ է դարձել, ուստի լսէ՛ք երկիր ու երկինք, չորրորդ՝ հրաշքով նրանց պահեց քառասուն տարի, իսկ նրանք թողեցին սքանչելագործ Աստծուն եւ անամօթաբար երկրպագեցին արեգակին ու լուսնին:

Եսայի Ա 15. - Ձեռքերդ երբ վեր բարձրացնէք, աչքերս կծածկեմ, աղօթքները չեմ լսի, որովհետեւ ձեռքերդ արիւնով լեցուն են: Լուացուէ՛ք, մաքրուեցէ՛ք, իմ աչքիս առջեւ չար գործերից հրաժարուէք:

Ահա թէ ինչու Աստուած չի լսելու նրանց աղօթքի ձայնը, ինչքան էլ ձեռքերը վեր բարձրացնեն: Բայց ետդարձի ճանապարհ կայ, ամէն բան դեռ կորած չէ:

Եսայի Ա 18. - Հիմա եկէք վիճաբանենք, - ասում է Տէրը: Եթէ ձեր մեղքերը կարմիր են՝ ձեան պէս կսպիտակեն:

Այսինքն՝ Աստուած հրաւիրում է վիճաբանելու՝ դատի մտնելու, եւ Ինքն է, որ պիտի լուանայ մեր մեղքերը:

Հետեւաբար մեր աղօթքները, կենդանի պատարագը, նուիրումը պէտք չէ նման լինեն այդ բողոքին ուր վկայ պիտի բերուեն երկինքն ու երկիրը՝ վկայելու ու պատմելու այն գործերը, որ Աստուած արել է մեզ համար, իսկ մենք այսօր ուրանում ենք այդ: Եւ երբ մենք մեր ձեռքերը պարզենք դէպի քեզ, նրանք թող լուացուած ու մաքրուած լինեն չար գործերից:

Բաբելոնի անիրաւութեան մասին:

Դանիէլի 13-րդ գլխում գրուած է. «Անօրէնութիւնը դուրս է ելել Բաբելոնից»: Մինչ այդ բաբելոնեան անօրէնութեան մասին կարդում ենք Ծննդոցում, ուր Նեբրովթի գլխաւորութեամբ որոշուեց աշտարակ կառուցել, որի գագաթը պիտի հասնէր մինչեւ երկինք: Աշտարակաշինութիւնը ըմբոստութիւն էր Աստծու դէմ, ըմբոստութիւն, որի հետեւանքով քանդուեց աշտարակը, ու լեզուները սփռուեցին աշխարհով մէկ:

Սաղմոս ՀԲ 6-9. Ուստի վզնոցի պէս ամբարտաւանութիւնն է նրանց

շրջապատում, բռնութիւնը՝ հանդերձի պէս ծածկում նրանց: Աչքերը պարարտութիւնից դուրս են գալիս, որովհետեւ սրտի խորհուրդներով քայլեցին նրանք: Ծաղրում են ու հպարտութեամբ խօսում, բերանները երկնքի դէմ են ու լեզուները աշխարհով մէկ են պտտում:

Անօրէնութիւնների մի ցուցակ է այստեղ ներկայացուած. ամբարտաւանութիւնը վզնոցի պէս շրջապատած, բռնութիւնը որպէս հագուստ, ծաղրելը, հպարտութեամբ խօսելը, բերանները դէպի երկինք բացելը: Վերջին նախադասութեան մէջ ակնարկւում է աշտարակաշինութիւնը եւ դրա հետեւանքները. երբ սկսում են երկնքի դէմ բացել բերանները, աշխարհով մէկ են սփռվում:

Այժմ կարող ենք ամփոփել.

Երբ դատի մտնենք, վիճաբանենք Քեզ հետ, Տէր, չնմանուենք Եսայու ողբում յիշատակածին, մեր վեր պարզած ձեռքերը չնմանուեն ամբարշտացած Յակոբի ժողովրդին, մեր ձեռքերի անօրէնութիւնը դու մաքրիր, սպիտակ ձիւնի նման դարձրու, որպէսզի պարզած ձեռքերը հասնեն Քեզ, ի տարբերութիւն բաբելոնեան աշտարակի, իմ աշտարակը թող հասնի երկինք, մեր ձայնը սաղմոսի թուարկած անօրէնութիւնների նման չսփռուի երկրի վրայ (այս է սաղմոսի առակը), այլ հասնի քեզ, երկինք: Մեր բերանի խօսքն ուղղում ենք Քեզ, մեր սրտի խորքերի հառաչանքներն ու հեծութիւնը թող հասնի քեզ, որպէսզի դու լսես, այլ ոչ թէ երկրի վրայ մնայ ու սփռուի, որից օգուտ չկայ, այլ լինի բուրաւէտ ու հաճոյական խունկ, ինչպէս Սելովի խորանում: Հետաքրքիր են նաեւ օգտագործուած ածականները. բուրաւէտ նշանակում է բուրմունքը տարածել, այսինքն՝ մեր աղօթքները թող տարածուեն, դուրս գան սրտի խորքերից, մինչ հաճոյական նշանակում է հաճելի լինել նրան, ում ուղղուած է աղօթքը: Առաջինում նկատւում է շարժումը դէպի դուրս, երկրորդում՝ դէպի ներս: Այսինքն՝ մեր աղօթքները, որ ելնում են մեր սրտից, անպայման կը հասնեն Քեզ, ընդունելի կլինեն Քո կողմից:

Այդ վստահությամբ էլ մօտենում ենք Քեզ, Տէ՛ր, ինչպէս Սելովի խորանի բուրաւէտ ու հաճոյական խունկը:



23-26

Զոր Դաւիթ կանգնեալ նորոգեց
Տապանակին հանգստեան, ի գերութենէն դարձելոյ,
Որ ի վերստին գիւտ կորուսեալս հոգւոյ առակի,
Ընդունելի՛ կամաց քոց լիցի:

Այսինքն՝ խորանը, որ Դաւիթը նորոգելով կանգնեցրեց, Տապանակի հանգրուանելու համար, ու գերութիւնից դառնալով, կարծես խորհրդանշեց կորուսեալ հոգու վերագտնումը: Սելովում Յեսու Նաւէի օրօք կանգնեցրին ժամանակաւոր խորան՝ Տապանակի համար, որպեսզի հետագայում, տաճար կառուցելով, Տապանակը տեղափոխեն այնտեղ: Սելովի խորանը երկար չմնաց, այն գերուեց թշնամիների կողմից ու միայն Դաւթի ժամանակներում կարողացան ետ վերադարձնել: Շատ խորհրդանշական է այս պատմութիւնը: Սելովի խորանը, Տապանակի գերութիւնը, նրա վերադարձը խորհրդանշում է մարդու կեանքը, մարդուն: Մարդը երկնային Սելովից (դրախտից) գերի տարուեց աշխարհ, ու երկար թափառումներից յետոյ երկնային Դաւիթը (Յիսուս Քրիստոս) նորից կանգնեցրեց Կենդանի խորանը, ուր եւ հանգրուանեց Տապանակը՝ Աստծու ներկայութիւնը: Քրիստոսի քաւչարար փրկագործութիւնից յետոյ միայն մարդկային կորուսեալ հոգին փրկուելու հնարաւորութիւն ստացաւ, ուր եւ հանգրուանեց երկնային Տապանակը՝ Ս. Երրորդութիւնը

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք ........................................................................................ 4
Ծիսական արարողութիւններ, Հայ Եկեղեցում
օգտագործուող գրականութիւն,
Հայ Եկեղեցու տօներ ...................................................................... 5
Աստուածաբանութիւն, Հայ Եկեղեցու
դաւանանքը, Ջատագովութիւն ..................................................... 37
Ծիսական եւ Դաւանական տարբերութիւններ
Հայ Եկեղեցու եւ այլ եկեղեցիների միջեւ ...................................... 84
Յաւելուած
Շնորհալու «Նորահրաշ Պսակաւոր»
շարականի մեկնութիւն .................................................................. 94
Նարեկացու Մատեանի Ա գլխի
մեկնութիւն ..................................................................................... 104



# ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես.
Սո՛ւրբ եղիցի անուն քո:
Եկեսցէ արքայութիւն քո.
Եղիցին կամք քո
Որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ
Տո՛ւր մեզ այսօր:
Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
Որպէս եւ մեք թողումք
Մերոց պարտապանաց:
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն.
Այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:
Զի քո է արքայութիւն
Եւ զօրութիւն
Եւ փառք յաւիտեանս.
Ամէն